



## Հիմնադիր և հրատարակիչ՝

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## № 113 2019

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Դավիթ Մելքոնյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (խորհրդի նախագահ)

**Աշոտ Եսայան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

**Գևորգ Բաղդասարյան** Երևան քաղաքի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

**Արմեն Մարուխյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

**Գևորգ Դանիելյան** ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Հովհաննես Սրեփանյան** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Գառնիկ Սաֆարյան** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Արման Թաթոյան** Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

**Ռուբեն Մելիքյան** իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

### Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.  
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5  
Հեռախոս՝ 511-640  
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,  
orinakanutyun@prosecutor.am  
www.prosecutor.am  
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,  
ոճը, տառաձևերը և էջադրումը՝  
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 03.09.2019թ.  
Ֆորմատ՝ 60x84 1/8  
Տպաքանակը՝ 500  
Ծավալը՝ 3,75 պայմ. մամուլ  
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»  
հրատարակչության տպարանում  
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2019թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դավիթ Մելքոնյանն ընդունել է ՄԱԶԾ առաքելության պատվիրակությանը ..... 3

## ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Սուրեն Քրմոյան, Շուշանիկ Ղուկասյան** Տեղեկատվական անվտանգության և կիրառական տեղեկատվության որոշ հարցերի շուրջ ..... 5

**Արայիկ Ասլանյան** Յուրաքննելու կամ վատնելու եղանակով կատարվող հափշտակությունների քրեաիրավական որակման որոշ առանձնահատկություններ ..... 10

**Հայկ Մկրտչյան** Անձի անվտանգության պաշտպանության միջոցների կատարելագործման հիմնախնդիրը արդի քրեական իրավունքի զարգացման տեսանկյունից ..... 17

**Սոնա Մարգարյան** Սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալու կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու հանցակազմի խրախուսական նորմի կիրառելիության որոշ հիմնախնդիրներ ..... 21

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Ռուբինա Պետրոսյան** Առանց ծնողական խնամքի մնացած երեխայի՝ սեփական կարծիքն արտահայտելու իրավունքի որոշ հարցեր ..... 27

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Աննա Հակոբյան** Արբիտրաժային համաձայնությունը՝ որպես վեճի լուծման այլընտրանքային կարգ, ինքնավարության հիմնահարցի վերլուծություն ..... 35

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Հայկ Կեսոյան** Որոշ նկատառումներ խորհրդարանական հանրապետություններում կառավարության սահմանադրական կարգավիճակի վերաբերյալ (համեմատական վերլուծություն) ..... 40

**Նունե Զոմարոյան** Սոցիալական պետության տեսության և պրակտիկայի էվոլյուցիոն (բնաշրջական) զարգացումը ..... 44

## ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts ..... 52

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները ..... 60

# ՀՀ ՉԿՍԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ՏԵՂԱԿԱԼ ԴԱՎԻԹ ՄԵԼՔՈՆՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՄԱԾԾ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԴԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դավիթ Մելքոնյանը ՄԱԶԾ առաքելության պատվիրակության հետ քննարկել է Հայաստանում դատաիրավական համակարգի բարեփոխումներին աջակցությանն առնչվող հարցեր

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դավիթ Մելքոնյանն այսօր ընդունել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի տեխնիկական շրջանակային առաքելության պատվիրակությանը:



Ողջունելով փորձագետների խմբին՝ Դավիթ Մելքոնյանը նշել է, որ ՀՀ դատախազությունը ՄԱԿ-ի տարբեր կառույցների հետ գործակցության մեծ փորձ ունի, որը վերջին շրջանում ավելի ինտենսիվ բնույթ է ստացել՝ համատեղ տարբեր ծրագրերի իրականացմամբ: Նա կարևորել է Հայաստանի դատաիրավական ոլորտի բարեփոխումների կարիքների, կարճաժամկետ և երկարաժամկետ խնդիրների, բաղադրիչների գնահատման ՄԱԶԾ առաքելությունը հատկապես ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումներին ցուցաբերվող աջակցությունն առավել թիրախային և նպատակային դարձնելու տեսանկյունից:

Պատվիրակության անդամներն իրենց հերթին կարևորել են Հայաստանում արդարադատության համակարգի ուժեղացմանը, թափանցիկությանն ու հաշվետվողականության մեխանիզմների ներդրմանն ուղղված բարեփոխումների մեկնարկը՝ նշելով, որ իրենց նպատակն է հստակեցնել այդ գործընթացին ՄԱԶԾ հնարավոր աջակցության ոչ միայն հիմնական ուղ-

ղությունները, այլ նաև միջոցներն ու ծավալները:

Հանդիպման ընթացքում քննարկվել է կոռուպցիայի դեմ պայքարի համակարգային նոր մեխանիզմների ներդրմանը, միասնական հակակոռուպցիոն մարմնի մոդելի պայմաններում կոռուպցիոն քրեական գործերով քրեական արդարադատության իրականացման ու դատախազական վերահսկողության արդյունավետությանը, կոռուպցիայի դեմ պայքարում քննիչների, դատախազների, դատավորների մասնագիտական կարողությունների զարգացման մեթոդներին, դատավորների և դատախազների բարեվարքության չափորոշիչներին, կարգապահական վարույթներին վերաբերող հարցերի լայն շրջանակ:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դավիթ Մելքոնյանը մանրամասն ներկայացրել է պետական կառավարման համակարգի կառուցվածքում ՀՀ դատախազության դերը, ինչպես նաև դատախազների անկախության սահմանադրաիրավական երաշխիքներն ու հիմնական գործառնությունները: Անդրադարձ է կատարվել ներկայում հանցավորության դեմ պայքարում ՀՀ դատախազության հիմնական առաջնահերթություններին ու մարտահրավերներին, որոնց շրջանակում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն առանձնացրել է հատկապես կի-



բերհանցագործությունների դեմ ներպետական և անդրազգային մակարդակներում պայքարն ուժեղացնելու, ինչպես նաև կոռուպցիայի դեմ

քրեաիրավական պայքարի արդյունավետությունը խոչընդոտող օրենսդրական բացերի կարգավորման խնդիրները:



Դավիթ Մելքոնյանը վերջինիս առնչությամբ, մասնավորապես, նշել է, որ հիմնական

խնդիրը կոռուպցիոն սխեմաներով գողացված, ապօրինի ձեռք բերված գույքի վերադարձման, բռնագանձման իրավական կառուցակարգերի ներդրումն է՝ նկատի ունենալով, որ այդ տեսանկյունից ՀՀ օրենսդրությունը զգալիորեն հետ է կոռուպցիայի դեմ պայքարի հաջող փորձ ունեցող երկրների համեմատ: Ըստ Դավիթ Մելքոնյանի՝ արվում է ամեն ինչ, այդ թվում նաև գործընկեր միջազգային կառույցների հետ համագործակցությամբ, նշված նպատակներով նախաձեռնված օրենսդրական փոփոխությունները մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության եվրոպական չափորոշիչներին և Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխանությունն ապահովելու ուղղությամբ:

Շահագրգիռ և տևական քննարկման ընթացքում արծարծվել են նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:



**ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱԼ**

ՀՀ փոխվարչապետի խորհրդական,  
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՇՈՒՇԱՆԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ**

ՀՀ Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և  
քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության  
պետի տեղակալ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻՔԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՇԱՐՅԵՐԻ ՇՈՒՐԳ

Տեղեկատվական անվտանգության ապահովումը յուրաքանչյուր պետության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից է, որը պայմանավորված է ոչ միայն տեղեկատվական տեխնոլոգիաների աննախադեպ զարգացմամբ, այլև տեղեկատվական անվտանգության սպառնալիքների, մարտահրավերների բազմազանությամբ, դրանց համարժեք արձագանքելու, առկա ռիսկերը նվազեցնելու և չեզոքացնելու անհրաժեշտությամբ:

Պետության ներքին և արտաքին տեղեկատվական քաղաքականությունն ազգային անվտանգության ապահովման կարևոր գործիքներից է, որն իր արդյունավետությամբ և ազգային անվտանգության վրա ազդեցությամբ կարող է համեմատվել անվտանգության ավանդական, այդ թվում՝ քաղաքական, ռազմական և տնտեսական, քաղաքականությունների հետ<sup>1</sup>:

Թերևս՝ այս խնդիրների կարևորությամբ էր պայմանավորված 26.06.2009 թվականին ՀՀ Նախագահի ՆԿ-97-Ն կարգադրությամբ<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգի հաստատումը<sup>3</sup>, որով սահմանվեցին տեղեկատվական անվտանգության ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային շահերը, դրա բաղադրիչները, տեղեկատվական անվտանգության սպառնալիքների տեսակները, այդ սպառնալիքների աղբյուրները, տեղեկատվական անվտանգության առկա իրավիճակը, տեղեկատվական անվտան-

գության ապահովման մեխանիզմները, այդ թվում՝ առանձնահատկությունները հանրային կենսագործունեության տարբեր ոլորտներում, տեղեկատվական անվտանգության ապահովման պետական քաղաքականության հիմնական դրույթները, իրականացման առաջնահերթ միջոցառումները, տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգի կազմակերպական հիմքերը:

Այս տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում հետևյալ երկու հիմնական հարցադրումների պարզաբանումը.

1. Ինչ հիմնական պահանջներ են առաջադրվում տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերը կարգավորող ռազմավարություններին.
2. Ինչպես են հարաբերակցվում «կիբեռանվտանգություն» և «տեղեկատվական անվտանգություն» եզրույթները:

Տարածաշրջանային մակարդակում տեղեկատվական անվտանգության վիճակը, այս ոլորտի զարգացման ուղղությունները վեր հանելը կարևոր նշանակություն ունի Հայաստանի Հանրապետությունում համապատասխան քաղաքականություն մշակելու և իրականացնելու տեսանկյունից:

Մասնավորապես՝ հարկ է նշել, որ տեղեկատվական անվտանգության ապահովման խնդիրը մշտապես գտնվել է նաև Եվրոպական Միության ուշադրության կենտրոնում: Այս հանգամանքով է պայմանավորված Եվրոպական Միության կողմից 2016 թվականի հուլիսի 6-ին

<sup>1</sup> Տես Հ.Ս. Քոթանջյան, Ա.Վ. Աթանեսյան., «Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների ու գերակայությունների վերլուծությունը ՀՀ ազգային անվտանգության համատեքստում», Հայկական բանակ, 2016. N 1 (87), էջ 9, հասանելի է՝ <http://ysu.am/files/haykakan-banak.pdf> հղումով, 08.08.2019թ. դրությամբ:

<sup>2</sup> Ընդունվել է 26.06.2009 թ., ուժի մեջ է մտել 25.07.2009թ., ուժը կորցրել է 11.11.2017թ., ՀՀՊՏ 2009.07.15/35(701):

<sup>3</sup> Նշված հայեցակարգի ուժը կորցնելուց հետո ՀՀ Նախագահի 2017 թվականի հոկտեմբերի 23-ի ՆԿ-146-Ա կարգադրությամբ հաստատվեց «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության ապահովման և տեղեկատվական քաղաքականության հայեցակարգը»:

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 113 2019

«Միության տարածքում տեղեկատվական համակարգերի և համացանցի անվտանգության միասնական բարձր մակարդակ ապահովելու վերաբերյալ» N 194/1 Դիրեկտիվի (այսուհետ՝ Դիրեկտիվ) ընդունումը<sup>4</sup>: Դիրեկտիվի ընդունումը պայմանավորված է եղել Եվրոպական Միության տարածքում տեղեկատվական համակարգերի և համացանցի անվտանգության ապահովման հրամայականով՝ հաշվի առնելով, որ դրանք կենսական նշանակություն ունեն հասարակության համար, և հիմք ընդունելով այն, որ անդամ-պետությունների առկա հնարավորությունները բավարար չեն Եվրոպական Միության տարածքում անվտանգության բարձր մակարդակ ապահովելու համար:

Դիրեկտիվի 4-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ տեղեկատվական համակարգերի և համացանցի անվտանգությունը **դրանց ունակությունն է դիմակայելու ցանկացած գործողությանը, որը վտանգի տակ է դնում պահպանվող, փոխանցվող կամ մշակված տեղեկության հասանելիությունը, ամբողջականությունը և զաղտնիությունը, ինչպես նաև այն ծառայությունները, որոնք հասանելի են տեղեկատվական տեխնոլոգիաների և համացանցի միջոցով:**

Դիրեկտիվում կարևոր նշանակություն է տրվում տեղեկատվական համակարգերի և համացանցի անվտանգության ապահովմանն ուղղված ազգային ռազմավարությունների ընդունմանը, որի վառ արտահայտությունն է Դիրեկտիվի 7-րդ հոդվածով համանման ռազմավարություններին ներկայացվող պահանջների սահմանումը և դրանց բովանդակությանն առաջադրվող ուղենիշների մատնանշումը:

Այսպես. Դիրեկտիվում ուրվագծվում են այն հիմնական հարցերը, որոնց պետք է անդրադարձ կատարվի անդամ պետությունների կողմից ընդունվող տեղեկատվական համակարգերի անվտանգության ապահովմանն ուղղված ազգային ռազմավարության շրջանակում: Մասնավորապես՝

- 1) ազգային ռազմավարության նպատակները և առաջնահերթությունները,

- 2) ազգային ռազմավարության նպատակների և առաջնահերթությունների ապահովման համար անհրաժեշտ կառավարման համակարգի կառուցվածքը՝ ներառելով նաև համապատասխան պետական մարմինների և այլ իրավասու անձանց պատասխանատվության և դերի վերաբերյալ կարգավորումներ,

- 3) պատրաստվածությանը, արձագանքմանը և վերականգնմանը վերաբերելի միջոցառումները, այդ թվում՝ մասնավոր և պետական հատվածի համագործակցության հարցերը,

- 4) ազգային ռազմավարությանն առնչվող իրազեկման բարձրացմանն ուղղված, ինչպես նաև կրթական և վերապատրաստման ծրագրերը,

- 5) ազգային ռազմավարությանը վերաբերելի զարգացման և ուսումնասիրման պլանները,

- 6) ռիսկերի բացահայտմանն ուղղված գնահատման պլանները,

- 7) այն սուբյեկտների ցանկը, որոնք ներգրավված են ազգային ռազմավարության կիրարկման գործընթացում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ԵՄ դիրեկտիվներն առավելապես սահմանում են այն նպատակները, որոնք պետությունները պետք է նվաճեն, և պետություններն են որոշում, թե ինչ իրավական ակտ է անհրաժեշտ մշակել, և ըստ այդմ՝ ինչ իրավական կարգավորումներ նախատեսել այդ նպատակների իրացման համար: Այնուամենայնիվ, այլ պետությունները ևս որպես առաջադեմ օրինակ կարող են դրանք հաշվի առնել տեղեկատվական անվտանգության ոլորտի ռազմավարություն մշակելիս:

Ուշադրության է արժանի այն, որ ՀՀ Նախագահի 2017 թվականի հոկտեմբերի 23-ի ՆԿ-146-Ա կարգադրությամբ պահանջ էր առաջադրված մշակել նաև Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության ապահովման և տեղեկատվական քաղաքականության ռազմավարություն ու ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիր, որը

<sup>4</sup> Տե՛ս Directive (EU) 2016/1148 of the European Parliament and of the Council of 6 July 2016 concerning measures for a high common level of security of network and information systems across the Union, OJ L 194, 19.7.2016, p. 1-30, հասանելի է՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX%3A32016L1148> հղումով՝ 08.08.2019թ. դրությամբ:



մինչ օրս չի ընդունվել: Համարում ենք, որ ապագա ընդունվելիք տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերը կարգավորող ռազմավարությունում, ի թիվս վերը նշված Դիրեկտիվով առաջադրված պահանջների, անհրաժեշտ է մանրամասն անդրադառնալ նաև՝

1. այն խնդիրների վերլուծությանը, որոնք ներկայումս առկա են տեղեկատվական անվտանգության ոլորտում, և պահանջում են առաջնահերթ լուծում՝ ըստ այդմ առանձնացնելով ռազմավարության հետապնդած խնդիրները և նպատակները,
2. պետություն-մասնավոր հատված համագործակցության հիմնական ուղղություններին և մեխանիզմներին, պետություն – մասնավոր հատված համագործակցության ենթակառուցվածքների ձևավորմանը և զարգացմանը,
3. տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում ներգրավված սուբյեկտների իրավասության և պատասխանատվության բաշխմանը, տեղեկատվական անվտանգության քաղաքականության ընդհանուր համակարգմանը՝ ըստ այդմ վերլուծելով նաև, թե ոլորտի շահագրգիռ մարմիններն ինչ հիմնական գործառույթներ են իրականացնում տեղեկատվական անվտանգության ոլորտում, արդյոք առկա է դրանց հստակ տարանջատման անհրաժեշտություն, կամ արդյոք գործառույթներ, որոնք վերապահված չեն այս կամ մարմինին, բայց դրանց գործնական իրացումը կարևոր նշանակություն ունի տեղեկատվական անվտանգության ապահովման տեսանկյունից:

Այժմ անդրադառնանք «կիբեռանվտանգություն» և «տեղեկատվական անվտանգություն» եզրույթների հարաբերակցությանը: Այս եզրույթների հստակ սահմանումն ու ազգային մակարդակում ամրագրումը կարևոր նշանակություն ունեն այս ոլորտում համապատաս-

խան քաղաքականության և օրենսդրության մշակման համար: Գրականության մեջ «կիբեռանվտանգություն» եզրույթը հաճախ օգտագործվում է «տեղեկատվական անվտանգություն» եզրույթի հետ համատեղ սերտ փոխհարաբերությամբ՝ չնայած դրանց միջև առկա որոշակի տարբերություններին:

Այսպես՝ «կիբեռանվտանգություն» հասկացության կապակցությամբ գրականության մեջ տրվել են տարբեր բնորոշումներ: Ստորև ներկայացվում են «կիբեռանվտանգություն» եզրույթի կապակցությամբ տրված որոշ բնորոշումներ.

1. Կիբեռանվտանգությունն այնպիսի միջոցների ձեռնարկումն է, որոնք նպատակ են հետապնդում պաշտպանել համակարգչային համակարգը չարտոնված մուտքի կամ հարձակման դեպքում<sup>5</sup>:
2. Միջազգային հեռահաղորդակցության միության կողմից տրված բնորոշման համաձայն՝ կիբեռանվտանգությունը համախումբ է գործիքների, քաղաքականությունների, անվտանգության հայեցակարգերի, երաշխիքների, ուղեցույցների, ռիսկերի կառավարման մոտեցումների, գործողությունների, վերապատրաստումների, համակարգերի և տեխնոլոգիաների, որոնք կարող են օգտագործվել կիբեռմիջավայրը, կազմակերպությունների և օգտվողների ակտիվները պաշտպանելու համար<sup>6</sup>:
3. Կիբեռանվտանգությունը համակարգչային ցանցերի և տեղեկատվական անվտանգության պաշտպանությունն է ներթափանցումից, դիտավորյալ վնասումից և ոչնչացումից<sup>7</sup>:
4. Կիբեռանվտանգությունը ռեսուրսների, գործընթացների և այն կառուցվածքների կազմակերպումն ու հավաքագրումն է, որոնք օգտագործվում են կիբեռտարածքը և կիբեռտարածքում գտնվող համակարգերը պաշտպանելու համար<sup>8</sup>:

<sup>5</sup> Sten Von Solms, Rossouw, and Johan Van Niekerk, „From information security to cyber security”, Computers & security 38, 2013, էջ 9, հասանելի է՝ [http://www.profsandhu.com/cs5323\\_s18/Solms-Niekerk-2013.pdf](http://www.profsandhu.com/cs5323_s18/Solms-Niekerk-2013.pdf) հղումով՝ 08.09.2019թ. դրությամբ:

<sup>6</sup> Տես նույն տեղում:

<sup>7</sup> Sten Craigen, D., N. Diakun-Thibault, and R. Purse, „Defining cybersecurity”, Technology Innovation Management Review, N 4 (10), 2014, հասանելի է՝ <https://timreview.ca/article/835> հղումով՝ 08.09.2019թ. դրությամբ:

<sup>8</sup> Sten Craigen, D., N. Diakun-Thibault, and R. Purse, նույն աշխատությունը, հասանելի է՝ <https://timreview.ca/article/835> հղումով՝ 08.09.2019թ. դրությամբ:

Միաժամանակ՝ առանձին երկրներում նախատեսված են «կիրեռանվտանգություն» եզրույթի հետևյալ բնորոշումները:

Ավստրալիայում կիրեռանվտանգությունը բնորոշվում է որպես էլեկտրոնային կամ համանման միջոցներով մշակվող, պահպանվող և փոխանցվող տեղեկության գաղտնիությանը, հասանելիությանն ու ամբողջականությանը վերաբերող միջոցների համակցություն: Գերմանիայի օրենսդրությամբ կիրեռանվտանգությունը տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության իրավիճակի ցանկալի նպատակն է, որի շրջանակներում կիրեռտարածության ռիսկերը կրճատվում են մինչև ընդունելի մինիմումը: Կանադայի օրենսդրությամբ կիրեռանվտանգությունը սահմանվում է որպես կիրեռհարձակումների դիմագրավման կամ դրանց մեղմացման պատշաճ մակարդակ: Ֆրանսիայի օրենսդրության համաձայն՝ կիրեռանվտանգությունը տեղեկատվական համակարգ է, որը հնարավորություն է տալիս դիմագրավելու կիրեռտարածությունը վտանգող դեպքերին, և որը կարող է ապահովել մշակված, պահպանվող և փոխանցվող տվյալների և հարակից համակարգերի ամբողջականությունն ու գաղտնիությունը<sup>9</sup>:

2002 թվականին ԱՄՆ-ում ընդունված «Տեղեկատվական անվտանգության կառավարման մասին» օրենքում դա սահմանվում է որպես անթույլատրելի մուտքից, օգտագործումից, բացահայտումից, տարածումից, ձևափոխումից կամ ոչնչացումից տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի պաշտպանություն, ոչ իրավական փոփոխությունից կամ ոչնչացումից տեղեկատվության ամբողջականության ապահովում, գաղտնիության ապահովում<sup>10</sup>:

Ուշագրավ է, որ կիրեռանվտանգության իրավական բնորոշումը տրվել է 2011 թվականին Արևմուտք-Արևելք ինստիտուտի շրջանակ-

ներում ձևավորված ռուս-ամերիկյան համատեղ աշխատանքային խմբի կողմից: Մասնավորապես, նշված բնորոշմամբ՝ կիրեռանվտանգությունը կիրեռտարածության հատկանիշ է, որը հնարավորություն է տալիս դիմագրավելու, պատասխանելու և վերացնելու միտումնավոր և ոչ միտումնավոր սպառնալիքները<sup>11</sup>:

Նշված սահմանումների վերլուծության շնորհիվ կարող ենք եզրակացնել, որ կիրեռանվտանգության իրավական բնորոշումը հիմնականում տրվում է ցանցային տիրույթի և առավելապես կիրեռտարածության պաշտպանության գաղափարի համատեքստում՝ ընդգծելով նաև այդ տիրույթից օգտվողների պաշտպանության անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է տեղեկատվական անվտանգություն եզրույթին՝ հարկ է նշել, որ, ISO/IEC 27002 (2005) միջազգային ստանդարտի համաձայն՝ տեղեկատվական անվտանգությունը գաղտնիության, ամբողջականության և տեղեկատվության հասանելիության պահպանումն է:

Այսինքն՝ միջազգայնորեն ընդունված ստանդարտներով որպես տեղեկատվական անվտանգության գլխավոր հատկանիշներ առանձնացվում են՝

1. գաղտնիությունը,
2. ամբողջականությունը,
3. տեղեկատվության հասանելիությունը:

Վիտմանի և Մաթորդի բնորոշման համաձայն՝ տեղեկատվական անվտանգությունը տեղեկատվության և դրա կարևոր բաղադրիչների պաշտպանությունն է, այդ թվում՝ այն համակարգերի, որոնք օգտագործում, հավաքում և փոխանցում են այդ տեղեկատվությունը: Միտնիկի և Սիմոնի բնորոշման համաձայն՝ տեղեկատվական անվտանգությունն առնչվում է ոչ թե տեխնոլոգիաների կամ ապրանքների, այլ՝ համապատասխան գործընթացի հետ<sup>12</sup>:

Գրականության մեջ առկա է տեսակետ

<sup>9</sup> Sten Luijff, E., Besseling, K. and De Graaf, P., “Nineteen national cyber security strategies”, International Journal of Critical Infrastructures 6, 9 (1-2), 2013, էջ 6, հասանելի է՝ file:///C:/Users/Sh-Xukasyan/Downloads/IJCIS0901-0201LUIJF.pdf հղումով, 08.08.2019թ. դրությամբ:

<sup>10</sup> Տեն Հ.Մկրտչյան, «Տեղեկատվական անվտանգություն» հասկացության էվոլյուցիան, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 2017, N 3 (24), էջ 58-60:

<sup>11</sup> Sten Luijff, E., Besseling, K. and De Graaf, P., “Nineteen national cyber security strategies”, International Journal of Critical Infrastructures 6, 9 (1-2), 2013, էջ 5, հասանելի է՝ file:///C:/Users/Sh-Xukasyan/Downloads/IJCIS0901-0201LUIJF.pdf հղումով, 08.08.2019 թ. դրությամբ:

<sup>12</sup> Sten Von Solms, Rossouw, and Johan Van Niekerk., նշված աշխատությունը, էջ 98, հասանելի է՝ http://www.profsandhu.com/cs5323\_s18/Solms-Niekerk-2013.pdf հղումով՝ 08.09.2019թ. դրությամբ:



այն մասին, որ կիբեռանվտանգության նպատակն է նաև այն անձանց պաշտպանությունը, ովքեր կիբեռմիջավայրում օգտագործում են համապատասխան աղբյուրներ, ինչպես նաև այն ակտիվների պաշտպանությունը, որոնք պատկանում են ողջ հասարակությանը, և որոնք կարող են վտանգվել տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների խոցելիության պատճառով: Այլ կերպ ասած՝ տեղեկատվական անվտանգության նպատակն է տարբեր սպառնալիքներից և առկա խոցելիությունից տեղեկատվության պաշտպանության ապահովումը, իսկ կիբեռանվտանգության նպատակը՝ ոչ միայն կիբեռտարածքի պաշտպանությունը, այլև այն անձանց և ակտիվների պաշտպանությունը, որոնք գործում են կիբեռտարածքում, և որոնք կարող են հասանելի դառնալ կիբեռտարածքի միջոցով<sup>13</sup>:

Այսպիսով՝ կարող ենք եզրահանգել, որ «կիբեռանվտանգություն» եզրույթի ներքո անհրաժեշտ է ներառել ոչ միայն կիբեռտարածքի, այլ նաև դրանից օգտվողների պաշտպանվածությունը:

Առավել մանրամասն անդրադառնալով «կիբեռանվտանգություն» և «տեղեկատվական անվտանգություն» եզրույթների հարաբերակցությանը՝ անհրաժեշտ է նշել, որ դրանց համընկնումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ «կիբեռանվտանգություն» եզրույթի բովանդակային մասի բացահայտումն իրականացվում է «տեղեկատվական անվտանգություն» եզրույթի նեղ իմաստով բովանդակության լույսի ներքո: Պատահական չէ գրականության մեջ այն կարծիքի շեշտադրումը, որ տեղեկատվական անվտանգությունն ուսումնասիրվում է և՛ նեղ, և՛ լայն առումներով: Առաջին դեպքում շեշտը դրվում է տեխնիկական բաղադրիչի վրա, իսկ մյուս պարագայում ընդգրկվում են տեղեկատվական անվտանգու-

թյան բոլոր սուբյեկտները, այդ թվում՝ տեղեկատվություն փոխանցողը, ստացողը, առկա ենթակառուցվածքները<sup>14</sup>: Օրինակ՝ 2015 թվականի ԱՄՆ Ազգային անվտանգության ռազմավարության «Կիբեռանվտանգություն» բաժնի համաձայն. «Որպես Համացանցի ծննդավայր՝ ԱՄՆ ունի ցանցային աշխարհն առաջնորդելու համար հատուկ պատասխանատվություն: Բարեկեցությունը և անվտանգությունը մեծապես կախված են բաց, փոխգործակցող անվտանգ և հուսալի համացանցից: Գլոբալ մասշտաբով կիբեռանվտանգությունը պահանջում է մտավոր սեփականության, «առցանց» ազատության, քաղաքացիական ենթակառուցվածքների պաշտպանություն, երկրների կողմից համացանցի կառավարում որպես միասնական պատասխանատվություն՝ առանցքային շահագրգիռ կողմ դիտարկելով մասնավոր հատվածին, քաղաքացիական հասարակությանը և համացանցից օգտվողներին<sup>15</sup>:

Այսինքն՝ նշված ռազմավարությամբ ևս «կիբեռանվտանգություն» եզրույթը համապատասխանում է «տեղեկատվական անվտանգություն» եզրույթի նեղ իմաստով բովանդակությանը: Այսպիսով՝ կարող ենք եզրահանգել, որ կիբեռանվտանգությունը համապատասխանում է «տեղեկատվական անվտանգություն» եզրույթի նեղ իմաստով բովանդակությանը՝ ընդգրկելով կիբեռտարածքի և այդ տիրույթից օգտվողների պաշտպանությունը: Ըստ այդմ՝ կարծում ենք՝ ոլորտային քաղաքականություն մշակելիս համապատասխան ռազմավարության մեջ իրավական եզրույթաբանության տեսանկյունից առավել նպատակահարմար է «տեղեկատվական անվտանգություն» եզրի օգտագործումը, որի շրջանակում կարելի է որպես առանձին հիմնահարց անդրադառնալ նաև կիբեռանվտանգությանը:

<sup>13</sup> Sten Von Solms, Rossouw, and Johan Van Niekerk., նշված աշխատությունը, էջ 101, հասանելի է՝ [http://www.profsandhu.com/cs5323\\_s18/Solms-Niekerk-2013.pdf](http://www.profsandhu.com/cs5323_s18/Solms-Niekerk-2013.pdf) հղումով՝ 08.09.2019թ. դրությամբ:  
<sup>14</sup> Տեն Հ.Մկրտչյան, «Տեղեկատվական անվտանգություն» հասկացության էվոլյուցիան, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 2017, N 3 (24), էջ 58-60:  
<sup>15</sup> Տեն US National Security Strategy, 2015, էջեր՝ 12-13, հասանելի է՝ [https://obamawhitehouse.archives.gov/sites/default/files/docs/2015\\_national\\_security\\_strategy\\_2.pdf](https://obamawhitehouse.archives.gov/sites/default/files/docs/2015_national_security_strategy_2.pdf) հղումով՝ 08.09.2019 թ. դրությամբ:

**ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ**

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության քրեագիտական հետազոտությունների բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, իրավագիտության թեկնածու

**ՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՏՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ  
ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀՀ քր. օր.-ի 179-րդ հոդված)**

ՀՀ քր. օր.-ի 179-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ուրիշի գույքի հափշտակության երկու ինքնուրույն եղանակների՝ *յուրացնելու կամ վարնելու* համար:

Դեռևս ՌՍՖՍՀ 1922 և 1926թթ. քրեական օրենսգրքերում «յուրացում» եզրույթը (որոշակի տարբերություններով), ընդհանուր առմամբ, բնորոշվում էր որպես՝ «որոշակի նպատակով վստահված ուրիշի գույքի շահադիտական նպատակով (ինքնակամ) պահելը կամ (այդ թվում) վարնելը» (ՌՍՖՍՀ 1922թ. քր. օր.-ի 185-րդ հոդված և ՌՍՖՍՀ 1926թ. քր. օր.-ի 168-րդ հոդված): Այդպիսի բնորոշում օգտագործվում էր հատկապես՝ տվյալ ժամանակաշրջանի քրեական իրավունքի գիտության կողմից: Դա ընդունված էր համարել որպես՝ *հափշտակության ինքնուրույն եղանակ*: Սակայն, ժամանակին համընթաց՝ նշված հանցակազմի վերաբերյալ առկա պատկերացումները փոխվեցին, և «յուրացում» հասկացությունն արժանացավ կոշտ քննադատության. համարվեց թերի և ոչ ճիշտ: Մասնավորապես՝ քննարկումներն ընթանում էին հետևյալ հարցի շուրջ. յուրացում պետք է համարել ոչ թե ուրիշի գույքը շահադիտական նպատակով պահելը, այլ՝ դարձնելը: Չնայած այդ բոլորին՝ տվյալ ժամանակաշրջանի քրեագետների մեծ մասը հակված էր կարծելու, թե յուրացումը ուրիշի գույքը շահադիտական նպատակով պահելն է: Հետագայում արդեն՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքով, նշված հանցակազմը բնորոշվեց որպես՝ «**Գույքի հափշտա-**

*կումը յուրացնելու, վարնելու կամ պաշտոնական դիրքը չարաշահելու միջոցով*» (ՀՀ 1961թ. քր. օր.-ի 90-րդ հոդված):

Հեղինակներից *Ի. Մ. Մակարի* կարծիքով՝ «յուրացում» ասելով՝ պետք է հասկանալ հանցավորի օրինաչափ տիրապետման ներքո գտնվող գույքը շահադիտական շարժառիթներով պահելը, չվերադարձնելը, որպես իր սեփականություն հանդիսացող գույք օգտագործելը: Տվյալ գույքի նկատմամբ, իր ծառայողական պարտականությունների, պայմանագրային հարաբերությունների կամ հատուկ հանձնարարությունների հետ կապված, հանցավորը կարող է ունենալ գույքը տնօրինելու, կառավարելու, պահպանելու որոշակի լիազորություններ: «Վատնումը» գույքի վաճառքն է, նվիրումը կամ գույքը տնօրինելու այլ եղանակը, որը հավասարազոր է որպես իր սեփականությունը հանդիսացող գույքն օգտագործելուն: Հեղինակի կարծիքով՝ յուրացնելը կամ վատնելը, իրենց էությանը, ունեն շատ նմանություններ. եթե յուրացման դեպքում հանցավորը, իրենը դարձնելով, ապօրինի իր մոտ է պահում ուրիշի գույքը, ապա վատնելու դեպքում ոչ միայն իր մոտ է պահում, այլև՝ ծախսում (սպառում): Այսինքն՝ հանցավորը, գույքի օրինաչափ տիրապետման փոխարեն, կատարում է ապօրինի տնօրինում կամ օգտագործում:

Գրականության մեջ տարածված այն կարծիքը, թե յուրացումը պարզապես գույքը չվերադարձնելն է կամ վերադարձնելուց հրաժար-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 113 2019

<sup>1</sup> Стн Макарь И.М. Охрана социалистического имущества, Кишинев, 1978г., с. 11-12. Борьба с хищениями, совершаемыми путем присвоения, растраты либо злоупотребления служебным положением; правовые, психологические и криминологические аспекты, учебное пособие. Мин. внутр. дел СССР, Горьковская высшая школа, Горький, 1976г., с. 26-27:

վելը, այնքան էլ ճիշտ չէ: Գույքը պարզապես չվերադարձնելը կամ վերադարձնելուց հրաժարվելն *անգործության դրսևորման ձևեր են*, մինչդեռ՝ անգործությամբ հափշտակություն կատարել հնարավոր չէ<sup>2</sup>:

Հեղինակներից Պ. Ս. Յանին, նկատի ունենալով սույն հանցագործության առանձնահատկությունները, դա նույնիսկ անվանել է որպես՝ **«հափշտակության խաբեբայական ձևեր»**<sup>3</sup>:

Յուրացնելու կամ վատնելու հանցակազմի օբյեկտը լիովին համապատասխանում է ցանկացած հափշտակության օբյեկտին: Հափշտակության նշված եղանակների առարկան հանցավորին վստահված գույքն է: Դրանց ընդհանրությունն այն է, որ գույքի հափշտակությունը սեփականատիրոջից տեղի է ունենում առանց վերցնելու, որի դեպքում՝ հանցավորն օգտվում է ուրիշի գույքն անձնական նպատակներով օգտագործելու և տիրապետելու փաստացի հնարավորությունից<sup>4</sup>:

Յուրացումը վատնումից տարբերվում է հափշտակության ավարտման պահին հանցավորի մոտ գույքը գտնվելու (չգտնվելու) փաստով: Երբեմն հանցավորը սկզբից յուրացնում է վստահված գույքը, իսկ հետո միայն՝ օգտագործում կամ տնօրինում: Նշված հանգամանքով պայմանավորված՝ իրավաբանական գրականության մեջ ձևավորվել է մի տեսակետ, որի համաձայն՝ գույքը վատնելու գործողությանը անխուսափելիորեն նախորդում է գույքի յուրացումը<sup>5</sup>: Այս տեսակետը հիմնավորվում է այն փաստարկով, որ վատնումը, համարելով յուրացմանը հաջորդող անխուսափելի գործողություն, տրամաբանորեն հանգեցնում է հետևյալ եզրահանգման. հափշտակության այս եղանակն ունի ավարտման երկու փուլ. մեկը՝ յուրացում, մյուսը՝ վատնում: Սակայն նմանատիպ եզրահանգման սխալական լինելն ակնհայտ է,

քանի որ միևնույն հափշտակության եղանակը չի կարող ավարտման երկու պահ ունենալ: Այսինքն՝ միևնույն նյութական արժեքը չի կարելի և՛ յուրացնել, և՛ վատնել: Եթե կատարվել է յուրացում, ապա վատնումը բացառվում է, կամ՝ հակառակը: Մասնավորապես՝ հեղինակներից Լ. Դ. Գաուխմանը և Ս. Վ. Մաքսիմովն այս կապակցությամբ նույնպես նշել են, որ տվյալ տեսակետին կողմ արտահայտվելու դեպքում պետք է ընդունել, որ միևնույն հափշտակությունն ունի ավարտման երկու պահ՝ 1) ավարտված յուրացում, և 2) ավարտված վատնում: Սխալ համարելով նշված տեսակետը՝ նրանք կարծում են, թե ինչպես ցանկացած հափշտակության, այնպես էլ հափշտակության տվյալ եղանակի դեպքում առկա է հանցագործության ավարտման մեկ պահ: Նրանց կարծիքով՝ նշված տեսակետն անհիմն է հատկապես, որովհետև չհիմնավորված կերպով ընդլայնում է անձի քրեական պատասխանատվության շրջանակը<sup>6</sup>:

Մեկ այլ հեղինակներից Ա. Ի. Բոյցովը նույնպես կարծում է, թե գույքը, մինչ վատնելը, նախ և առաջ՝ պետք է յուրացվի: Դրանից կարելի է եզրակացնել, որ մենք տվյալ դեպքում գործ ունենք հափշտակության երկու դեպքի հետ: Նրա կարծիքով՝ բացարձակ հնարավոր չէ մեկ ավարտված հափշտակությունը (յուրացում) յուրացված գույքի իրացման դեպքում վերածվի մեկ այլ հափշտակության (վատնում): Եթե գույքն արդեն իսկ յուրացված է, ապա չկա վատնելու որևէ բան... Եթե գույքն արդեն վատնված է, ապա չի կարող յուրացվել, քանի որ օտարման հետևանքով յուրացման առարկա հանդիսացող գույքը նույնպես վերանում է: Այդ իսկ պատճառով՝ այն արտահայտությունը, թե՛ «մեղադրյալը յուրացրել և վատնել է գույքը», ճիշտ չէ, եթե միևնույն գույքին է վերաբերում<sup>7</sup>:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, հատուկ մաս, խմբ.՝ իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Գ.Ս. Ղազինյանի, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2004թ., էջ 371:

<sup>3</sup> Տե՛ս Яни П.С. Мошенничество и иные преступления против собственности, уголовная ответственность, ЗАО Бизнес-школа, Интел-Синтез, М., 2002г., с. 57:

<sup>4</sup> Տե՛ս Уголовное право России (части общая и особенная), учебник для бакалавров, издание второе, переработанное и дополненное, ответ. ред. док. юрид. наук, проф., заслуженный деятель науки РФ А.И. Рапог, М. 2017г., с. 377:

<sup>5</sup> Տե՛ս Кригер Г. А. Квалификация хищений социалистического имущества, Юрид. лит., М., 1974г., с. 174-175:

<sup>6</sup> Տե՛ս Гаухман Л. Д., Максимов С. В. Ответственность за преступления против собственности, М., 2001г., с. 83-84:

<sup>7</sup> Տե՛ս Бойцов А.И. Преступления против собственности, теория и практика уголовного права и уголовного процесса, Санкт-Петербург, Юридический центр Пресс, 2002г., с. 422-423

Մեկ այլ հեղինակի կարծիքով՝ քրեական օրենքում ուրիշ գույքը վատնելը, օտարելը կամ ապօրինի փոխանցելը հիմնավոր կերպով չեն դիտարկվում որպես հավասար նշանակություն ունեցող հասկացություններ, իսկ բովանդակային առումով՝ դրանք նույնիսկ տարբերվող են: Ուստի դրա օտարումը կամ ապօրինի փոխանցումը վատնել համարելը կնշանակի ավելի տարածական մեկնաբանել «վատնում» հասկացությունը: Վերը նշվածը հիմք ընդունելով՝ նույնիսկ առաջարկվել է «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում պատասխանատվություն նախատեսել՝ *մեղադրյալին վստահված ուրիշ գույքը յուրացնելու, վափնելու, օտարելու, փոխանցելու կամ թաքցնելու համար*<sup>8</sup>: Այսինքն՝ քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի ենթարկվի տարածական մեկնաբանության: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ օրինականության սկզբունքի անքակտելի տարրը՝ քրեական օրենքը, տարածական մեկնաբանելու և անալոգիայով կիրառելու արգելքն է, ուստի արարքի հանցավորությունն ու պատժելիությունը պետք է նախատեսված լինեն *իրավական որոշակիության չափանիշին բավարարող օրենքով*<sup>9</sup>:

Որոշ քրեագետների կողմից, յուրացնելու կամ վատնելու եղանակով իրականացված հափշտակություններն առավել խորքային ուսումնասիրելու նպատակով, նույնիսկ առաջարկվել է դրանք վերլուծել «ստատիկ» և «դինամիկ» տեսանկյուններից: Նշված առաջարկի հիմքում ընկած է հետևյալ մոտեցումը. դա կարող է հնարավորություն ընձեռել առավել հստակ տարանջատելու նշված երկու հասկացությունը, ինչպես նաև նյութական արժեքների նկատմամբ իրականացված գործողությունների բնույթը, մաս-

նավորապես՝ գույքը հանցավորի մոտ գտնվելու կամ չգտնվելու փաստը: Նույնիսկ առաջարկվել է յուրացումը կամ վատնումը ընդգրկել հափշտակության այլ եղանակների մեջ, կամ էլ՝ դրանք չեն կարող համարվել հափշտակության եղանակներ և այլն<sup>10</sup>: Սակայն պետք է փաստել, որ արտահայտած վերջին տեսակետները զուրկ են պատճառաբանված լինելու որևէ լուրջ հիմնավորումներից, քանի որ, ըստ էության, դեռևս շարունակում են դիտարկվել որպես հափշտակության *երկու ինքնուրույն եղանակներ*<sup>11</sup>:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ պետք է ճիշտ համարել այն մոտեցումը, երբ յուրացումը կամ վատնումը, դիտարկվում են որպես *հափշտակության իրականացման միասնական միջոցներ (եղանակներ)*՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դրանք իրականացվում են «*միասնական և շարունակական դիտավորության մեջ ընկալվող հափշտակության*» տրամաբանության շրջանակներում: Ուստի այն դեպքերում, երբ անձը, միասնական դիտավորությամբ, իրականացնում է իրեն վստահված գույքի հափշտակություն (*այսինքն՝ մի դեպքում կատարվում է յուրացում, իսկ մյուս դեպքում՝ վափնում*), արարքը չի կարող ձևավորել հանցագործությունների համակցության խնդիր<sup>12</sup>: Հարկ է նաև նշել, որ վատնումը կարող է դրսևորվել ոչ միայն միանվագ գործողությամբ, այլև՝ ժամանակի ընթացքում գույքը մաս-մաս օտարելու առանձին դրվագներով: Վատնումը, որը բաղկացած է միասնական դիտավորությամբ ընդգրկված մի քանի գործողությունից (ակտից), ավարտված է համարվում միասնական դիտավորությամբ ընդգրկված՝ առանձին գործողություններից (ակտերից) վերջինը կատարելու պահից սկսած<sup>13</sup>:

<sup>8</sup> Տե՛ս Кочой С.М. Ответственность за корыстные преступления против собственности; учебно-практическое пособие, издание 2-е, дополненное и переработанное, М., 2000г., с. 196:  
<sup>9</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 16-ի ԵԷԴ/0122/01/13 քրեական գործով կայացված որոշումը՝ ամբաստանյալ Դավիթ Ալբերտի Սիմիոյանի վերաբերյալ:  
<sup>10</sup> Տե՛ս <http://www.coolreferat.com>, <http://www.allpravo.ru>, <http://www.pravo.vuzlib.net/> - էլեկտրոնային տեղեկատվական կայքեր  
<sup>11</sup> Տե՛ս Уголовное право (особенная часть), учебник для бакалавров, издание третье, переработанное и дополненное, под редакцией док. юрид. наук, проф. А.И. Чучаева, М. 2018г., с. 136:  
<sup>12</sup> Տե՛ս Комментарий к уголовному кодексу Российской Федерации (постатейный), 2-е издание, ТОМ 1, Российская академия правосудия, под. ред. док. юрид. наук, проф., заслуженного юриста РФ А.В. Бриллиантова, М., 2017г., с. 607:  
<sup>13</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (չորրորդ իրատարակություն՝ լրացումներով և փոփոխություններով), խմբ.՝ իրավ. գիտ. դոկ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ.Ս. Ղազինյանի, ԵՊՀ իրատարակչություն, Երևան, 2009թ., էջ 412:

Հատկապես՝ համակցությամբ պետք է որակվեն պաշտոնատար անձի կողմից կեղծված պաշտոնական փաստաթղթերի օգտագործումը խարդախության կամ յուրացման կամ վատնման եղանակով կատարված հափշտակությունների, ինչպես նաև այն դեպքերը, երբ կեղծիքը կատարվում է այլ հանցանք թաքցնելու կամ կատարումը հեշտացնելու նպատակով: Օրինակ՝ եթե ճանապարհային ոստիկանության տնտեսական բաժնի պետը կեղծ փաստաթղթեր է կազմում, որպեսզի թաքցնի ծառայողական նպատակներով հատկացված բենզինի՝ իր կողմից առանձնապես խոշոր չափերով կատարված յուրացումները, նրա արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ՝ որպես պաշտոնական կեղծիք և առանձնապես խոշոր չափերով յուրացում<sup>14</sup>:

Յուրացման կամ վատնման հանցակազմի սուբյեկտները հատուկ են. դրանք այնպիսի անձինք են, որոնց, որոշակի լիազորությամբ, վստահված է ուրիշի գույքը: Գույքի հանձնումը (վստահելը) պետք է կատարվի գրավոր ձևակերպմամբ (հրաման, պայմանագիր, կարգադրություն և այլն), որով գույքը հանձնվում է կոնկրետ անձի որոշակի լիազորությամբ (վաճառք, տեղափոխում և այլն)<sup>15</sup>: Այսինքն՝ այն նյութական պատասխանատու անձին, ով պատասխանատվություն է կրում իրեն վստահված հաշվետու գույքի պահպանությունը չապահովելու պատճառով առաջացած վնասի համար<sup>16</sup>: Նույնիսկ իրավաբանական գրականության մեջ առկա տեսակետներից մեկի համաձայն՝ յուրացնելու կամ վատնելու հանցակազմում պաշտոնական դիրքն օգտագործելը որպես արարքը որակյալ դարձնող հատկանիշ ընդունելը ոչ միայն առավել հստակ է դարձրել հափշտակու-

թյան եղանակներին վերաբերող համակարգը, այլև համարժեք արձագանք է հանդիսացել այն խնդիրների լուծման համար, որոնք ուղղված են եղել կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեմ տարվող պայքարն ուժեղացնելուն<sup>17</sup>:

Որպես հանցագործության սուբյեկտ կարող են հանդես գալ ինչպես պաշտոնատար անձինք, ովքեր դատական պրակտիկայում առավել հաճախ են հանդիպում, այնպես էլ ոչ պաշտոնատար անձինք, տարբեր կազմակերպությունների և առևտրային կառույցների հաստիքային և ոչ հաստիքային աշխատակիցները, ում տասնվեց տարին լրացել է նախքան հանցանք կատարելը: Այսինքն՝ որպես հանցագործության սուբյեկտ կարող են հանդես գալ նաև այն սովորական քաղաքացիները, ովքեր, կոնկրետ գույքի նկատմամբ սեփականատիրոջ կողմից ստանալով որոշակի լիազորություններ, ձեռք են բերում հանցագործության հատուկ սուբյեկտի կարգավիճակ<sup>18</sup>:

Պաշտոնական դիրքն օգտագործելու միջոցով կատարված հափշտակության դեպքում որպես հանցագործության սուբյեկտ կարող են հանդես գալ այն անձինք, ովքեր պաշտոնական դիրք են զբաղեցնում: Մասնավորապես՝ պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև ՀՀ զինված ուժերում, ՀՀ այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կամակերպական-տնօրինական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձանց կողմից իրենց վստահված գույքը պաշտոնական դիրքի օգտագործմամբ յուրացնելու դեպքում, արարքը որակվում է քր. օր.-ի հոդված 179-ի

<sup>14</sup> Տե՛ս «Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները» (գիտագործական մեկնաբանություններ), ՀՀ հատուկ քննչական ծառայություն, գիտական խմբագրությամբ՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ, արդարադատության գեներալ-լեյտենանտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ վաստակավոր իրավաբան Վ.Գ. Շահինյանի, Երևան, «Տիգրան Մեծ», 2015թ., էջ 97:

<sup>15</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, հատուկ մաս, խմբ.՝ իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Գ.Ս. Ղազինյանի, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2004թ., էջ 373:

<sup>16</sup> Տե՛ս Юридический энциклопедический словарь, М., 1987г., с. 213:

<sup>17</sup> Տե՛ս Курс уголовного права, в пяти томах, особенная часть, том 3, под редакцией док. юрид. наук, профессора Г.Н. Борзенкова и док. юрид. наук, профессора В.С. Комиссарова, М., Зерцало-М, 2002г., с. 442:

<sup>18</sup> Տե՛ս Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Под общей редакцией док. юрид. наук, Председателя Верховного Суда РФ В. М. Лебедева и док. юрид. наук, профессора Ю.И. Скуратова, издательство НОРМА, М., 2002г., с. 393:

երկրորդ մասի առաջին կետով՝ որպես ծանրացուցիչ հանգամանքներում կատարված յուրացում: Ընդ որում՝ քր. օր.-ի հոդված 179-ի երկրորդ մասի առաջին կետով նախատեսված հանցագործության սուբյեկտ կարող է լինել միայն պաշտոնատար անձը՝ քր. օր.-ի հոդված 308-ի երկրորդ մասի իմաստով: Նշված մարմինների այն շարքային աշխատակցի արարքը, ում տրված են որոշակի հատուկ լիազորություններ տվյալ գույքի նկատմամբ, որակվում է որպես հասարակ յուրացում կամ վատնում<sup>19</sup>:

Իրավակիրառ պրակտիկայում հաճախ խնդիր է առաջանում, շահադիտական շահագրգռվածությունից ելնելով, պաշտոնեական լիազորությունները չարաշահելը պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարվող հափշտակություններից (խարդախությունից և յուրացումից կամ վատնումից) սահմանազատելու կապակցությամբ: Նշված հանցագործությունների սահմանազատման հիմնական չափանիշն այն է, որ պաշտոնեական լիազորությունները շահադիտական շարժառիթով չարաշահելու դեպքում պետք է բացակայեն հափշտակության հատկանիշները (կամ դրանցից գոնե մեկը): Այսինքն՝ եթե, նույնիսկ լիազորությունները չարաշահելով, ապօրինի վերցվում է ուրիշի գույքը, բայց՝ ոչ անհատուց, արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի հոդված 308-ով: Հակառակ պարագայում, բնականաբար, արարքը պետք է որակվի որպես պաշտոնեական դիրքի օգտագործմամբ հափշտակություն: Այսպես, օրինակ՝ եթե պետական կազմակերպության գլխավոր հաշվապահը ժամանակավոր օգտագործման (հետագայում վերադարձնելու) նպատակով կազմակերպության դրամարկղից միջոցներ է վերցնում, նրա արարքը, համապատասխան այլ հատկանիշների առկայության պարագայում, որակվում է միայն որպես պաշտոնեական լիազորու-

թյունների չարաշահում: Միևնույն ժամանակ՝ եթե նույն անձի կողմից դրամական նշված միջոցները վերցվեին իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելու նպատակով՝ նրա արարքը կորակվեր միայն որպես պաշտոնեական դիրքն օգտագործելով յուրացում կամ վատնում<sup>20</sup>:

Յուրացնելը կամ վատնելը սուբյեկտիվ կողմից բնորոշվում են ուղղակի դիտավորությամբ և շահադիտական նպատակով:

Ինչպես յուրացման կամ վատնման, այնպես էլ խարդախության դեպքում՝ գույքի սեփականատերը կամովին է գույքը հանձնում հանցավորին, սակայն, ի տարբերություն յուրացման կամ վատնման՝ խարդախության դեպքում սեփականատերը գտնվում է մոլորության մեջ<sup>21</sup>: Այսինքն՝ եթե խարդախության դեպքում հանցավորը հենց սկզբից նպատակ է ունենում հափշտակել ուրիշին պատկանող գույքը, ապա յուրացնելու կամ վատնելու դեպքում գույքը հափշտակելու նպատակը բացակայում է, այսինքն՝ յուրացնելու կամ վատնելու հանցակազմի դեպքում գույքի նկատմամբ լիազորություններ հանձնելու նախաձեռնությունը հանցավորին չի պատկանում: Օրինակ՝ եթե անձը գույքը վերցնում է՝ ի սկզբանե նպատակ չունենալով վերադարձնելու, ապա արարքը որակվում է որպես խարդախություն, այլ ոչ թե՛ յուրացում կամ վատնում:

Որոշ իրավաբան-գիտնականների կարծիքով. «Անհրաժեշտ է տարբերակել անձի կողմից յուրացման եղանակով իրականացված հափշտակությունը գույքը ժամանակավոր փոխառություն հանձնելուց: Եթե հանգամանքները վկայում են, որ անձը, անօրինական կերպով, ժամանակավորապես օգտվել է ուրիշի գույքից՝ ունենալով տվյալ գույքը կամ դրա համարժեքը հետագայում վերադարձնելու մտադրություն, ապա արարքը չի կարող համարվել հափշտակություն. կատարվածը կարող է որակ-

<sup>19</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (չորրորդ հրատարակություն՝ լրացումներով և փոփոխություններով), խմբ.՝ իրավ. գիտ. դոկ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ.Ս. Ղազինյանի, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2009թ., էջ 411:

<sup>20</sup> Տե՛ս «Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները» (գիտագործնական մեկնաբանություններ), ՀՀ հատուկ քննչական ծառայություն, գիտական խմբագրությամբ՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ, արդարադատության գեներալ-լեյտենանտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ վաստակավոր իրավաբան Վ.Գ. Շահինյանի, Երևան, «Տիգրան Մեծ», 2015թ., էջ 35:

<sup>21</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (չորրորդ հրատարակություն՝ լրացումներով և փոփոխություններով), խմբ.՝ իրավ. գիտ. դոկ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ.Ս. Ղազինյանի, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2009թ., էջ 412:



վել իբրև ինքնիրավչություն կամ (պաշտոնատար անձանց համար) պաշտոնեական լիազորությունների անցում...»<sup>22</sup>: Այսինքն՝ այն դեպքում, երբ հանցավորն ինքնական և ապօրինի կերպով օգտագործում է իրեն ժամանակավոր վստահված գույքը, սակայն հետագայում մտադիր լինելով վերադարձնել կամ հատուցել դրա արժեքը, ապա արարքը ենթակա է որակման ոչ թե որպես հափշտակություն, այլ՝ ինքնիրավչություն կամ պաշտոնեական դիրքի չարաշահում (այդպիսի գործողությունները կարող են պարունակել նաև քաղաքացիաիրավական, վարչական կամ կարգապահական բնույթի պատասխանատվության տարրեր):

Կարևոր է հատկապես՝ յուրացնելու կամ վատնելու հանցակազմի տարբերակումը *գողության հանցակազմից*: Դրանց միջև գոյություն ունեցող հիմնական տարանջատող հատկանիշը հանցագործության սուբյեկտի վերաբերմունքն է հափշտակված գույքի նկատմամբ. յուրացնելու կամ վատնելու դեպքում գույքը ոչ միայն վստահված է լինում հանցավորին, գտնվում նրա իրավաչափ տիրապետման ներքո, այլև վերջինս տվյալ գույքի նկատմամբ, օժտված է լինում որոշակի իրավասություններով: Գողության դեպքում հանցագործության սուբյեկտը կամ ընդհանրապես չունի որևէ առնչություն հափշտակված գույքի նկատմամբ, կամ ստանում է որոշակի հասանելիություն՝ ինչ-որ տեխնիկական կամ արտադրական բնույթի գործառույթներ իրականացնելու նպատակով, ինչը, սակայն, չի առաջացնում որևէ իրավասություններ՝ տվյալ գույքը տնօրինելու, տիրապետելու, օգտագործելու կամ վերջինիս հետ կապված պատասխանատու պահպանություն իրականացնելու նպատակով: Գույքի հափշտակությունն այն անձի կողմից, ով չունի նշված գույքի նկատմամբ իրավասություններ, սակայն ունի հասանելիություն հանձնարարված աշխատանքի իրականացման կամ ծա-

ռայական պարտականությունների կատարման առումով, ենթակա է որակման որպես *գողություն*<sup>23</sup>: Այսինքն՝ ուրիշի գույքի հափշտակությունն այն անձի կողմից, ով, որևէ իրավասությամբ օժտված չլինելով տվյալ գույքի նկատմամբ, ունեցել է ընդամենը որոշակի հասանելիություն կատարվող աշխատանքի (օրինակ՝ պահեստարանի աշխատակիցի կամ պահակի կողմից) կամ ծառայողական պարտականությունների շրջանակներում իրականացվող աշխատանքների կատարման հետ կապված (օրինակ՝ հեռուստացույցների գործարանում դետալները հավաքող փականագործի կողմից), այդ արարքը ենթակա է որակման որպես ոչ թե յուրացում, այլ՝ *գողություն*, քանի որ իրականացվել է առանց իրավասու անձանց իմացության և առանց տվյալ գույքի նկատմամբ որևէ իրավասության օգտագործման<sup>24</sup>: Դեռևս ԽՍՀՄ Գերագույն դատարանի պլենումը՝ 1972թ. հուլիսի 11-ի №4 որոշմամբ, գույքի այդպիսի հափշտակության վերաբերյալ նույնպես տվել է նմանատիպ պարզաբանումներ<sup>25</sup>:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև նշված հանցակազմի վերաբերյալ առկա օրենսդրական այն լուծումները, որոնք տեղ են գտել մի շարք արտասահմանյան երկրների քրեական օրենսդրություններում: Մասնավորապես՝ ուսումնասիրելով Իսպանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Լեհաստանի, Լատվիայի և Բուլղարիայի հանրապետությունների համապատասխան քրեական օրենսդրությունները (բացառությամբ հետխորհրդային տարածքի որոշ երկրների), միանշանակ կերպով կարելի է փաստել, որ վերը նշված հանցակազմի կամ դրանում արտահայտված հափշտակության կոնկրետ եղանակների վերաբերյալ բովանդակային բնույթի որևէ միասնական մոտեցում չկա: Սակայն դրանցում առկա քրեաիրավական նորմերում (հատկապես՝ հափշտակության հատկա-

<sup>22</sup> Стѣи Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Расширенный уголовно-правовой анализ с материалами судебно-следственной практики, ЭКЗАМЕН, М., 2002г., с. 325:

<sup>23</sup> Стѣи Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Под общей редакцией док. юрид. наук, Председателя Верховного Суда РФ В.М. Лебедева и док. юрид. наук, профессора Ю.И. Скуратова, издательство НОРМА, М., 2002г., с. 394:

<sup>24</sup> Стѣи Комментарий к Уголовному кодексу Российской Федерации, издание одиннадцатое, переработанное и дополненное, ответ. ред. док. юрид. наук, проф., заслуженный деятель науки РФ А.И. Рапог, М. 2017г., с. 354:

<sup>25</sup> Стѣи Судебная практика по уголовным делам, сборник постановлений Пленумов Верховных Судов СССР, РСФСР и Российской Федерации, ЭКЗАМЕН, М., 2001г., с. 128-136:

նիշներ պարունակող), որպես ընդգծված մոտեցում, հիմնականում գերակշռում է հետևյալ միտումը. հափշտակության համար պատասխանատվությունը նախատեսվում է ոչ թե յուրացնելու կամ վատնելու, այլ, տարաբնույթ դրսևորումներով արտահայտված՝ գույքի «յուրացման» համար (բովանդակային իմաստի մեջ չներառելով «վատնում» եզրույթը): Այս առումով՝ նույնիսկ արդի հայերենի բացատրական բառարանում «յուրացնել» բառը (բովանդակային իմաստով) բացատրվում է՝ որպես «ինքնակամորեն իրենը դարձնել, սեփականել, ապօրինաբար ուրիշի ունեցվածքը իրենը դարձնել, հափշտակել», իսկ «վատնելը» (ի տարբերություն վերջինիս)՝ «ծախսել, ծախսելով սպառել՝ վերջացնել, վատ բաների կամ ապարդյուն՝ անօգուտ կերպով ծախսել, աննպատակ, ապարդյուն կերպով գործադրել, անիմաստ բաների վրա գործադրել, փչացնել, ոչնչացնել...» և այլն<sup>26</sup>: Ի վերջո՝ վերը նշված բառերի բովանդակային բացատրությունների համեմատական վերլուծության արդյունքները հանգեցնում են այն հետևության, որ նշված եզրույթները նույնիսկ **անհամապետելի են**:

Որպես վերը նշվածի իրավական հիմնավորում՝ հատկապես էական նշանակություն ունի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ (Նորմատիվ իրավական ակտի նորմի մեկնաբանումը) հոդվածում տեղ գտած այն դրույթը, ըստ որի (հատվածական մեջբերում). «Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տրամաբան նշանակությունից...», իսկ նույն օրենքի 16-րդ (Նորմատիվ իրավական ակտում որոշ շաղկապների և բառերի կիրառումը) հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ «Եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով, կամ «և», կամ «ու», ինչպես նաև «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա ստորակետերով, կամ «և», կամ «ու» շաղկապներով բաժանված պայմանների մասով այդ նորմի կիրառման համար անհրաժեշտ է բոլոր

պայմանների առկայությունը, իսկ «կամ» շաղկապով բաժանված պայմանների մասով բաժանված է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը»: Ըստ էության՝ օրենքի վերը նշված պահանջը, վերաբերելի է նաև ՀՀ քր. օր.-ի 179-րդ հոդվածում կիրառված «կամ» շաղկապին (այն է՝ «յուրացնելը կամ վատնելը»), որը, իրավական որոշակիության տեսանկյունից, հակասությունների և տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Այսպիսով՝ ընդհանրացնելով իրավաբանական գրականության մեջ յուրացնելու կամ վատնելու հանցակազմի վերաբերյալ առկա վերը նշված տեսակետները՝ միանշանակ կերպով կարելի է եզրակացնել, որ տվյալ հանցակազմը և դրանում տեղ գտած հասկացություններն, ունեն առավել հստակեցման կարիք:

Ուստի իրավաբանական գրականության մեջ առկա՝ «յուրացնել» կամ «վատնել» եզրույթների քրեաիրավական մեկնաբանման վերաբերյալ առկա տարաբնույթ մոտեցումները և օրենսդրական բնույթի հնարավոր հակասությունները բացառելու, ինչպես նաև ՀՀ քր. օր.-ի հետագա կատարելագործման գործընթացը ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով՝ առաջարկվում է ՀՀ քր. օր.-ի 179-րդ հոդվածը վերախմբագրել իր բովանդակային էությանը համապատասխան, մասնավորապես՝ «**Վստահված կամ կառավարմանը հանձնված գույքը յուրացնելը**»՝ նորմի դիսպոզիցիայից դուրս թողնելով «վատնել» եզրույթը: Նորմի նմանատիպ ձևակերպման դեպքում բովանդակային շեշտը դրվելու է հափշտակության կատարման այն կոնկրետ եղանակի վրա (յուրացում), որի հետևանքով գույքը հանցավորին է անցնում՝ վերջինիս փաստացի վստահված կամ կառավարման նպատակով հանձնված լինելու պատճառով: Այդպիսի յուրացման շրջանակներում իրականացված՝ «վատնում» համարվող գործողությունը առանձին քրեաիրավական գնահատման կարիք չունի, քանի որ, ըստ էության, ամբողջությամբ ներառվում է գույքի հափշտակությանն ուղղված միասնական դիտավորության մեջ և որոշ դեպքերում նաև՝ համարվում վերջինիս բաղկացուցիչ տարրը:

<sup>26</sup> Տես Է. Բ. Աղայան «Արդի հայերենի բացատրական բառարան», Հայաստան Հրատարակչություն, Երևան, 1976թ., էջ 1043 և 1362:

**ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱԼ**

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

**ԱՆՃԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԴԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱՆԵՂԻՐԸ ԱՐԴԻ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՉ**

Անձի անվտանգության պաշտպանության քրեաիրավական միջոցների համակարգը պետք է զարգանա և կատարելագործվի՝ հաշվի առնելով արդի քրեական իրավունքի առաջընթացի ընդհանուր միտումները, այն է՝ քրեական օրենսդրության հումանիզացիան, օրենքի գերակայությունը և մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխավորված ապահովումը:

Դիտարկելով քրեական իրավունքում պաշտպանական միջոցների էվոլյուցիան՝ Վ.Ն. Կուդրյավցևն առանձնացնում է երեք փուլ. 1) ճանաչել տուժողի ոչ միայն կյանքի ու առողջության, այլև՝ նրա գույքի պաշտպանության իրավունքը. 2) օրինական է ճանաչել ոչ միայն ինքն իրեն և սեփական շահերի պաշտպանությունը, այլև՝ այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև հասարակական և պետական շահերի պաշտպանությունը, 3) սահմանել ինքնապաշտպանության պայմաններ և սահմաններ, որպեսզի դա չդառնա վրեժի ու հաշիվ մաքրելու գործիք<sup>1</sup>:

Ժամանակակից պայմաններում սկսում է ակտիվորեն զարգանալ նաև ազգային քրեական քաղաքականության սկզբունքորեն նոր ուղղությունը՝ օրինական շահերի իրականացման գծով անձի իրավասությունների ընդլայնման միջոցով նրա անվտանգության ապահովումը:

Կարևոր է ընդգծել, որ «անվտանգություն» եզրույթը ներկայիս համատեքստում չի կրկնապատկում «հանցագործության դեմ պայքար» հասկացությունը: Վերջինս ավելի նեղ է իր բովանդակությամբ, քանի որ իմաստային շեշտը տեղափոխում է վտանգի սուբյեկտից դեպի պաշտպանության օբյեկտ՝ իբրև հանցավորու-

թյանը հակազդելու ոլորտում պետության գործունեության վերջնանպատակ:

Անձի անվտանգության ապահովումը ենթադրում է ոչ միայն պատժի հարացույցի շրջանակներում անձի պաշտպանությունը, այլև՝ սեփական իրավունքների ու օրինական շահերի ինքնուրույն պաշտպանության գծով անձի իրավասությունների ընդլայնումը:

Մեր կարծիքով՝ պետության հիմնական նշանակությունը հասարակության կենսագործունեության այնպիսի կազմակերպման ապահովման գործն է, որի ընթացքում դրա անդամներին վնաս հասցնելու հնարավորությունը կհանգեցվեր նվազագույնի:

ՀՀ ՔՕ-ում ամրագրված ինքնապաշտպանության միջոցները (անհրաժեշտ պաշտպանություն և ծայրաստիճան անհրաժեշտություն) ունեն սահմանափակ կիրառում և ունակ չեն լրիվ չափով հաղթահարելու քննարկվող խնդիրը: Հենց այդ պատճառով տեսության և իրավակիրառ գործունեության մեջ բավականաչափ սուր է քննարկվում արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների համակարգի ընդարձակման հիմնախնդիրը՝ ինքնապաշտպանության նոր քրեաիրավական միջոցներով լրացնելու հաշվին:

Ընդունելով քրեական օրենսդրության բարեփոխման և ինքնապաշտպանության միջոցների համակարգի որակական վերափոխման պահանջը՝ այնուամենայնիվ, դժվար է արդարացված համարել իբրև դրա բաղկացուցիչ մասեր կամովին հրաժարվելու, իրավախախտման և անհաղթահարելի ուժի քիչ նշանակություն ունեցող լինելու առանձնացումը, քանի որ դրանք զուրկ են պաշտպանիչ ներուժից<sup>2</sup>:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 113 2019

<sup>1</sup> Տե՛ս Կудрявцев В.Н. Стратегия борьбы с преступностью. М., 2003, էջ 65:  
<sup>2</sup> Տե՛ս Рубцова А.С. Актуальные проблемы уголовного права. М., 2016, էջ 88-89:

Բովանդակային առումով և սոցիալ-իրավական գործառույթների տեսանկյունից արդարացված է իբրև ինքնապաշտպանության հեռանկարային քրեաիրավական միջոց իրավունքը իրականացնելիս վնաս հասցնելու առանձնացումը: Չնայած դրա և ինքնապաշտպանության ավանդական միջոցների միջև էական տարբերությունները (այդ տարբերությունները հատկապես ակնհայտ են վնաս պատճառելու իրավունքի առաջացման հիմքերը դիտարկելիս), չի կարելի չնշել այն հանգամանքը, որ օրինական իրավունքի իրականացման ինստիտուտը կոչված է ապահովելու անձի ֆիզիկական, հոգեկան և սոցիալական անձեռնմխելիությունը և քրեական իրավունքում կատարում է երաշխիքային գործառույթ անձի մի շարք սուբյեկտիվ իրավունքների նկատմամբ՝ կյանքի իրավունքի, առողջության, ազատության, անձնական անձեռնմխելիության, պատվի, արժանապատվության իրավունքի և այլն<sup>3</sup>:

Ընդունելով ներկայացված խնդրի շրջանակներում օրինական իրավունքի իրականացման իրավական երևույթի քննարկման անհրաժեշտությունը՝ չի կարելի չնշել որոշակի հակասություններ ու հիմնախնդիրները, որոնք առկա են դրա տեսական մշակման մեջ: Այս առումով քրեական իրավունքն սկսում է դիտվել իբրև իրավունքի ունիվերսալ ճյուղ, քանի որ ոչ քաղաքացիական, ոչ վարչարարական իրավունքը որպես իրենց կարգավորման առարկա չունեն քրեական պատասխանատվության հիմքերը քրեական պատասխանատվությունից ազատումը կամ արարքի հանցավորության բացառումը:

Սահմանելով անձի ինքնապաշտպանության իրավունքն իբրև պետության կողմից երաշխավորված և իրավական շրջանակներով սահմանափակված՝ անձի, հասարակության կամ պետության օրինական իրավունքների ու շահերի պաշտպանության հնարավորություն՝ քրեաիրավական հարաբերությունների շրջանակներում վնաս հասցնելու միջոցով, կարելի է ենթադրել, թե անձի անվտանգության ինքնապաշտպանության քրեաիրավական միջոցներից մեկը իրավունքի իրականացման ժամանակ վնաս հասցնելն է:

Ենթադրում ենք՝ առաջին հերթին հարկավոր է առանձնացնել իրականացվող իրավունքի առկայության հատկանիշը: Դա նշանակում է դրա՝ որոշակի անձին՝ իրավունքի սեփականատիրոջը, փաստացի պատկանելիությունը:

Օրենսդիրը, կարգավորելով անձի իրավաբանական իրավունքը, սահմանում է դրա իրականացման սահմանները: Հենց այդ սահմաններն են սահմանում իրավունքի իրականացման հիմքը բնութագրող երկրորդ հատկանիշը՝ իրավունքի իրականացման իրականությունը: Նշենք, որ իրավունքի տեսության մեջ այդ հատկանիշը հաճախ նույնացվում է սկզբունքորեն այլ երևույթի՝ իրավունքի իրականության հետ<sup>4</sup>:

Իրավունքի իրականացման իրականություն ասելով՝ առաջարկվում է հասկանալ սեփական օրինական իրավունքի իրականացմանն ուղղված իրավաբանորեն նշանակալից արարքների իրականացումը: Այդ հատկանիշի բացակայության պարագայում բացատրվում է իրավունքի իրականացման փաստը և, որպես հետևանք՝ մերժվում ինքնապաշտպանության դիտարկվող միջոցի իրավական հիմքը:

Շարադրվածը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունը. իրավունքն իրականացնելիս վնաս հասցնելու հիմքը բնորոշող իրավաչափության պայմաններ են իրավունքի *առկայությունն ու* օրինականությունը, ինչպես նաև՝ դրա իրականացման հնարավորությունը: Դա նշանակում է, որ անձն իրավունք ունի պաշտպանելու իր իրավունքները, երրորդ անձանց և պետության շահերը՝ օրենքով պաշտպանված այլ շահերին վնաս հասցնելու միջոցով՝ ՀՀ օրենքով նրան երաշխավորված իրավունքն իրական իրականացնելիս:

Դիմելով այն հատկանիշների վերլուծությանը, որոնք բնորոշում են վնաս պատճառելու իրավասությունը՝ իրավունքն իրականացնելիս, դասակարգենք դրանք վնասի իրավաչափ պատճառման, վերևում առաջարկված կազմի մոդելի հիման վրա և առանձնացնենք այն հատկանիշները՝

- 1) որոնք բնորոշում են վնաս պատճառելու օբյեկտը,

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 113 2019

<sup>3</sup> См. Актуальные проблемы современного уголовного права. М., 2016, էջ 34-35:

<sup>4</sup> См. Актуальные проблемы уголовного права. Отв. ред. Подройкина И.А. М., 2014, էջ 316-317:

- 2) արտացոլում են վնաս պատճառող առարկայի օբյեկտիվ կողմից առանձնահատկությունները,
- 3) իրավունքի իրականացման սուբյեկտի որոշիչ առանձնահատկությունները,
- 4) բնութագրում են վնաս պատճառելու սուբյեկտիվ կողմը:

1. Ավանդական մոտեցման համաձայն՝ օրինական իրավունքն իրականացնելիս կարող է վնաս պատճառվել օրենքով պաշտպանվող ցանկացած շահերի՝ համաչափության հատկանիշի պահպանման պայմանով: Սակայն այս դեպքում լրոգվում է սույն ինստիտուտի և արարքի հանցավորությունը բացառող այլ հանգամանքների միջև: Այդպես, օրինակ՝ ոտնձգությունից պաշտպանվելու համար վնասի պատճառումն անհրաժեշտ պաշտպանության ընթացքում ոչ այլ ինչ է, քան պաշտպանության իրավունք իրականացնելիս վնասի պատճառման մասնավոր դեպք: Տվյալ հանգամանքը պայմանավորում է վնասի պատճառման ինստիտուտի դիտարկումը՝ նեղ և լայն իմաստով իրավունքն իրականացնելիս: Լայն իմաստով դա ընդգրկում է բոլոր հանգամանքները, քանի որ, ընդհանուր առմամբ, արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների էությունը կարելի է սահմանել իբրև քրեական օրենքի կողմից պաշտպանվող հասարակական հարաբերություններին վնասի իրավաչափ պատճառում: Նեղ իմաստով՝ իրավունքն իրականացնելիս վնասի պատճառումը ինքնապաշտպանության ինքնուրույն միջոց է:

Իր ինքնուրույն բնույթի մասին են վկայում հետևյալ հանգամանքները՝

- ա) օրինական իրավունքն իրականացնելիս վնաս հասցնելուն հատուկ են իրավաչափության պայմանները, որոնք բնորոշում են դրա առաջացման հիմքը (իրավունքի առկայությունն ու օրինականությունը. դրա իրականացման իրական լինելը),
- բ) իրավունքի պատճառման իրավաչափության սահմանները կարգավորվում են օրենքներով, որոնք սահմանում են իրավունքի իրականացման կարգն ու հիմքերը՝ առանց հղում կատարելու անհրաժեշտ պաշտպանության և ծայրաստիճան անհրաժեշտության նորմերին: Այլ

կերպ ասած՝ իրավունքի իրականացումը դիտարկվում է իբրև ինքնապաշտպանության ինքնուրույն միջոց՝ անհրաժեշտ պաշտպանության և ծայրաստիճան անհրաժեշտության հատկանիշների բացակայության դեպքում: Սույն ինստիտուտի ձևավորումը «մնացորդային» սկզբունքով նշանակում է, որ օրինական իրավունքն իրականացնելիս վնաս հասցնելու օբյեկտ կարող են լինել ցանկացած օրինական շահերն ու բարիքները, որոնք ինքնապաշտպանության այլ միջոցների օբյեկտ չեն (անհրաժեշտ պաշտպանության և ծայրաստիճան անհրաժեշտության):

Մասնավորապես՝ իր ամուսնու և մերձավոր ազգականների դեմ ցուցմունք չտալու օրինական իրավունքն իրականացնելիս օբյեկտ են արդարադատության շահերը: Նմանատիպ օբյեկտ առկա է ամուսնու կամ մերձավոր ազգականի կողմից կատարված հանցագործության նախկինում չխոստացած քողարկման իրավիճակում:

2. Իրավունքն իրականացնելիս վնաս պատճառող արարքի օբյեկտիվ կողմը, որպես կանոն, դիտվում է դրա համաչափության ու ժամանակին լինելու դիրքերից: Օրինական իրավունքի իրականացման իրավաչափության պայմանների շարքը հարկավոր է դասել հետևյալ պայմանները. ա) եթե որևէ իրավունքի գործողությունը սահմանափակված է արտաքին գործոնների գոյությամբ, ապա կարող է իրականացվել միայն այդ գործոնի գոյության ընթացքում. օրինական իրավունքի իրականացման ժամանակային սահմանը, բ) եթե քրեականորեն պաշտպանվող օբյեկտիվ հասցվող վնասի չափը կախված է արտաքին գործոնից, ապա պետք է պահպանվի օրենքով կարգավորված համաչափությունը՝ օրինական իրավունքի իրականացման ինտենսիվ սահմանը:

3. Իրավունքն իրականացնելիս վնասի ավելի մանրամասն պատճառումը կարող է դիտարկվել օբյեկտիվ կողմի պարտադիր ու ֆակուլտատիվ հատկանիշների վերլուծության միջոցով. ա) օբյեկտիվ կողմից վնասի հատկացումը իրավունքն իրականացնելիս կարող է իրականացվել ինչպես գործողության ձևով (մտերիմ ազգականի հանցագործության նախապես

չխոստացած քողարկումը), այնպես էլ՝ անգործության ձևով (վկայի՝ ցուցմունքներ տալուց հրաժարվելը)։ Բ) ինչ վերաբերում է հասցված վնասի բնույթին՝ այստեղ, մենք կարծում ենք՝ հարկավոր է առանձնացնել դրա համաչափության երկու պայմանը.

- իրավունքն իրականացնելիս վնաս պատճառելու թույլատրելիությունը նշանակում է, որ վնասի բնույթը չի կարող անցնել իրականացվող իրավունքը կարգավորող օրենքով սահմանված սահմաններից.
- վնասի բավարար լինելը տեղի է ունենում այն դեպքերում, երբ իրավաչափ կերպով հասցված վնասի չափը օրենքը կապում է արտաքին գործոնի վտանգի հետ:

4. Վնասի բավարարության գնահատականն ուղղակիորեն կապված է իրավունքի իրագործման հանգամանքի հետ: Վնաս պատճառող արարքի իրավաչափության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, եթե իրավունքն իրականացնելիս կիրառվող եղանակները, գործիքներն ու միջոցները համապատասխանել են դրա իրականացման իրավիճակին, իսկ իրավատիրոջ կողմից դրված նպատակների նվաճումը չէր կարող լինել առանց օրենքով պաշտպանվող երրորդ անձանց, հասարակության և պետության շահերին վնաս հասցնելու: Մեր կողմից անցկացված ազգային օրենսդրության և դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց տվեց, որ վնասի պատ-

ճառման իրավաչափության պայմանները որոշելիս, որպես կանոն, օգտագործվում է վնասի թույլատրելիության սկզբունքը և անտեսվում՝ վնաս պատճառելու բավարարության (անհրաժեշտության) սկզբունքը, ինչը դժվար թե կարելի է հիմնավորված համարել: Այդպիսի մոտեցման պարագայում նվազեցվում են վնաս պատճառող արարքի համաչափության չափանիշները և, որպես կանոն՝ իրավունքի չարաշահումը գնահատվում է իբրև դրա իրականացման իրավաչափ եղանակ:

5. Վնաս պատճառող արարքի կատարման ժամանակը քրեական-իրավական նշանակություն է ձեռք բերում ժամանակի որոշակի շրջանակներով անձի օրինական իրավունքը սահմանափակելիս: Այս դեպքում նպատակահարմար է խոսել իրավաչափության լրացուցիչ պայմանը՝ իրավունքն իրագործելիս վնաս պատճառելու ժամանակին լինելու մասին: Դեռևս չառաջացած կամ օրինական ուժը կորցրած իրավունքն իրականացնելիս վնաս հասցնելը բացառում է արարքի իրավաչափությունը և ենթակա որակման ընդհանուր հիմունքներով:

Ընդհանուր առմամբ՝ կարելի է պնդել, որ օբյեկտիվ կողմի տեսակետից իրավաչափ կարելի է ճանաչել այն արարքը (գործողությունը կամ անգործությունը), որը համաչափ (թույլատրելի ու բավարար) վնաս է հասցնում պաշտպանվող շահերին՝ սեփական օրինական իրավունքը՝ օրենքով սահմանված ժամանակաշրջանում իրականացնելիս:





**ՍՈՒԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՀՀ հատուկ քննչական ծառայության իրավական ապահովման և արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ,  
Հայաստանի ամերիկյան համալսարանի  
իրավագիտության ֆակուլտետի մագիստրոս

**ՍՈՒՏ ՅՈՒՅՄՈՒՆՔ ԿԱՍ ԿԵՂԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՍ  
ԱԿՆՀԱՅՏ ՍԽԱԼ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՆՅԱԿԱԶՄԻ  
ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՆՈՐՄԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ  
ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐ**

2003 թվականի ապրիլի 18-ին ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածում նախատեսվել է սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն տալու կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու հանցակազմը: Քննարկվող հանցակազմը քրեական պատասխանատվություն է նախատեսում քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով սուտ ցուցմունք տալու, քրեական գործով վկայի կամ տուժողի կողմից սուտ ցուցմունք տալու, քրեական կամ քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, քաղաքացիական դատավարության գործով մասնագետի կողմից ակնհայտ կեղծ բացատրություն տալու, թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար: Հոդվածի շրջանակներում նախատեսված է խրախուսական նորմ, որը նախքան ներկայիս օրենսդրական ձևակերպումն ստանալը որոշ փոփոխությունների է ենթարկվել:

Նախկին (2003 թվականի) խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածում սահմանված խրախուսական նորմը նախատեսել է քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն ցուցմունք տալուց հրաժարված անձի համար, եթե նա նախնական քննության կամ դատական քննության ընթացքում, մինչև դատարանի կողմից դատավճիռ կամ որոշում կայացնելը, կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության կամ սխալ թարգմանության մասին: Նշված կարգավորման պայմաններում խրախուսական նորմը տարածվել է ցուցմունք

տալուց հրաժարված անձանց վրա, մինչդեռ նույն հոդվածի դիսպոզիցիան պատասխանատվություն է նախատեսել այլ արարքի՝ սուտ ցուցմունք տալու համար, որպիսի պայմաններում նշված ձևակերպմամբ խրախուսական նորմը անհասկանալի և ոչ կիրառելի է եղել:

Գործող խմբագրմամբ քննարկվող հոդվածում հստակեցվել են ինչպես այն սուբյեկտների շրջանակը, ում նկատմամբ տարածվում է խրախուսական նորմը, այնպես էլ անձին պատասխանատվությունից ազատելու պայմանները:

Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված հիմքով անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իր արարքը նշանակություն չէր կարող ունենալ գործի լուծման համար, կամ նա նախնական քննության կամ դատական քննության ընթացքում մինչև դատարանի կողմից դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելը կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության կամ սխալ թարգմանության մասին:

Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ նորմը կրկին զերծ չէ վիճահարույց ձևակերպումներից, որոնք, իրենց հերթին՝ ևս խնդիրներ են առաջացնում տվյալ խրախուսական նորմի կիրառման դեպքերում:

Այսպես՝ քննարկման առարկա խրախուսական նորմն առավելապես խնդրահարույց է քրեական պատասխանատվությունից ազատելու համար նախատեսված պայմանների տեսանկյունից: Մասնավորապես՝ նորմը, ինչպես արդեն նշվեց, առանձնացնում է երկու պայման, որոնք անհնարին են դարձնում անձին

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 113 2019

քրեական պատասխանատվության ենթարկելը: Այդ պայմաններն են. առաջին՝ **անձի արարքը նշանակություն չէր կարող ունենալ գործի լուծման համար**, երկրորդ՝ **անձը նախնական քննության կամ դատական քննության ընթացքում մինչև դատարանի կողմից դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելը կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության կամ սխալ թարգմանության մասին:**

Քանի որ նշված պայմաններն իրարից անջատված են «կամ» շաղկապով, դրանցից որևէ մեկի առկայությունն արդեն իսկ բավարար է անձին սուտ ցուցմունք, կեղծ եզրակացության տալու կամ սխալ թարգմանության դեպքում քրեական պատասխանատվության չենթարկելու համար:<sup>1</sup>

Անդրադառնալով յուրաքանչյուր պայմանի և դրանում տեղ գտած ոչ հստակ ու վիճելի ձևակերպումներին՝ հարկ է նշել, որ «**արարքը նշանակություն չէր կարող ունենալ գործի լուծման համար**» կարգավորումը խիստ վերացական է և անորոշ:

Այս կապակցությամբ քննարկման ենթակա է այն հարցը, թե ի՞նչ ցուցմունքները կարող են գործի լուծման համար նշանակություն ունենալ, որո՞նք՝ ոչ, ինչից ելնելով էլ՝ ի՞նչ դեպքում անձի արարքը գործի լուծման համար կարող է նշանակություն ունենալ, ի՞նչ դեպքում՝ ոչ:

Հատկանշական է, որ գործի լուծման համար նշանակություն կարող են ունենալ միայն այն ցուցմունքները, որոնք տվյալ գործով ապացուցման առարկային վերաբերող տեղեկություններ են պարունակում: Այս դեպքում հարց է առաջանում՝ արդյոք անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի առկայության մասին կարող է առհասարակ խոսք լինել, եթե անձը սուտ տվյալներ է հաղորդել այնպիսի հանգամանքների մասին, որոնք չեն վերաբերում գործով ապացուցման ենթակա հանգամանքներին և նշանակություն չեն կարող ունենալ գործի լուծման համար: Կարծում ենք՝ այսպիսի դեպքերում նախ և առաջ պետք է քննարկել անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նա-

խատեսված հանցագործության *հանցակազմի* առկայության հարցը, քանի որ նման պայմաններում անձի արարքն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում և հանցագործություն համարվել չի կարող:

Միևնույն ժամանակ՝ հնարավոր են իրավիճակներ, երբ անձի արարքը, այն է՝ նրա կողմից քրեական, քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով տրված ցուցմունքը, թեև վերաբերել է գործով ապացուցման առարկային և էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար, սակայն վարույթն իրականացնող մարմինները դրանք արժանահավատ չեն գնահատել և այդ գործերով կայացված վերջնական ակտերի հիմքում չեն դրել:

Այսպիսի պայմաններում ստացվում է մի իրավիճակ, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցն ուղղակիորեն պայմանավորվում է վարույթն իրականացնող մարմնի՝ տվյալ գործով ձեռք բերված փաստական տվյալների սուբյեկտիվ ընկալման և գնահատման հանգամանքով, ինչը քննարկվող խրախուսական նորմի կիրառման համար չի կարող հավասար պայմաններ ապահովել:

Հատկանշական է, որ ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի շրջանակներում քննարկվող հանցավոր արարքի համար նույնպես նախատեսված է պատասխանատվություն: Մասնավորապես՝ նախագծի 460-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է սահմանում քրեական, քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարույթով սուտ ցուցմունք կամ փորձագետի կողմից կեղծ եզրակացություն տալու կամ թարգմանչի կողմից սխալ թարգմանություն կատարելու համար, **եթե դա կարող էր նշանակություն ունենալ գործի լուծման համար:**

Ստացվում է, «**եթե դա կարող էր նշանակություն ունենալ գործի լուծման համար**» օրենսդրի նախատեսած պայմանը գործող օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասում շարադրված խրախուսական նորմի նույն պայմանի այլ ձևակերպումն է՝ արդեն հանցագործության դիսպոզիցիայի շրջանակներում, ինչը նույնպես զերծ չէ վերը բարձրացված խնդրա-

<sup>1</sup> Տե՛ս «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասը:

հարույց իրավիճակներից՝ այս դեպքում արդեն արարքի քրեաիրավական որակման տեսանկյունից:

Այսպիսով՝ կարծում ենք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի քննարկվող՝ «անձի արարքը նշանակություն չէր կարող ունենալ գործի լուծման համար» պայմանի նախատեսումը արդարացված չէ՝ պայմանավորված դրա կիրառելիության հետ կապված վերը ներկայացված հիմնախնդիրներով:

Համեմատության կարգով նշենք, որ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 307-րդ հոդվածը, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում նախաքննության և դատական քննության ընթացքում վկայի, տուժողի կամ մասնագետի կողմից սուտ ցուցմունք, փորձագետի կողմից կեղծ եզրակացություն կամ սուտ ցուցմունք տալու, թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար, սահմանում է անձին քրեական պատասխանատվությունից ազատելու միայն մեկ պայման, այն է՝ երբ վերջինս նախաքննության կամ դատաքննության փուլում՝ մինչև դատական ակտի կայացումը, կամովին հայտնել է ցուցմունքի՝ սուտ, եզրակացության՝ կեղծ կամ թարգմանության սխալ լինելու մասին:<sup>2</sup> Այսինքն՝ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքը բացառել է անձի կողմից տված ցուցմունքի՝ **գործի լուծման համար նշանակություն չունենալը որպես խրախուսական նորմի կիրառման հիմքի նախատեսումը:**

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի երկրորդ պայմանին՝ նշենք, որ այդ պայմանը նախատեսում է անձին քրեական պատասխանատվության ենթարկելու անհնարինության մեկ այլ հիմք, այն է՝ անձի կողմից գործի նախնական քննության կամ դատական քննության փուլերում, ընդհուպ մինչև դատարանի կողմից դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելը կամովին իր տված սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության կամ սխալ թարգմանության մասին հայտնելը:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ քննարկվող հանցակազմի և

դրա խրախուսական նորմի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներին ևս: Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը Կարեն Սարուխանյանի վերաբերյալ քրեական գործի շրջանակներում կայացված որոշմամբ արտահայտել է դիրքորոշում առ այն, որ. «(...) ՀՀ գործող քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավադրույթի լույսի ներքո նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի մեկնաբանությունից բխում է, որ.

ա) սուտ ցուցմունք տալու հանցակազմի պարտադիր տարր է անձի կողմից տված ցուցմունքի՝ հիմնական գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունենալու հանգամանքը, որը, անհերքելիորեն, կարող է պարզաբանվել միայն հիմնական գործով ձեռք բերված ապացույցների հետազոտմամբ և գնահատմամբ,

բ) հիմնական գործի քննության ընթացքում, ընդհուպ մինչև դատարանի կողմից վերջնական դատական ակտ կայացնելը, անձը հնարավորություն ունի հարցաքննվելու և այլ ցուցմունք տալու կամ կարող է հայտնել իր տված ցուցմունքի սուտ լինելու մասին:

Վճռաբեկ դատարանը համարում է, որ նշված երկու դեպքում էլ, քանի դեռ իրագործված չեն օրենսդրի կողմից առաջադրված պայմանները, խոսք չի կարող լինել սուտ ցուցմունք տալու հանցակազմի առկայության մասին:

Խնդրո առարկա հարցի կապակցությամբ օրենսդրի նոր մոտեցումը պայմանավորված է այնպիսի հիմնարար Սահմանադրական արժեքներով, ինչպիսիք են արդարադատության իրականացումը միայն դատարանների կողմից (ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդված) և արդար դատաքննությունը (ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդված), ինչպես նաև այդ Սահմանադրական արժեքների հետևողական կենսագործման հրամայականով:

Մասնավորապես՝ միայն դատարանի կողմից արդարադատության իրականացումը ենթադրում է, թե մինչդատական վարույթում արված հետևությունները նախնական բնույթ ունեն և փաստացի չեն կարող փոխարինել վերջնական դատական ակտով կատարվող հետևությունները: Եթե որևէ ցուցմունք գնահատվի որ-

<sup>2</sup> Տե՛ս Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 307-րդ հոդվածը:

պես «սուր» նախքան տվյալ գործով վերջնական դատական ակտով այդ ցուցմունքի գնահատումը, ապա դա կխաթարի արդարադատության Սահմանադրական գործառույթի բուն էությունը:

Բացի այդ՝ եթե քրեական գործով մինչդատական վարույթում քրեական հետապնդման մարմինը հնարավորություն ունենա քրեական հետապնդում հարուցելու ենթադրաբար սուր ցուցմունք տված քրեական դատավարությանը մասնակցող անձի նկատմամբ, ապա քրեական հետապնդման ենթարկվող անձը կարող է արդարացված մտավախություն ունենալ առ այն, որ դա իր հանդեպ հոգեբանական ճնշում է՝ մեղադրանքի կողմի համար ցանկալի ցուցմունքներ ստանալու նպատակով: Այդ մտավախությունից դրդված՝ քրեական հետապնդման ենթարկվող, դատավարությանը մասնակցող անձը կարող է փոխել իր ցուցմունքները մեղադրանքի կողմի համար ցանկալի եղանակով՝ անգամ քրեական հետապնդման մարմնի համապատասխան աշխատակիցների բարեխղճության պարագայում: (...) Վճռաբեկ դատարանը համարում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված սուր ցուցմունք տալու հանցակազմի առկայության կամ բացակայության մասին հետևության հնարավոր կլինի հանգել միայն համապատասխան դատական ակտը կայացնելուց հետո: (...)»:<sup>3</sup>

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի պայմանները, եզրակացրել է, որ քանի դեռ դրանք իրագործված չեն, մասնավորապես՝ գործով դատական ակտ չի կայացվել, առհասարակ խոսք չի կարող լինել սուտ ցուցմունք տալու հանցակազմի առկայության մասին, մինչդեռ քննարկվող հանցագործությունն ավարտված է համարվում սուտ բացատրություն, սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն տալու կամ սխալ թարգմանություն կատարելու պահից, և այդ պահից էլ հնարավոր է փաստել անձի արարքում հիշյալ հանցագործության հանցակազմի բոլոր տարրերի առկայության հանգամանքը: Սա-

կայն օրենսդրի կողմից խրախուսական նորմի նման պայմանի նախատեսման դեպքում ընդունելի համարելով Վճռաբեկ դատարանի հիշյալ դիրքորոշումն այն առումով, որ չեն կարող անձանց համար անհավասար պայմաններ ստեղծվել խրախուսական նորմի կիրառման քրեադատավարական ընթացակարգում և անձինք նախատեսվող դատական ակտի բացակայության պատճառաբանությամբ չեն կարող զրկվել իրենց նկատմամբ խրախուսական նորմի կիրառման հնարավորությունից՝ այնուամենայնիվ, պետք է նշել, որ այսպիսի պայմանի նախատեսումը հակասում է պատասխանատվության անխուսափելիության կարևորագույն սկզբունքի իրագործմանը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն իր վերլուծություններում հաշվի չի առել այն իրավիճակը, երբ քրեական գործի վարույթը, որի ընթացքում վկան կամ տուժողը տվել են սուտ ցուցմունքներ, փորձագետը տվել է կեղծ եզրակացություն, կամ թարգմանիչը կատարել է սխալ թարգմանություն, **կարծվել է**, որպիսի իրավիճակը բացառում է վերջնական դատական ակտի առկայության հնարավորությունը: Հարց է առաջանում՝ արդյոք այս դեպքում չեն խախտվում արդարության, պատասխանատվության անխուսափելիության սկզբունքների ապահովման երաշխիքները, առավել ևս այն դեպքերում, երբ անձի տված ցուցմունքը կամ փորձագետի տված եզրակացությունը ազդել են գործով ճշմարտության բացահայտման վրա: Ակնհայտ է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված դիրքորոշմամբ առաջնորդվելու պարագայում, եթե քննվող քրեական գործով վարույթը դատական քննության փուլ դեռևս չի հասել, անձը չի կարող պատասխանատվության ենթարկվել նախաքննության ընթացքում տված սուտ ցուցմունքի, փորձագետը՝ կեղծ եզրակացության, թարգմանիչը՝ սխալ թարգմանության համար, անգամ այն պայմաններում, երբ կատարված քննությամբ ձեռք բերված մյուս ապացույցներն անհերքելիորեն վկայում են դրանց «սուտ» կամ «կեղծ» լինելու մասին:

Ավելին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն-

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Կարեն Սարուխանյանի վերաբերյալ 2010 թվականի օգոստոսի 27-ի ԼԴ/0301/01/09 որոշում, 22-24-րդ կետեր:

ների վերաբերյալ գործերով կայացված դատական ակտերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ պրակտիկայում դատարանները յուրովի են մեկնաբանում քննարկվող հանցագործության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և անձի արարքում հիշյալ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի առկայությունն անմիջականորեն կապում են դատարանի կողմից դատական ակտում անձի ցուցմունքը սուտ գնահատելու հանգամանքի հետ:

Այսպես՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը, քննարկելով Արտակ Մարտիրոսյանի վերաբերյալ թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով սուտ ցուցմունք տալու մեջ մեղադրվող Նարինե Ասատրյանի վերաբերյալ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքը, եզրակացրել է, որ վերջինիս վերաբերյալ կայացված արդարացման դատավճռը հիմնավոր և պատճառաբանված է: Դատարանը, ի թիվս այլ վերլուծությունների՝ նշել է հետևյալը. «(...)Ավելին՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն իր՝ 2014 թվականի մարտի 31-ի թիվ ԵՇԴ/0092/01/12 դատավճռում Նարինե Ասատրյանի կողմից տրված ցուցմունքը չի գնահատել որպես անարժանահավատ կամ սուտ ցուցմունք:(...)»:<sup>4</sup>

Կարծում ենք՝ հիշյալ հանցակազմի նման մեկնաբանությունը ճիշտ չէ, քանի որ դատարանը, հիմնական գործով կայացված դատական ակտում այդ գործով անձի տված ցուցմունքը սուտ, եզրակացությունը՝ կեղծ, թարգմանությունը՝ սխալ գնահատելով, ըստ էության՝ հաստատում է վերջիններիս կողմից ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործություն կատարելու փաստը, ինչը կարող է դիտարկվել քրեադատավարական հիմնարար սկզբունքի՝ անմեղության կանխավարկածի խախտում: Ավելին՝ նման իրավիճակում դատական ակտը նախադատելի նշանակություն է ձեռք բերում, և քրեադատավարական պատշաճ ընթացակարգով ապացույցներ հավաքե-

լուն, ստուգելուն, գնահատելուն, հանցանքի կատարման մեջ անձի մեղավորությունն ապացուցելուն ուղղված քննչական գործողությունների կատարումն իմաստագրվում է:

Վերադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի երկրորդ պայմանի առկա ձևակերպմանը՝ պետք է նշել, որ դա որոշ տարրնկալումների տեղիք է տալիս, քանի որ հասկանալի չէ, թե՛ «**ընդհուպ մինչև դատարանի կողմից դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելը**» ձևակերպման ներքո ինչ իրավիճակներ է նախատեսել օրենսդիրը: Հատկանշական է, որ գործող իրավակարգավորումների պայմաններում անձը նույն գործով կարող է ցուցմունք տալ նաև վերադաս դատական ատյաններում և այդ ատյաններում նույնպես հնարավորություն ստանալ՝ մինչև դատական ակտի կայացումը հայտնելու իր տված ցուցմունքի սուտ լինելու մասին: Կարծում ենք՝ այս պայմաններում քննարկվող խրախուսական նորմի նշված ձևակերպումը առաջ է բերում մի շարք հարցեր նաև այն առումով, թե անձի՝ իր տված ցուցմունքի սուտ լինելու մասին հայտնելու իրավունքն առկա է մինչև առաջին, թե՛ վերադաս դատական ատյանների կողմից դատական ակտ կայացնելը: Կարծում ենք՝ հիշյալ հոդվածի խրախուսական նորմի քննարկվող պայմանը պետք է ստանա այնպիսի ձևակերպում, որպեսզի կիրառելի լինի բացառապես այն իրավիճակներում, երբ անձն իր տված սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության կամ սխալ թարգմանության մասին կամովին հայտնել է մինչև առաջին ատյանի դատարանի կողմից դատական ակտի կայացումը:

Այս կապակցությամբ հարկ է նշել նաև, որ անձի՝ իր տված ցուցմունքի սուտ լինելու մասին հայտնելու ժամկետային և ընթացակարգային հնարավորությունների ընդլայնումը և քննարկվող խրախուսական նորմի կիրառումն այն դեպքերում, երբ անձն իր տված ցուցմունքի սուտ լինելու մասին հայտնել է գործը քննող վերադաս դատական ատյանում, կարող է իրավական անորոշություն և անհավասար պայմաններ ստեղծել, ավելին՝ չեզոքացնել խրա-

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ վերաքննիչ դատարանի՝ Նարինե Ասատրյանի վերաբերյալ 2016 թվականի փետրվարի 16-ի ԵՇԴ-0109/01/15 որոշում, 23-րդ կետ:

խուսական նորմի նախատեսման այն նպատակները, որոնք կապված են արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների վաղաժամ բացահայտման, անարդար դատական ակտերի հնարավոր կայացման կանխման և արդարադատության իրականացմանը նպաստելու հետ:

**Եզրակացություն.** Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասում տեղ գտած խրախուսական նորմն ունի մի շարք խնդրահարույց ձևակերպումներ, որոնք նորմի գործնական կիրառության հարցում խնդիրներ

են առաջացնում: Բացի այդ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, փորձելով ապահովել նորմի միատեսակ կիրառելիությունը, դրան իր՝ ԼԴ/0301/01/09 որոշմամբ տվել է մեկնաբանություն, որն էլ, իր հերթին՝ տարընկալումների տեղիք է տալիս:

Ուստի ակներև է քննարկվող խրախուսական նորմի առնչությամբ առկա անհստակությունները վերացնելու նպատակով նորմի ձևակերպումների վերախմբագրման, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նորմին տրված որոշ մեկնաբանություններից հրաժարվելու անհրաժեշտությունը:





ՌՈՒԲԻՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՊՀ, Քաղաքացիական իրավունքի ամբիոն,  
ասպիրանտ

## ԱՌԱՆՅՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՅԱԾ ԵՐԵՒԱՅԻ՝ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ

ՀՀ ընտանեկան օրենսգրքի<sup>1</sup> 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան իրավունք ունի իր իրավունքներն ու շահերը շոշափող ցանկացած հարց լուծելիս ունկնդիր լինելու հարցի քննությանը և արտահայտելու սեփական կարծիքն ընտանիքում, դատական և այլ մարմիններում: Այս իրավունքի ակունքը «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 12-րդ հոդվածն է, որի համաձայն՝ իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային, իսկ երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն: Այդ նպատակով երեխային հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ընթացքում, ներպետական օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով, ունկնդրվելու թե՛ անմիջականորեն, թե՛ իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով: 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքով այս հարցում էական առաջընթաց քայլ կատարվեց: ՀՀ Սահմանադրության<sup>2</sup>

37-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրվեց իր կարծիքն ազատորեն արտահայտելու՝ երեխայի իրավունքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ դեպքերում երեխաներին վերաբերող որոշումներ կայացնելիս դատարանները կամ իրավասու այլ մարմինները երեխայի կարծիքը հաշվի առնելու համար ելակետ են ընդունում որոշակի տարիք: Օրինակ՝ ԱՄՆ-ի մի շարք նահանգներում օրենքները և դատական պրակտիկան թույլ են տալիս վճռորոշ նշանակություն տալ 15 տարեկան և բարձր, մյուսները՝ 12 տարեկան և բարձր երեխաների արտահայտած կարծիքին (թեպետ նշում են, որ 12 տարեկան երեխաների կարծիքին ավելի քիչ նշանակություն է տրվում, քան ավելի մեծերի)<sup>3</sup>: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոչ բոլոր պետություններն են երեխայի կարծիքը հաշվի առնելու հարցում ելնում որոշակի տարիքային շեմից: Օրինակ՝ Շվեդիայում երեխայի լավագույն լինելու իրավունքը ընտանեկան օրենսդրության հիմնարար սկզբունքներից է և հաշվի է առնվում երեխայի հոգաբարձությանը<sup>4</sup>, բնակության վայրին և շփումներին վերա-

<sup>1</sup> ՀՀ ընտանեկան օրենսգրքին ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 09.11.2004 թ., ուժի մեջ է մտել 19.04.2005 թ.: ՀՀՊՏ 2005.01.19/4(376) Հոդվ. 60:  
<sup>2</sup> ՀՀ Սահմանադրությունն ընդունվել է 06.12. 2015թ. հանրաքվեով, ուժի մեջ է մտել 22.12.2015 թ.: ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդվ. 1118:  
<sup>3</sup> Այս մասին տե՛ս Patrick Parkinson, Judy Cashmore & Judi Single, Adolescent's Views on the Fairness of Parenting and Financial Arrangements After Separation, 43 FAM. CT. REV., 2005, էջ 429: Barbara A. Atwood, The Child's Voice in Custody Litigation: An Empirical Survey and Suggestions for Reform, 45 ARIZ. L. REV., 2003, էջ 629, 634: Վերջին աշխատության մեջ հեղինակը, անդրադառնալով երեխաներին հոգաբարձության հանձնելիս նրանց ցանկությունները գնահատելու դատավորների կիրառած ռազմավարությանը և պրակտիկային, նշում է, որ երեխաներին հոգաբարձության հանձնելու որոշում կայացրած և հարցումներին պատասխանած դատավորների 80%-ը նշել են, որ ավելի բարձր տարիքի անչափահասների արտահայտած նախապատվություններին ավելի մեծ նշանակություն են տալիս, մինչդեռ նրանց 40%-ն էլ նշել են, որ 11-ից 13 տարեկան երեխաների կարծիքին նույն կշիռն ու նշանակությունն են տվել:  
<sup>4</sup> Շվեդիայի «Ծնողների և երեխաների մասին» օրենքում խնամակալն ու հոգաբարձուն տարբերվում են ըստ երեխայի նկատմամբ պարտականությունների բնույթի: Հոգաբարձուն, ըստ էության, կրում է երեխայի անձնական իրավունքների իրացման ապահովման պարտականություն՝ խնամքի և դաստիարակության, կրթության, տարբեր հարցերում օժանդակության, բնակության վայրի որոշման: Խնամակալին վերապահված է երեխայի սեփականության կառա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 113 2019

բերող հարցերում, իսկ երեխայի անձնական հարցերին վերաբերող դեպքերում որոշումներ կայացնելիս հոգաբարձուն պետք է երեխայի կարծիքը հաշվի առնի մշտապես՝ ելնելով նրա տարիքից և հասունության աստիճանից («Ծնողների և երեխաների մասին» Շվեդիայի օրենք, 6-րդ գլուխ, 11-րդ բաժին)<sup>5</sup>: Ֆինլանդիայի օրենսդրության մեջ դատարանը հոգաբարձության վերաբերյալ գործերով, երեխայի համաձայնությամբ, կարող է նրան անձամբ լսել, եթե ծանրակշիռ պատճառներ կան կարծելու, թե գործի լուծման համար երեխայի կարծիքը կարևոր է, և այդ լսումը չի կարող վնասել երեխայի շահերին, իսկ երեխայի կարծիքը պետք է հաշվի առնվի հնարավորինս նրա տարիքին և զարգացման աստիճանին համապատասխան<sup>6</sup>: Ինչպես տեսնում ենք՝ վերջին երկու դեպքում կա մեկ հիմնական ընդհանրություն՝ երեխայի կարծիքը հաշվի առնելու հարցում տարիքային սահմանափակումներ չկան, իսկ կարծիքի արժանահավատության չափորոշիչը տարիքը և զարգացման աստիճանն են: Երեխայի կարծիքը հաշվի առնելու հարցում տարիքային սահմանափակումների կիրառումը պայմանավորվում է այն հանգամանքով, որ երեխաներն արժանահավատ վկայություն տալու ընդունակ են դառնում որոշակի տարիքում և (կամ) զարգացման աստիճանում: Ըստ հոգեբանների շրջանում երկար ժամանակ տարածված համոզման՝ մինչև պատանեկության տարիքը երեխաներն ունակ չեն կարևոր հարցերում կատարելու պատճառաբանված ընտրություն կամ տալու արժանահավատ վկայություն<sup>7</sup>: Մինչդեռ՝ իրավական հարթությունում երեխայի՝ իր կարծիքն արտահայտելու հարցի առնչությամբ երկակի մոտեցում կա՝ երեխան իրավասու է կամ իրավասու չէ իր

կարծիքն արտահայտելու<sup>8</sup>: Այս մոտեցմամբ իրավագետները հակադրվում և այլևս ոչ արդիական են դարձնում «*ժամանակի ընթացքում երեխաների ունակությունների զարգացման մասին*» հոգեբանների վկայակոչված ընկալումը:

«*Օրենսդիրն Ընտանեկան օրենսգրքում չի սահմանում նվազագույն տարիք, որից սկսած՝ երեխան իրավունք ունի արտահայտելու իր կարծիքը: Այս հարցի պատասխանը, թերևս, տրված է «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի» 12-րդ հոդվածում, որտեղ երեխայի՝ իր հայացքները ձևակերպելու ունակությունն է համարվում միակ չափանիշը: Այս հարցին պատասխանում է նաև «*Սահմանադրական դատարանը՝ անդրադառնալով Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի սահմանադրաիրավական բովանդակությանը. «Սահմանադրության տվյալ հոդվածը չի նախատեսում տարիքային կամ այլ որևէ սահմանափակում: «Հաշվի առնողի» համար է սահմանված պարտականություն՝ ելնել երեխայի տարիքից և հասունության աստիճանից: «*Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասը հանրային իշխանության վրա դնում է հստակ պարտականություն՝ առաջնահերթ ուշադրության արժանացնել երեխայի շահերը՝ նրան վերաբերող հարցերում: Սահմանադրի նպատակն է երեխային վերաբերող հարցերում տարբեր շահերի առկայության դեպքում առաջնահերթ պաշտպանել երեխայի շահերը*»<sup>9</sup>: Ուստի արդարացի պետք է համարել «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի», «*Օրենսդիրի և Սահմանադրական դատարանի նշված մոտեցումները, քանի որ երեխայի լսելի դառնալու իրավունքը չպետք է պայմանավորել որևէ տարիքային սահմանափակմամբ: Բացի այդ՝***

վարման և նրան ֆինանսական գործընթացներում ներկայացնելու պարտականություն: Այսինքն՝ այստեղ խնամակալության և հոգաբարձության տարանջատման հիմք է ոչ թե խնամարկյալի տարիքը՝ ինչպես ՀՀ-ում, այլ՝ խնամակալի կամ հոգաբարձուի գործունեության նպատակը՝ անձնական ոչ գույքային թե գույքային իրավունքների իրացումը և պաշտպանությունը:

<sup>5</sup> Տե՛ս Swedish Children and Parents Code, հասանելի է <http://ceflonline.net/wp-content/uploads/Sweden-Parental-Responsibilities-Legislation.pdf> հղումով՝ 21. 06. 2019 թվականի դրությամբ:

<sup>6</sup> Տե՛ս Act on Child Custody and Right of Access (361/1983; amendments up to 436/2009 included), հասանելի է [https://www.finlex.fi/fi/laki/kaannokset/1983/en19830361\\_20090436.pdf](https://www.finlex.fi/fi/laki/kaannokset/1983/en19830361_20090436.pdf) հղումով՝ 21.06.2019 թվականի դրությամբ:

<sup>7</sup> Տե՛ս Jan Pryor & Robert E. Emery, Children of Divorce, in RETHINKING CHILDHOOD (Peter B. Pufall & Richard P. Unsworth eds.), 2001, էջ 171:

<sup>8</sup> Տե՛ս Patrick Parkinson & Judy Cashmore, The Voice of A Child in Family law Disputes, Oxford University Press 2009, էջ 4:

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2016 թվականի դեկտեմբերին 20-ի թիվ ԱԴՈ-13333 որոշումը: <http://www.concourt.am/>

անհրաժեշտ է տարբերել երեխայի կարծիքը հաշվի առնելը և նրա համաձայնությունը: Առաջին դեպքում կարող է երեխայի կարծիքից տարբերվող որոշում կայացվել, իսկ երկրորդ դեպքում՝ միայն երեխայի համաձայնությամբ<sup>10</sup>:

Ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է. «Տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է համարվում՝ կապված խղճի ազատության հետ, որոշակի միջոցառումներին մասնակցելու, արտադպրոցական կրթություն ստանալուց հրաժարվելու, ծնողներից որևէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու, օրենքով նախատեսված այլ դեպքերում»:  
Մինչդեռ՝ առանց ծնողական խնամքի մնացած և խնամքի ու դաստիարակության նպատակով խնամակալության, խնամատար ընտանիք հանձնման գործընթացում գտնվող երեխայի կարծիքը պետք է հաշվի առնել ոչ միայն նշված դեպքերում, այլև դա չպետք է պայմանավորել յուրաքանչյուր դեպքի՝ անպայմանորեն օրենքում ամրագրված լինելու հանգամանքով: Խոցելի և հոգեկան առավել զգայուն վիճակում գտնվող երեխաների շահերը կարող են շոշափվել այնպիսի կարևոր հարցերում, ինչպիսիք են՝ խնամքի և դաստիարակության նպատակով որոշակի անձի խնամակալությանը, խնամատարությանը հանձնելիս, նախկինում նշանակված խնամակալին կամ հոգաբարձուին պարտականությունների կատարումից ազատելիս (այս հիմքով ազատման դեպքում նշվում է «*Եթե դա չի հակասում երեխայի շահերին*») (Քաղ. օր., 41-րդ հոդվ., 2-րդ մաս), ազգականների խնամակալությանը (հոգաբարձությանը) հանձնելու հիմքով խնամատարության պայմանագիրը վաղաժամկետ լուծելիս (Ընտ. օր. 137.1-ին հոդվ., 6-րդ

մաս, 3-րդ կետ) և այլն: Այս և այլ դեպքերում երեխայի կարծիքը հաշվի չառնելը նրան կարող է ենթարկել լուրջ հոգեկան ցնցումների, ինչն էլ նշանակում է, որ այդ դեպքերում երեխայի շահերի խախտումները ամենևին բացառված չեն: Հատկապես, որ օրենսդիրը, միայն տասը տարին լրացած երեխայի համաձայնությամբ՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի կամ դատարանի կողմից որոշման կայացման հնարավորությունը կախվածության մեջ է դրել բացառապես «այդ դեպքերի» օրենքով նախատեսված լինելու հանգամանքից<sup>11</sup> (Ընտ. օր., 44-րդ հոդվ., 3-րդ մաս):

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ խնամակալության, խնամատարության հանձնելիս երեխայի կարծիքը հաշվի առնելու առնչությամբ կա ձևավորված երկու հակադիր կարծիք: Այսպես՝ խնամակալության, խնամատարության սահմանման գործընթացին երեխայի մասնակցությունը քննադատողները կարծում են, թե իրավասու մարմնում արտահայտված երեխայի կարծիքը, որով նա իր խնամքն ու դաստիարակությունն իրականացնելու հարցում նախապատվություն է տալիս որոշակի անձի, կարող է խնամակալ, խնամատար ծնող դառնալու հավակնող անձանց կողմից երեխայի վրա հնարավոր ճնշում գործադրելու առիթ դառնալ: Ըստ ամերիկացի հայտնի հոգեբան Ռիչարդ Ուորշակի՝ որքան մեծ նշանակություն տրվի երեխայի արտահայտած կարծիքին, այնքան ավելի մեծ է խնամակալությանը հավակնող անձի կողմից երեխային մոլորեցնելու կամ ճնշելու ռիսկը<sup>12</sup>: Չանտեսելով հնչեցված մտահոգության մեջ առկա օբյեկտիվ հիմքերը և իրատեսորեն գնահատելով հնարավոր ռիսկերը՝ կարծում ենք, որ երեխայի կարծիքի ձևա-

<sup>10</sup> Стен Семейное право, Учебник, под ред. П.В. Крашенинникова, М., Статут, 2008, էջ 155:

<sup>11</sup> Եթե Ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի 3-րդ մասում հստակություն է առկա դատարանի և խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից որոշում կայացնելու դեպքերում, ապա խնամատարության հանձնելու դեպքում ստացվում է, որ երեխայի կարծիքին որևէ նշանակություն կարող է չտրվել: Քանի որ այս դեպքում առկա է ոչ թե որոշում, այլ՝ պայմանագիր, որն Ընտանեկան օրենսգրքի 137.1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կնքվում է ծնողների (երեխայի այլ օրինական ներկայացուցչի), խնամատար ծնողի և Հայաստանի Հանրապետության մարզերում՝ մարզպետարանների, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի միջև: Ստացվում է, որ Ընտանեկան օրենսգրքում՝ որպես երեխայի կարծիքը հաշվի առնելու ելակետ ամրագրված «տասը տարին լրացած լինելու» հանգամանքը խնամատարության հանձնվող երեխայի դեպքում նրան չի ընձեռում իր կարծիքն արտահայտելու իրավունք, իսկ խնամատարության պայմանագրի կողմին չի պարտավորեցնում հաշվի առնել երեխայի կարծիքը: Մեր կարծիքով՝ ստեղծված իրադրությունը, առաջացնելով անհավասար իրավիճակ, վստահաբար չի բխում երեխայի շահերից:

<sup>12</sup> Стен Richard A. Warshak, Payoffs and Pitfalls of Listening to Children, 52 FAM. REL. (2003), էջ 373- 375:

վորման վրա ազդեցությունները կարող են մի դեպքում ուղղակի և տեսանելի լինել, մեկ այլ դեպքում՝ իրենց համար ցանկալի կարծիքի ձևավորման վրա կարող են ազդել նաև բազմաթիվ աննկատ մեթոդներով: Նման դեպքերում, իհարկե, հիմնականում երեխայի արտահայտած կարծիքում կարտացոլվեն առավել մեծ ազդեցություն գործած անձի մտքերը, վարքագիծը, կարծիքը՝ այդպիսով երեխայի՝ կարծիքի արտահայտման, իրավասու մարմնի կողմից լսելու և հաշվի առնելու ողջ գործընթացը դարձնելով ձևական և ոչ նպատակային: Բացառված չէ նաև, որ այս մանկապլացիաների հետևանքով երեխան հանգի այն համոզման, որ նման վարքագիծ դրսևորած անձն առավել բացասաբար կազդի իր շահերի վրա՝ նախապատվությունը տալով մյուսին: Չբացառելով նշված իրավիճակների դրսևորման իրական հավանականությունը՝ կարծում ենք, որ առհասարակ բոլոր դեպքերում երեխայի արտահայտած կարծիքին, իսկ տվյալ դեպքում՝ որոշակի անձի խնամակալության, խնամատարության ներքո գտնվելու հարցում երեխայի արտահայտած նախապատվության հիման վրա կարող է նրա շահերին չհամապատասխանող որոշում կայացվել բոլոր դեպքերում, եթե իրավասու մարմնի կողմից ընդունվի առանց համապատասխան մասնագետների (բժշկի, հոգեբանի, մանկավարժի) կողմից տրված մասնագիտական եզրակացությունների, առանց դրանց և տվյալ դեպքի իրավագոր, մասնագիտացված խնամակալության և հոգաբարձության մարմնի<sup>13</sup> կողմից համապարփակ ուսումնասիրության: Հակառակ դեպքում՝ կարող է ստեղծվել մի իրավիճակ, որ երեխային կտրվի «ուժի և իշխանության» այնպիսի մակարդակ, որը նա ի զորու չէ

կրելու»<sup>14</sup>: Կարծում ենք, որ նման ոչ իրավաչափ, կամայական իրավիճակների կանխմանն են ուղղված ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի 1.1-ին մասի դրույթները, որոնց համաձայն՝ երեխայի կարծիքը լսելիս իրավասու մարմինն օրենքով նախատեսված դեպքերում ներգրավում է մանկական հոգեբանի կամ մանկավարժի կամ սոցիալական աշխատողի, այլ հարց է, որ «այդ դեպքերն» ընտանեկան օրենսգրքով նախատեսված չեն: Խնամակալության, խնամատարության հանձնման գործընթացին երեխայի կարծիքը հաշվի առնելու կողմնակիցները միջ են համարում այն պնդումները, որ երեխաները չեն ցանկանում մասնակցել իրենց՝ խնամակալության, խնամատարության հանձնվելու իրավական գործընթացներին՝ նշելով որ երեխաները ցանկանում են, որ իրենց ձայնը լսելի լինի և լքջորեն ընդունվի<sup>15</sup>, այլ հարց է, որ երեխաները չեն ցանկանում որոշում կայացնողներ լինել<sup>16</sup>: Իրավացի պետք է համարել այս տեսակետի կողմնակիցներ Պատրիկ Պարկինսոնի և Ժյուդի Քեշմորի հետևյալ պնդումը. «Լսված լինել և իրենց կարծիքը հաշվի առնել... սա որոշման կայացման գործընթացի արդարացիության ընկալման հիմնական որոշիչներից է, նույնիսկ եթե արդյունքը ցանկալի չլինի»<sup>17</sup>: Միանալով երկրորդ տեսակետի կողմնակիցներին՝ կարծում ենք, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների զարգացման դինամիկ, ինտերակտիվ գործընթացում ուրույն և խոր ազդեցություն ունեն նրանց կյանքում այնպիսի նշանակալից դեր ունեցող մարդիկ, ինչպիսիք խնամակալն ու խնամատար ծնողն են: Ուստի չպետք է թերագնահատել իրենց կյանքի ամենից կարևոր հարցերում կարծիք արտահայտելու՝ երեխաների կարողություն-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 113 2019

<sup>13</sup> Խնամակալության և հոգաբարձության մասնագիտացված մարմնի ստեղծման անհրաժեշտության մասին առավել մանրամասն տես Ռ. Վ. Պետրոսյան, Խնամակալությունը և հոգաբարձությունը, խնամատար ընտանիքը որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպմանն ուղղված ինստիտուտներ (իրավահամեմատական վերլուծություն), Երևանի պետական համալսարան, Իրավագիտության ֆակուլտետ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2(2) 2018, Երևան, 2019, էջ 153-176:

<sup>14</sup> Տես Patrick Parkinson & Judy Cashmore, նշված աշխատ., էջ 16:

<sup>15</sup> Տես Ian Butler, Lesley Scanlan, Margaret Robinson, Gillian Douglas, & Mervyn Murch, Children's Involvement in Their Parents' Divorce: Implications for Practice, 16 CHILD & SOC'Y (2002), էջ 89: Megan Gollop, Anne B. Smith, & Nicola J. Taylor, Children's Involvement in Custody and Access Arrangements After Parental Separation, 12 CHILD & FAM. L.Q. (2000) էջ 383: Carol Smart & Bren Neale, It's My Life, Too: Children's Perspectives on Post-Divorce Parenting, 30 FAM. L., 2000, էջ 163:

<sup>16</sup> Տես Megan Gollop, Anne B. Smith, & Nicola J. Taylor, նշված աշխատ., 2000, էջ 383: Carol Smart & Bren Neale, նշված աշխատ., 2000, էջ 163::

<sup>17</sup> Տես Patrick Parkinson & Judy Cashmore, նշված աշխատ., էջ 20:

ներն ու ընդունակությունները, երբ ընդհուպ երկրի բարձրագույն օրենքի մակարդակով նախանշված են դրա գնահատման չափանիշները: Հատկապես, որ գործող իրավակարգավորումների համատեքստում երեխային իր զգացմունքներն ու նախապատվություններն արտահայտելու հնարավորությամբ ապահովելը իրավասու մարմնի համար երբեք կաշկանդող կամ վճռորոշ չի կարող լինել: Մինչդեռ՝ վերջինիս համար կարող է կողմնորոշիչ դեր ունենալ, իսկ երեխայի մեջ մեծացնել իր նկատմամբ կայացված որոշման նկատմամբ վստահությունը:

Հատկանշական է, որ ոչ Ընտանեկան օրենսգրքում առկա դասական, ուղղակի ձևակերպմամբ, սակայն, կարծես, ակնարկի տեսքով խնամակալության հանձնելիս երեխայի կարծիքը հաշվի առնելուն վերաբերող դրույթ առկա է Ընտ. օր.-ի 135-րդ հոդվածի 2-րդ մասում, որտեղ նշված է. **«Երեխայի խնամակալ (հոգաբարձու) նշանակելիս հաշվի են առնվում... ինչպես նաև երեխայի ցանկությունը, եթե դա հնարավոր է»**<sup>18</sup>: Այստեղից հարց է առաջանում՝ **«Երեխայի ցանկությունը, եթե դա հնարավոր է»** ձևակերպման պայմաններում արդյոք ապահովվում է երեխայի կարծիքն արտահայտելու իրավունքն ու կարծիքը հաշվի առնելու՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտականությունը: «Կարծիք»<sup>19</sup> և «ցանկություն»<sup>20</sup> եզրույթների իմաստային նույնության կամ տարբերությունների մասին դատողություն կարելի է անել՝ հիմք ընդունելով

Է.Բ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը», որտեղ այս երկու եզրույթի իմաստային բովանդակության բացահայտումները թույլ են տալիս եզրահանգում անել դրանց իմաստային ոչ լրիվ նույնության, սակայն սերտ աղերս ունենալու մասին: Այս առթիվ հետաքրքրական են նաև Ավստրալիայի ընտանեկան օրենսդրության կարգավորումները: Այսպես՝ 2006թ. հուլիսի 1-ին ընդունված ակտով ուժի մեջ մտան Ավստրալիայի 1975 թվականի «Ընտանեկան իրավունքի» ակտում կատարված լայնածավալ փոփոխությունները, որոնք վերաբերում էին երեխաներին հոգաբարձության<sup>21</sup> հանձնելու գործընթացը կարգավորող դրույթներին: Իրավական ակտի տարբեր գլուխներում նախկինում օգտագործված «երեխայի ցանկություն» եզրույթը փոխարինվեց «երեխայի կարծիք» եզրույթով, որի նպատակն ըստ օրենսդրի հոգաբարձության սահմանման կոնկրետ գործով երեխային լսելու և նրա ընկալումներն ու զգացողությունները հաշվի առնելու պահանջների շրջանակի ընդարձակումը և ամրապնդումն էր՝ պարզեցնելով և նոր պահանջներ ներմուծելով որոշակի անձի հետ ապրելու երեխայի ցանկությունը պարզելու առումով, իսկ որպես հիմնավորում նշվում էր, որ երեխային հոգաբարձության հանձնելիս նրա կարծիքը հաշվի առնելը «երեխայի լավագույն շահ» կենտրոնական հասկացության բաղադրիչներից է, ինչն էլ նշանակում է, որ դատարանի կողմից պետք է հաշվի առնվի<sup>22</sup>: Գիտական ուսումնա-

<sup>18</sup> Նույնարվանդակ դրույթ առկա է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն՝ խնամակալը կամ հոգաբարձուն նշանակվում է իր համաձայնությամբ: Ընդ որում՝ պետք է հաշվի առնվեն նրա բարոյական և անձնական այլ հատկանիշները, խնամակալի կամ հոգաբարձուի պարտականություններ կատարելու ունակությունը, նրա ու խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող անձի միջև հարաբերությունները, իսկ հնարավորության դեպքում՝ նաև խնամարկյալի ցանկությունը:

<sup>19</sup> Որևէ բանի կամ որևէ մեկի գնահատականը՝ վերաբերմունքն արտահայտող դատողություն, եզրակացություն: Կարծիք հայտնել – 1. Գրավոր կամ բանավոր կարծիք ներկայացնել: Մեկի՝ մի բանի մասին իր դատողությունը՝ տեսակետը՝ տպավորությունը հայտնել: Այս մասին տես Է. Բ. Աղայան, «Արդի հայերենի բացատրական բառարան», Հատոր 1, «Հայաստան» հրատարակչություն, էջ 705:

<sup>20</sup> 1. Որևէ բան անելու՝ որևէ բանի հասնելու՝ տիրելու՝ ձեռք բերելու ներքին մղում, կամք: 2. Որևէ բանի ձգտում: 3. Այն, ինչ որ ցանկանում են, ցանկանալու՝ ձգտելու՝ ուղղելու՝ ձգտման առարկան՝ էությունը: 4. Կամքի արտահայտություն, հոժարություն, համաձայնություն կամ խնդրանք՝ որպես փափագի արտահայտություն: Այս մասին տես Է. Բ. Աղայան, նշված. աշխատ., հատոր 2, էջ 1470:

<sup>21</sup> Ավստրալիայի օրենսդրությամբ տարանջատված չեն խնամակալության և հոգաբարձության ինստիտուտները:

<sup>22</sup> Margaret Mary Voight, Is a view different from a wish? Considering the child's view in parenting disputes in Australian family law matters, LLB(Hons), Grad Dip Legal Prac, LLM, Queensland University of Technology Faculty of Law, 2017, էջ 1: Բացի այդ՝ հետազոտություններից մեկի շրջանակներում հարցված դատավորները և Ավստրալիայում գործող ընտանեկան գործերով երեխաներին ներկայացնող «Independent Children's Lawyers» ընտանեկան հարցերով ավստրալիական ինստիտուտի իրավաբանները ևս նշել են, որ երեխայի լավագույն շահերը պահանջում են երեխայի կարծիքի հաշվի առնում իրեն վերաբերող հարցերում: Այս մասին տես Margaret Mary Voight, նշված աշխատ., էջ 137:

սիրություններից մեկում նշվում է, որ փոքրամասնությունն այս փոփոխությունը գործնականում համարել է խորհրդանշական փոփոխություն, իսկ մեծամասնության կարծիքով՝ ընդգծել է երեխայի արտահայտած կարծիքի կարևորությունը՝ իրականում գործի բոլոր հանգամանքների համապարփակ ուսումնասիրության արդյունքով երեխայի համար լավագույն պայմանների ապահովման համար<sup>23</sup>: Մեր կարծիքով ևս՝ թեև այս երկու եզրույթը չունեն իմաստային հակադիր նշանակություններ, սակայն դրանք չի կարելի լիակատար հոմանիշներ համարել օրենսդրական առկա ձևակերպումների պայմաններում: Պատկերն այլ կլիներ Ընտանեկան օրենսգրքով նախատեսված դեպքերում երեխայի կարծիքը հաշվի առնելուն վերաբերող 44-րդ հոդվածի 2-րդ մասում առկա «**Տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է...**» ձևակերպման օգտագործման դեպքում, ինչը խնամակալության և հոգաբարձության մարմնին ուղղակիորեն կպարտավորեցներ ապահովելու երեխայի կարծիքի արտահայտումն իր ապագա խնամակալի վերաբերյալ, մինչդեռ դա չի հետևում Ընտ. օր. 135-րդ հոդվածի 2-րդ մասում «հաշվի են առնվում... ինչպես նաև երեխայի ցանկությունը, եթե դա հնարավոր է» ձևակերպումից<sup>24</sup>: Պարզ չէ՝ ինչ տրամաբանությամբ է օրենսդիրն առաջնորդվել՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխային միայն խնամակալության հանձնելու դեպքում «**հաշվի են առնվում... ինչպես նաև երեխայի ցանկությունը, եթե դա հնարավոր է**» ձևակերպումն օգտագործելով և շեղվելով առհասարակ երեխայի կարծիքը հաշվի

առնելու հարցում որդեգրված ընդհանուր մոտեցումից: Պատճառը որևէ երկրում արդեն գործող նմանատիպ կարգավորումներ ներմուծելն է ներպետական օրենսդրության մեջ, թե օրենսդիրն այլ նպատակ է հետապնդել, պարզ չէ, սակայն փաստ է, որ այս ձևակերպման պայմաններում չի ապահովվում երեխային խնամակալության հանձնելիս նրա կարծիքի արտահայտման իրավունքի պատշաճ իրացումը: Բացի այդ՝ Ընտանեկան օրենսգրքում որևէ ձևակերպմամբ առհասարակ բացակայում են դրույթներ՝ խնամատարության հանձնելիս երեխայի կարծիքը հաշվի առնելու վերաբերյալ: Որպես արդյունքում՝ բախվում ենք կազուսային իրավիճակի և ոչ համաչափ մոտեցման, այն դեպքում, երբ գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում երեխայի կարծիքի բացահայտումը ուղղակիորեն կապված է «երեխայի լավագույն շահերի» ապահովման հետ: Մեր այս տեսակետի հիմնավորումն է նաև երեխայի իրավունքների կոմիտեի<sup>25</sup> դիրքորոշումն առ այն, որ երեխայի լավագույն շահերը հաշվի առնելը ենթադրում է երեխայի՝ սեփական կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքի ապահովումը: Երեխային վերաբերող բոլոր հարցերում պատշաճ ուշադրություն պետք է դարձվի իր արտահայտած տեսակետներին: Կոմիտեն շեշտել է, որ ցանկացած որոշում, որը կայացնելիս հաշվի չի առնվել երեխայի տեսակետը կամ դրան պատշաճ ուշադրություն չի դարձվել, հնարավորություն չի տալիս որոշելու, թե որն է երեխայի լավագույն շահը<sup>26</sup>: Կարծում ենք՝ այնպիսի հանգամանքների վերաբերյալ երեխայի արտահայ-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 113 2019

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 137:

«Արդյոք «կարծիքը» և «ցանկությունը» ունեն իմաստային տարբերություններ» Ավստրալիայում կատարված հարցումներից մեկի ամփոփումն ստեղծել է հետևյալ պատկերը՝ հարցմանը պատասխանած 6 դատավորից 4-ը և 14 իրավաբանից 10-ը հայտնել էին, որ իմաստային տարբերություն չունեն: Հետագայում 6 դատավորից չորսը և 14 իրավաբանից 8-ը նշել են, որ տարբերություններ չեն դրսևորվում նաև պրակտիկայում: Հարցվածների փոքրամասնությունը միայն՝ 2 դատավոր և չորս իրավաբան էին նշել իմաստային և գործնական տարբերությունների մասին և ընդգծել, որ «ցանկությունից» «կարծիք» եզրույթային փոփոխությունը պահանջում է երեխայի ձայնի իրավունքի լուրջ ուսումնասիրություն: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Margaret Mary Voight, նշված աշխատ., էջ 141:

<sup>24</sup> Նույնը կարող ենք ասել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ մասում առկա ձևակերպման մասին:

<sup>25</sup> Ըստ ՀՀ-ի կողմից 1993 թվականին վավերացված՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի և հետագայում Կոնվենցիային կից լրացված երկու արձանագրությունների՝ անդամ պետությունների կողմից դրա կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեն:

<sup>26</sup> Երեխայի իրավունքների կոմիտեի 2013 թվականի թիվ 14 ընդհանուր մեկնաբանությունը: [https://www.refworld.org/docid/51a84b5e4.html?fbclid=IwAR0wzVlK21\\_H9\\_O1fB1kfcEqvvoEeBrMub9fW2RGd1khW2xhJ5-u7IZC8](https://www.refworld.org/docid/51a84b5e4.html?fbclid=IwAR0wzVlK21_H9_O1fB1kfcEqvvoEeBrMub9fW2RGd1khW2xhJ5-u7IZC8)



տած կարծիքը, ինչպիսին երեխայի և ապագա խնամակալի, խնամատար ծնողի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, հնարավոր կապվածությունն են (եթե նախկինում գտնվել է նրանց խնամքին), այլ փաստերի (օրենքով խնամակալին և խնամատար ծնողին առաջադրվող պահանջներ, նրանց աշխատանքի բնույթ, գույքային դրություն (հատկապես՝ խնամակալի դեպքում) և այլն) հետ համադրելը խնամակալության և հոգաբարձության մարմնի համար յուրաքանչյուր դեպքում «երեխայի լավագույն շահ» հասկացության բովանդակության բացահայտիչներ կարող են լինել: Բացի այդ՝ իրավասու մարմինը յուրաքանչյուր դեպքում երեխայի շահը գնահատելիս կարող է հաշվի առնվել նաև այլ պայմաններ, և այդ պարագայում երեխայի արտահայտած կարծիքն արդեն իր շահի բացահայտման միակ որոշիչը երբևէ չի լինի, իսկ «երեխայի լավագույն շահը» կծառայի որպես նրա արտահայտած կարծիքը տարիքին և հասունությանը համապատասխան<sup>27</sup> գնահատելու հավասարակշռող գործոն: Քննարկվող հարցի համատեքստում հարկ է ուշադրություն դարձնել նաև Ընտանեկան օրենսգրքի 120-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին, որոնց համաձայն՝ դատարանը կարող է առանց խնամակալի (հոգաբարձուի) համաձայնության, ելնելով երեխայի շահերից, վճիռ կայացնել նրան որդեգրելու մասին: Յուրաքանչյուր անգամ հանդիպելով ՀՀ օրենսդրության միջով կարմիր թելի նման անցնող «երեխայի շահ», «երեխայի լավագույն շահ» հասկացություններին՝ տպավորություն է, որ դրանց նպատակը տվյալ իրավակարգավորման սուկ իրավիճակային հիմնավորումն է: Մինչդեռ՝ դա պետք է ծառայի երեխայի յուրաքանչյուր իրավունքն ի նպաստ նրան առավելագույնս իրացնելուն, դառնալու նրա իրավունքների պաշտպանության հիմնարար չափանիշ, ինչը, մեր համոզմամբ, վկայակոչված կարգա-

վորման մեջ արտացոլված չէ: Որոշման՝ երեխայի շահերին առավել համապատասխանության առումով՝ առնվազն երեխայի կարծիքը պետք է հաշվի առնվի: Բացառված չեն այն դեպքերը, երբ խնամակալի, խնամատար ծնողի խնամքին գտնվելու անգամ կարճ ժամանակահատվածում կարող են երեխայի մեջ նրա հանդեպ առաջանալ սեր, ջերմություն և հոգեկան խոր կապվածություն, որոնց անտեսումը երեխային կարող է ենթարկել հոգեկան տրավմայի՝ չնայած օրենսդիրը որդեգրումը համարել է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման նախապատվելի ձևը: Եթե, օրինակ, տասը տարին լրացած երեխայի որդեգրման համար անհրաժեշտ է նրա համաձայնությունը, ապա նույն տրամաբանությամբ ինչհու տասը տարին լրացած երեխային որոշակի անձի խնամակալությանը կամ խնամատարությանը հանձնելիս ապագա խնամակալի, խնամատար ծնողի անձի առնչությամբ նրա կարծիքը գոնե չպետք է հաշվի առնվի, հատկապես՝ երբ դա չի պարտադրում իրավասու մարմնին այդ կարծիքին համապատասխան որոշում կայացնել: Նշված և այլ կազուսային իրավիճակների հաղթահարման, առկա բացերի վերացման և «երեխայի լավագույն շահ» հիմնարար հասկացության նպատակային նշանակության ապահովման տեսանկյունից՝ անչափ կարևոր է երեխայի իրական, արտաքին ազդակներից զերծ կարծիքի ձևավորման համար նպաստավոր միջավայրի ստեղծումը, երբ բացառված կլինեն հնարավոր բարոյահոգեբանական և այլ ճնշումները, ինչի ապահովման անմիջական պարտականությունը պետք է կրեն իրավահարաբերության բոլոր մասնակիցները<sup>28</sup>:

Հաշվի առնելով ժամանակակից ընտանեկան օրենսդրության հիմնական առանձնահատկություններից մեկը՝ ընտանեկան իրավահարաբերություններում երեխայի բավականին

<sup>27</sup> Ընդունելով երեխայի արտահայտած կարծիքի կարևորությունը՝ Պատրիկ Պարկինսոնն ու Ժյուդի Քեշմորը ևս կարծում են, թե դա պետք է հաշվի առնվի և դիտարկվի այլ ապացույցների, երեխայի տարիք և հասունության լույսի ներքո: Այս մասին տես Patrick Parkinson and Judy Cashmore, նշված աշխատ., էջ 116:  
<sup>28</sup> Երեխայի խելաթուրված կարծիքի մասին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Ջոմերֆելդն ընդդեմ Գերմանիայի գործով արձանագրել է, որ ներպետական դատարանն ուշադրություն չի հրավիրել երեխայի վրա կատարված ճնշման հանգամանքին, մինչդեռ հետագայում կատարված հոգեբանական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երեխայի արտահայտած կարծիքն առ այն, որ ծնողի հետ տեսակցություն չի ցանկանում, իրականությանը չի համապատասխանել: Տես Зоммерфельд против Германии, 08.07.2003, по жалобе N 31871/96./ <https://hudoc.echr.coe.int/eng> (վերջին մուտք 21.06.2019 թ.):

ակտիվ դերակատարումը<sup>29</sup>, առաջնորդվելով երեխայի յուրաքանչյուր իրավունքի առանցքը կազմող, բոլոր իրավունքների շրջանակը, դրանց իրացման երաշխիքների կառուցակարգը կանխորոշող «երեխայի լավագույն շահ» հասկացությամբ և չգնալով առավել նեղ, սուկ որոշ մասնավոր դեպքերի համար իրավավիճակային լուծումների առաջարկման ճանապարհով, ինչպես նաև ընդունելով Ընտանեկան օրենսգրքում ամրագրված՝ երեխայի «տասը» տարեկանը որպես իր շահերին առնչվող հարցերում կարծիքը հաշվի առնելու պարտադիրության ելակետ՝ կարծում ենք, որ երեխայի կարծիքը պետք է հաշվի առնվի բոլոր այն դեպքերում,

երբ ինչ-որ կերպ կարող են շոշափվել նրա շահերը, ինչն անմիջականորեն բխում է նաև Սահմանադրության 37-րդ հոդվածից: **Ուստի առաջարկում ենք Ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «Տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է՝ կապված խղճի ազատության հետ, որոշակի միջոցառումներին մասնակցելու, արտադպրոցական կրթություն ստանալուց հրաժարվելու, ծնողներից որևէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու, ինչպես նաև նրա շահերին առնչվող ցանկացած դեպքում»:**



<sup>29</sup> Косова О. Ю. Право ребенка на семейное воспитание: учебное пособие. Иркутск, 2012, էջ 36:

**ԱՆՆԱ ՀԱԿՈՐՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ԱՐՔԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՎԵՃԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԵՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Ուսումնասիրության առարկա դարձնելով արբիտրաժի ինստիտուտը՝ հարկ է նախ և առաջ անդրադառնալ արբիտրաժ հասկացությանը: Արբիտր եզրույթը ծագել է լատիներեն *arbiter* հասկացությունից: Հին Հռոմում արբիտր ասելով հասկացվել է այն մասնավոր անձը, ով ընտրվել է պրետորի կողմից որոշակի վեճերի լուծման նպատակով և գործել է նախապես տրված բանաձևերին համապատասխան<sup>1</sup>: Այսինքն, ըստ էության՝ հին ժամանակներում արբիտր է համարվել վեճը լուծելու նպատակով ընտրված, որոշակի կանոններին համապատասխան գործը քննելու լիազորությամբ օժտված անձը՝ դատավորը: Արբիտրաժը ֆրանսերենից (*arbitrage*) թարգմանվում է որպես միջնորդ դատարան<sup>2</sup>: Արդի ժամանակաշրջանում համատարած ընդունված է, որ արբիտրաժը վեճի լուծումն է հատուկ այդ նպատակով ընտրված մեկ կամ մի քանի անձանց կողմից, ում նման լիազորությամբ օժտել են վիճող կողմերը: Նկատի ունենալով, որ այստեղ վիճող կողմերն ինքնուրույն են որոշում կայացնում վեճն արբիտրաժին հանձնելու, արբիտրին կամ արբիտրներին ընտրելու, վեճի լուծման կանոնների և նմանատիպ այլ հարցերի շուրջ, ուստի և հստակ կարելի է նշել, որ արբիտրաժը դիսպոզիտիվ սկզբունքի արտահայտման բարձրագույն ձևերից է: Վեճն արբիտրաժի լուծմանը հանձնելու հիմքը կազմում

է արբիտրաժային համաձայնությունը, որը, ըստ էության՝ «արբիտրաժային պայմանագիր» է, և այդ իսկ պատճառով առանց արբիտրաժային համաձայնության չի կարող գոյություն ունենալ արբիտրաժ<sup>3</sup>: Արբիտրաժի նպատակը վեճի լուծումն է, և այդ կապակցությամբ բոլոր գործողությունները կատարվում են վիճող կողմերի համաձայնության հիման վրա և դրա արդյունքով, ուստի կարելի է եզրակացնել, որ արբիտրաժն արդարադատության իրականացման պայմանագրային այլընտրանք է, որը ներկայումս մի շարք երկրներում գերադասվում է ներպետական դատարանների կողմից իրականացվող արդարադատությունից: Այս մասին են վկայում, ինչպես նաև արբիտրաժի կարևորությունն ու անհրաժեշտությունն են ընդգծում մի շարք միջազգային բազմակողմ պայմանագրեր, կոնվենցիաներ և նմանատիպ այլ փաստաթղթեր, որոնցով նախատեսված է հենց արբիտրաժի միջոցով վեճերը քննելու ընթացակարգ: Օրինակ՝ 1992 թվականի հոկտեմբերի 14-ից ուժի մեջ մտած, 1964 թվականի հուլիսի 10-ին Վիեննայում կատարված Համաշխարհային փոստային միության կանոնադրության IV գլուխը՝ տարաձայնությունների լուծումը վերտառությամբ, նախատեսում է արբիտրաժի միջոցով վիճելի հարցերի լուծում<sup>4</sup>: Մեկ այլ օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության VI գլուխը

<sup>1</sup> Stéu Жан-Филип Дюнан, Паскал Пишона, Римско право, речник на основните термини, второ преработено и допълнително издание, ред. проф. Малина Новкиришка, Сиела, София, 2010, էջ 52:  
<sup>2</sup> Stéu К.А. Ганшина, Французско-русский словарь, Астрель, М., 2002, էջ 36:  
<sup>3</sup> Stéu Живко Сталев, Българско гражданско процесуално право, девето преработено и допълнително издание, Сиела, София, 2012, էջ 781:  
<sup>4</sup> Նշված կանոնադրության 32-րդ հոդվածը սահմանում է, որ երկու կամ մի քանի անդամ երկրների փոստային ադմինիստրացիաների միջև միության փաստաթղթերի մեկնաբանմանը կամ այդ փաստաթղթերի կիրառումից փոստային ադմինիստրացիաների համար առաջացող պատասխանատվությանը վերաբերող տարաձայնությունների դեպքում վիճելի հարցը լուծվում է արբիտրաժի միջոցով: Stéu, [http://mtcit.am/edfiles/files/Mijazgayin-paymanagrер/post-Convencia08-04-2009\\_01.pdf](http://mtcit.am/edfiles/files/Mijazgayin-paymanagrер/post-Convencia08-04-2009_01.pdf):

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 113 2019

վերաբերում է վեճերի խաղաղ կարգավորմանը և այդպիսի միջոցների շարքն է դասում նաև արբիտրաժի ինստիտուտը<sup>5</sup>: Եվս մեկ օրինակ՝ 2005 թվականի սեպտեմբերի 06-ին ուժի մեջ մտած Ծովային նավագնացության անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների դեմ պայքարի մասին կոնվենցիան որպես վեճի լուծման առաջնահերթ եղանակ նախընտրում է արբիտրաժը<sup>6</sup>:

Արբիտրաժի դերի օգուտն է վկայում նաև այն հանգամանքը, որ ներկայումս կարելի է հանդիպել տարբեր անվանումներով<sup>7</sup> արբիտրաժային հաստատությունների, ինչպես օրինակ՝ արբիտրաժային դատարան, ինստիտուտ, կենտրոն, հանձնաժողով և այլն, ինչը մատնանշում է արբիտրաժի արդիականությունը:

Արբիտրաժը հարկ է տարբերակել նման անվանումներ ունեցող կամ գործառույթներ իրականացնող այլ ինստիտուտներից: Այդպիսիք են, օրինակ՝ միջնորդությունը և հաշտեցումը, որոնց պարագայում միջնորդը կամ, համապատասխանաբար, հաշտարարը լիազորված չեն լուծելու կողմերի միջև ծագած վեճը, որպիսի իրավասությամբ օժտված է արբիտրը: Վերջինս բանակցությունների, փոխգիշումների, համաձայնագրերի նախագծերի միջոցով վիճող կողմերի միջև վերականգնում է իրավական խաղաղությունը և նպաստում ընդհանուր համաձայնության հանգեցում, որպես արդյունք՝ հենց վեճի կողմերն են լուծում իրենց վեճը: Որոշ երկրներում միջնորդությամբ և հաշտարարությամբ վեճի լուծումն ավելի ընդունված է, քան արբիտրաժի միջոցով: Դրանք հիմնական

նում ասիական երկրներն են, օրինակ՝ Չինաստանը, Ճապոնիան և այլն<sup>8</sup>:

Իրենց կառուցվածքից կախված՝ արբիտրաժները լինում են ad hoc և ինստիտուցիոնալ: Պատմականորեն արբիտրաժն ստեղծվել է որպես արբիտրաժ ad hoc, և միայն ժամանակի ընթացքում է առաջացել արբիտրաժային հաստատություն երևույթը: Ad hoc է համարվում այն արբիտրաժը, որն ստեղծվում է հատուկ վեճ քննելու նպատակով՝ արբիտրաժային համաձայնության հիման վրա: Այստեղ ընթացակարգային կանոնների սահմանումը և արբիտրի կամ արբիտրների ընտրությունը վերապահված են համաձայնագրի կողմերին: Նկատի ունենալով որոշակի նպատակով ստեղծվելու գործոնը՝ արբիտրաժը դադարում է գործել վեճի լուծման հետևանքով, այդ իսկ պատճառով անվանվում է նաև ինցիդենտային արբիտրաժ: Մինչդեռ՝ ինստիտուցիոնալ արբիտրաժը գործում է մշտապես, ստեղծվում է անսահմանափակ քանակով վեճեր լուծելու համար, և իր գործունեության բոլոր կանոնները նախապես որոշված են համապատասխան կանոնակարգով: Վիճող կողմերն արբիտրաժային համաձայնության մեջ պարզապես ընտրություն են կատարում մշտապես գործող արբիտրաժային հաստատությանը դիմելու կապակցությամբ:

Բացի այդ, ըստ կողմերի նստավայրի կամ բնակության վայրի՝ արբիտրաժը տարանջատվում է միջազգայինի և ներքինի (տեղական): Միջազգային արբիտրաժը բնորոշվում է միջազգային տարրի առկայության նախապայմանով, ինչը հատկանշական չէ ներքին կամ տե-

<sup>5</sup> Նշված կանոնադրության 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած վեճի մասնակցող կողմերը, որը շարունակվելը կարող է վտանգել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը, պետք է ամենից առաջ ձգտեն լուծել բանակցությունների, հետաքննությունների, միջնորդությունների, հաշտեցման, արբիտրաժի, դատավարությունների, տարածքային մարմիններին կամ համաձայնություններին դիմելու և կամ իրենց ընտրությամբ այլ խաղաղ միջոցներով: Տե՛ս, [http://www.un.org/Depts/los/convention\\_agreements/convention\\_overview\\_agreements.asp](http://www.un.org/Depts/los/convention_agreements/convention_overview_agreements.asp):

<sup>6</sup> Նշված կոնվենցիայի 16-րդ հոդվածի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը. «Սույն Կոնվենցիայի կիրառման և մեկնաբանման վերաբերյալ երկու կամ ավելի մասնակից պետությունների միջև յուրաքանչյուր վեճ, որը ողջամիտ ժամկետում չի կարող կարգավորվել բանակցությունների միջոցով, նրանցից մեկի խնդրանքով փոխանցվում է արբիտրաժ: Եթե արբիտրաժի մասին խնդրանքով դիմելու օրվանից վեց ամսվա ընթացքում կողմերը չեն կարող պայմանավորվել արբիտրաժի կազմավորման մասին, ապա, այդ կողմերից յուրաքանչյուրի խնդրանքով՝ վեճը կարող է փոխանցվել Միջազգային դատարան՝ Դատարանի կանոնադրության համապատասխան»: Տե՛ս <http://www.irtek.am/views/act.aspx?aid=52336>:

<sup>7</sup> Միջազգային առևտրի պալատի միջազգային արբիտրաժային դատարանը Փարիզում, Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդը, Գերմանիայի արբիտրաժային ինստիտուտը Բոնում, Վիեննայի Դաշնային առևտրի պալատի արբիտրաժային կենտրոնը, Ծովային արբիտրաժային հանձնաժողովը Ռուսաստանի Դաշնության առևտրաարդյունաբերական պալատում, Ամերիկյան արբիտրաժային ասոցիացիան և այլն:

<sup>8</sup> Տե՛ս Живко Сталев, նշվ. աշխ., էջ 783-784:

ղական արբիտրաժին: Օրինակ՝ միջազգայինի դեպքում վիճող կողմերը պետություններ են, կամ կողմերից մեկի բնակության վայրը գտնվում է արտերկրում, իսկ, օրինակ, ներքինի դեպքում վիճող կողմերի բնակության վայրը կամ նստավայրը միևնույն երկրում է և այլն:

Հարկ է անդրադառնալ նաև միջազգային առևտրային արբիտրաժ հասկացությանը, որը միջազգային առևտրային վեճերի լուծման կառուցակարգ է՝ արբիտրաժային հաստատության միջոցով: Որպես միջազգային առևտրային արբիտրաժ հաճախ գործածվում է նաև «միջազգային միջնորդ դատարան» ձևակերպումը:

Միջազգային առևտրային արբիտրաժի զարգացման համար բեկումնային եղավ 1919 թվականին Փարիզի Միջազգային առևտրական պալատի (ՄԱՊ) հիմնադրումը: Ստեղծման առաջին օրերից ի վեր՝ ՄԱՊ-ն իր առջև խնդիր ուներ մեխանիզմներ մշակել միջազգային առևտրային ոլորտում վեճերի «արագ, մատչելի և վերջնական» լուծման համար: ՄԱՊ-ի կողմից առաջադրված սկզբունքներն էլ հետագայում դրվեցին հիմնադրվող միջազգային առևտրային արբիտրաժների գործունեության հիմքում: Հենց 1923 թվականին Միջազգային առևտրական պալատին կից ստեղծվեց Ինստիտուցիոնալ արբիտրաժային դատարանը: Միջազգային առևտրային արբիտրաժը վեճերը քննում է միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ, այսինքն՝ չկա որևէ նորմ, որը ստիպի կողմերին դիմելու այդ քայլին: Ընտրության կամավորությունը հետագայում լուրջ երաշխիքներ կարող է պարունակել միջնորդ որոշումները նույն կամավորությամբ կատարելու համար: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանել նաև արբիտրաժային քննման ընթացակարգը, որը զերծ է ավելորդ դատավարական ձևականություններից, դա իր հերթին նպաստում է տնտեսելու անհամեմատ շատ ժամանակ և միջոցներ: Միջազգային առևտրային արբիտրաժն իրավունք

ունի վեճը քննելու այն իրավական համակարգին համապատասխան, որն առավել սերտ է կապված գործի հետ, կամ նույնիսկ՝ վեճը լսել իրավունքի ընդհանուր սկզբունքների և արդարության հիման վրա (ex aequo et bono)<sup>9</sup>, ինչն ամրագրվել է նաև ներպետական դրական իրավունքում<sup>10</sup>:

Միաժամանակ՝ գոյություն ունի նաև իրավական և ոչ իրավական խնդիրներով արբիտրաժ՝ արբիտրաժին փոխանցվող վեճի բնույթից կախված: Ի սկզբանե արբիտրաժն ստեղծվել է որպես իրավական վեճի լուծման պայմանագրային այլընտրանք: Արբիտրաժը ոչ իրավական վեճերով է, երբ վերաբերում է պայմանագրում բացթողումների լրացմանը, պայմանագրով չկարգավորված, սակայն պայմանագրի կատարման համար զգալի նշանակություն ունեցող հարցերին: Այս վեճերի առարկան չունի իրավական բնույթ, և, ըստ ամենայնի՝ ուղղված է ձևական հարցերի կարգավորմանը, ինչը ևս կատարվում է արբիտրաժի միջոցով՝ արբիտրաժային ընդհանուր կանոնների հիման վրա: Այդ իսկ պատճառով նշված վեճերով կայացվող որոշումներն առաջացնում են միայն բովանդակային իրավական հետևանք, օրինակ՝ պայմանագրում կատարվում է որոշակի փոփոխություն, պայմանագիրը համապատասխանեցվում է նոր ծագած հանգամանքների հետ և այլն:

Արբիտրաժային կարգով կարող են լուծվել նաև այնպիսի վեճեր, որոնք պայմանագրային իրավահարաբերությունների հետ գտնվում են անուղղակի կապի մեջ: Դրանց շարքը կարող են դասվել վնասի փոխհատուցման կապակցությամբ առաջացող վեճերը, նախապայմանագրային վեճերը<sup>11</sup>:

Բացի արբիտրաժի նշված տեսակներից՝ հարկ է առանձնակի անդրադառնալ նաև արբիտրաժային համաձայնության տեսակներին, որոնցից յուրաքանչյուրն ունի միևնույն իրավական ուժը: Դրանք են, մասնավորապես՝ ար-

<sup>9</sup> Տեն Ա. Հայկյանց, Միջազգային մասնավոր իրավունք, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 532-534:

<sup>10</sup> «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ընտրված իրավունքից անկախ՝ կողմերը մինչև վճռի կայացումը կարող են արբիտրաժային տրիբունալին ուղղակիորեն լիազորել վեճը լուծելու արդարության ընդհանուր սկզբունքների հիման վրա (ex aequo et bono) կամ որպես հաշտարար միջնորդ (amiable compositeur):

<sup>11</sup> Տեն Վ. Հովհաննիսյան, Արևտրային արբիտրաժը Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀ հրատարակչություն, 2011, էջ 167:

բիտրաժային վերապահումը, փոխզիջումը և համաձայնագիրն, այն դեպքում, երբ կողմերը պայմանագրի բովանդակության մեջ ներառում են նաև հետագա հնարավոր վեճի լուծման հնարավորությունը հենց արբիտրաժի միջոցով, ուստի միանշանակորեն կարելի է եզրակացնել, որ այդ տեսակը արբիտրաժային վերապահումն է: Այսինքն՝ այստեղ արբիտրաժային համաձայնությունը ձևավորվում է դեռևս կողմերի հարաբերությունների ձևավորման փուլում: Այն դեպքում, երբ կողմերի միջև որևէ հարցի շուրջ վեճը ծագում է հետագայում, և նրանք որոշում են վեճը լուծել արբիտրաժի միջոցով, արբիտրաժն անվանվում է արբիտրաժային փոխզիջում: Այսինքն՝ այստեղ ի սկզբանե ծագում են կողմերի հարաբերությունները, և միայն այնուհետև՝ տարաձայնությունների դեպքում կողմերը համաձայնվում են արդեն իսկ ծագած վեճն արբիտրաժին փոխանցելու վերաբերյալ: Նմանատիպ է նաև արբիտրաժային համաձայնության երրորդ տեսակի՝ արբիտրաժային համաձայնագրի բնույթը, որի պարագայում կողմերը որոշում են կայացնում՝ արբիտրաժի միջոցով լուծել իրենց միջև արդեն իսկ ծագած տարաձայնությունները և այդ նպատակով կնքում են առանձին պայմանագիր:

Որպեսզի կողմերը կարողանան դիմել արբիտրաժին, բավական է արբիտրաժային համաձայնության տեսակներից որևէ մեկի առկայությունը<sup>12</sup>:

Արբիտրաժային համաձայնության վերը նշված տեսակները հիշատակված են «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» 10.06.1958 թվականի Նյու Յորքի կոնվենցիայում<sup>13</sup>, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է ՀՀ Ազգային ժողովի 18.11.1997 թվականի թիվ Ն-210-1 որոշմամբ: Նշված տեսակներն ունեն ինքնուրույն բնույթ և մեկը մյուսից անկախ են:

Այլ խնդիր է, թե արդյոք արբիտրաժային համաձայնությունն առանձնանում է իր ինքնավարությամբ և ինքնուրույնությամբ հիմնա-

կան պայմանագրի նկատմամբ, թե ոչ: Որոշ հեղինակներ համարում են, որ արբիտրաժային պայմանագիրն ինքնուրույն պայմանագիր է իր սեփական առարկայով, ուստի ինքնավար է հիմնական պայմանագրի նկատմամբ: Այս մոտեցումն ամրագրվել է նաև 1958 թվականին ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) կողմից ընդունված «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» տիպային օրենքում և պարզաբանվել է նաև դրա շուրջ տրված բացատրագրում<sup>14</sup>, որտեղ արբիտրաժային պայմանագրի ինքնավարությունը և ինքնուրույնությունը հիմնականում նկարագրվել են պայմանագրերի վավերականության տեսանկյունից: Սակայն, այս առումով՝ որպես արբիտրաժային համաձայնության ինքնավարության հակափաստարկ կարելի է առաջադրել հետևյալ հարցը. «Արդյոք կարող է գոյություն ունենալ արբիտրաժային համաձայնություն այն անձանց միջև, ովքեր իրավական տեսանկյունից չեն գտնվում որևէ հասարակական հարաբերության մեջ»: Արբիտրաժային համաձայնության նախադրյալ են կողմերի հարաբերությունները, այսինքն՝ որպեսզի կողմերը կնքեն արբիտրաժային համաձայնություն, անհրաժեշտ է, նախ և առաջ, կողմերի միջև կոնկրետ հարաբերության առկայություն, որի կապակցությամբ էլ վերջիններս կարող են համաձայնության գալ արդեն իսկ գոյություն ունեցող կամ հետագա հնարավոր վեճի լուծման հարցի շուրջ: Ակնհայտ է, որ կոնկրետ անձանց միջև գոյություն ունեցող հասարակական հարաբերությունը և արբիտրաժային համաձայնությունը փոխկապակցված են, քանի որ, եթե չկա հարաբերություն, ապա չի կարող լինել վեճ, և եթե չկա վեճ, ապա չի կարող լինել նաև որևէ համաձայնություն, իսկ հետագա հնարավոր վեճերի դեպքում՝ չի կարող լինել վեճ, եթե չկա կոնկրետ հարաբերություն: Հետևաբար՝ արբիտրաժային համաձայնությունը չի կարող լինել լիովին ինքնավար հիմնական պայմանագրի նկատմամբ, որի հիման վրա ծագել են կողմերի հարաբերություն-

<sup>12</sup> Տե՛ս Н. Ю. Ерылыева, Международное частное право, Москва, 2012, էջ 165:

<sup>13</sup> Մանրամասն տե՛ս, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77867>:

<sup>14</sup> Տե՛ս ՄԱԿՄԱԻՀ-ի կողմից ընդունված «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» տիպային օրենքի 4-րդ գլխի 16-րդ հոդվածի 1-ին կետը և ՄԱԿՄԱԻՀ-ի քարտուղարության «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» տիպային օրենքի բացատրագրի 25-րդ կետը:



ները, և որով կողմերը ձեռք են բերել փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ: Այն ասվածը, թե արբիտրաժային համաձայնությունը լիովին ինքնավար է, ինքնին նշանակում է, որ կարող է գոյություն ունենալ առանց համապատասխան հիմնական պայմանագրի առկայության, քանի որ հիմնական պայմանագիրը կարող է ճանաչվել անվավեր, սակայն արբիտրաժային համաձայնությունը՝ շարունակել վավեր լինել: Նշված դեպքում անհասկանալի է դառնում, թե կողմերի որ հարաբերությունների վերաբերյալ կամ առհասարակ ինչի համար են կողմերը կնքել արբիտրաժային համաձայնություն, եթե վերջինս շարունակում է լինել վավեր և գոյություն ունենալ հիմնական պայմանագրից առանձին: Ըստ այդմ՝ եթե դիտարկենք, որ արբիտրաժային համաձայնությունը վավեր է և ինքնուրույն հիմնական պայմանագրի նկատմամբ, ապա կարելի է հետևություն կատարել, որ արբիտրաժային համաձայնությունը որոշակի իմաստով կարող է դառնալ առարկայագուրկ ու իմաստագուրկ և այն դեպքում, երբ հիմնական պայմանագիրը ճանաչվել է անվավեր, իսկ համաձայնությունը շարունակել է լինել վավեր, և այն պարագայում, երբ հիմնական պայմանագիրը չի ճանաչվել անվավեր, սակայն համաձայնությունը շարունակում է որակվել որպես «ինքնուրույն գոյություն ունեցող», քանի որ ստացվում է, որ կողմերը համաձայնվել են արբիտրաժին փոխանցել մի վեճ, որն անհայտ է: Չէ որ արբիտրաժային համաձայնությունն ուղղակիորեն բխում է հիմնական պայմանագրից՝ նկատի ունենալով, որ կնքված է դրա կապակցությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ արբիտրաժը՝ որպես վեճերի այլընտրանքային լուծման լավագույն միջոցներից մեկը, գտնվում է շարունակական զարգացման

փուլում, ինչը ենթադրում է, թե այդ ինստիտուտի առանձին բաղադրատարրերը ևս գտնվում են դինամիկ զարգացման գործընթացում: Արբիտրաժային համաձայնությունը՝ որպես արբիտրաժի կայացման առաջնային քայլերից մեկը, պետք է համապատասխանի արդի զարգացման միտումներին: Միջազգային արբիտրաժային պրակտիկան այս տեսանկյունից շատ ավելի արագ է զարգանում և ունի զգալի ժառանգություն այս բնագավառում: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական մակարդակով արբիտրաժային հարաբերություններն արդյունավետ ձևով կարգավորվել են դեռևս տասը տարի առաջ և առ այսօր շարունակում են գործնականում ձեռք բերել լայն կիրառում: Իսկ միջազգային արբիտրաժային պրակտիկան, որն ամեն տարի հարլուտանում է առաջացող խնդիրների նոր լուծումներով՝ ամրագրելով դրանք կամ առանձին արբիտրաժային որոշումներով, որոնք հետագայում որպես օրինակ են ներկայացվում արդյունավետ լուծումների համար, կամ նպաստում են իրավակարգավորումների բարեփոխումներին, հիմք է տալիս գործնականում արբիտրաժային պրակտիկայում վեր հանել այն հիմնական խնդիրները, որոնք առաջնային լուծման կարիք ունեն:

Հայաստանի Հանրապետությունը միջազգային արբիտրաժային պրակտիկայում ակտիվ մասնակցելու և այդ պրակտիկայի զարգացման շնորհիվ արբիտրաժային համաձայնություններ կնքելու, ինչպես նաև այլ երկրների արբիտրաժային համաձայնությունների լրկալ մշակույթների լավագույն օրինակներին հետևելու շնորհիվ ձևավորում է արբիտրաժային համաձայնությունների շրջանում առաջացող խնդիրների ուրույն և առավել արդյունավետ լուծումներ:



ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

## ՈՐՈՇ ԵԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)<sup>1</sup>

Խորհրդարանական հանրապետություններում գործադիր իշխանությունն իրականացվում է կառավարության և գործադիր իշխանության այլ մարմինների միջոցով: Խորհրդարանական հանրապետություններում գործադիր իշխանության բարձրագույն մարմինը կառավարությունն է<sup>2</sup>, որի կազմը, գործառույթների և լիազորությունների շրջանակները, ձևավորման և պատասխանատվության մեխանիզմները որոշակի առանձնահատկություններ ունեն տարբեր մոդելներով խորհրդարանական հանրապետություններում:

Խորհրդարանական հանրապետություններում կառավարության սահմանադրական կարգավիճակի հետ կապված հիմնական հարցերից մեկը վերաբերում է կառավարության կազմին: Խորհրդարանական մի շարք հանրապետություններում կառավարությունը կազմված է վարչապետից և նախարարներից<sup>3</sup>, իսկ մի շարք պետություններում գործում է նաև փոխվարչապետի պաշտոն<sup>4</sup>: Հարկ է նշել, որ որոշ խորհրդարանական հանրապետություններում կառավարության կազմն ավելի լայն է, քանի որ կառավարության անդամ են նաև օրենքով ստեղծված պետական մարմինների ղեկավարները<sup>5</sup>:

Խորհրդարանական հանրապետություններում կառավարության սահմանադրական կարգավիճակը բնութագրող հիմնական հատկանիշներից մեկն այն է, որ կառավարությունը ձևավորվում է պառլամենտի կողմից: Ընդ որում՝ կառավարության ձևավորման մեխանիզմները խորհրդարանական հանրապետություններում միմյանցից որոշակիորեն տարբեր են, ընդհանուր առմամբ՝ կարող ենք առանձնացնել կառավարության ձևավորման հետևյալ մեխանիզմները՝ ա) վարչապետը նշանակվում է հանրապետության նախագահի կողմից՝ պառլամենտական մեծամասնության առաջարկով<sup>6</sup>, բ) վարչապետն ընտրվում է պառլամենտի ստորին պալատի կողմից՝ հանրապետության նախագահի առաջարկությամբ<sup>7</sup>, գ) հանրապետության նախագահը պառլամենտական մեծամասնության ներկայացրած թեկնածուին նշանակում է վարչապետ, ինչից հետո ձևավորվում է կառավարությունը, որը 30-օրյա ժամկետում պետք է ստանա պառլամենտի վստահությունը<sup>8</sup>: Նշվածից բխում է, որ խորհրդարանական հանրապետություններում, բոլոր դեպքերում, ձևավորված կառավարությունը պետք է վայելի պառլամենտի վստահությունը:

Խորհրդարանական հանրապետություն-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 113 2019

<sup>1</sup> Աշխատանքը կատարվում է՝ ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահի «04» սեպտեմբերի 2018 թ. N 36-Ա/Ք հրամանով հաստատված 18T-5E130 գիտական հետազոտական թեմայի շրջանակներում:  
<sup>2</sup> Սլովակիայի Սահմանադրության 108-րդ հոդված, Ղրղզստանի Սահմանադրության 83-րդ, Չեխիայի Սահմանադրության 67-րդ հոդված:  
<sup>3</sup> Լատվիայի Սահմանադրության 55-րդ հոդված, Հունգարիայի Սահմանադրության 15-րդ հոդված, Էստոնիայի Սահմանադրության 88-րդ հոդված:  
<sup>4</sup> Սերբիա, Չեռնոգորիա, Ալբանիա, Հունաստան, ընդ որում՝ Մոլդովան այն բառացիկ պետություններից է, որի Սահմանադրությունում նշվում է առաջին փոխվարչապետի պաշտոնի մասին (Սահմանադրության 96-րդ հոդված):  
<sup>5</sup> Ղրղզստանի Սահմանադրության 83-րդ հոդված, Մոլդովայի Սահմանադրության 97-րդ հոդված:  
<sup>6</sup> Ալբանիայի Սահմանադրության 96-րդ հոդված, Սլովակիայի Սահմանադրության 110-րդ հոդված:  
<sup>7</sup> Գերմանիայի Սահմանադրության 63-րդ հոդված:  
<sup>8</sup> Չեխիայի Սահմանադրության 68-րդ հոդված:

ների մեծ մասում պառլամենտն ընտրում է միայն վարչապետին, իսկ կառավարության մյուս անդամների ընտրության կամ նշանակման գործում ուղղակի ազդեցություն չի ունենում: Սակայն որոշ խորհրդարանական հանրապետություններում պառլամենտը մասնակցում է նաև կառավարության մյուս անդամների ընտրության և նշանակման գործընթացին, օրինակ՝ Մոլդովայում և Սերբիայում պառլամենտը պետք է հավանություն տա կառավարության կազմին<sup>9</sup>:

Խորհրդարանական հանրապետություններում կառավարության հիմնական գործառույթային խնդիրն է ապահովել պետության ներքին և արտաքին քաղաքականության մշակումը և իրականացումը<sup>10</sup>, ինչն ամրագրված է մի շարք խորհրդարանական հանրապետությունների Սահմանադրություններում, օրինակ՝ Էստոնիայի կառավարությունն «իրականացնում է» պետության ներքին և արտաքին քաղաքականությունը<sup>11</sup>, Բուլղարիայի կառավարությունը «սահմանում և իրականացնում է» պետության ներքին և արտաքին քաղաքականությունը<sup>12</sup>, Մոլդովայի կառավարությունը «ապահովում է» պետության ներքին և արտաքին քաղաքականության իրականացումը<sup>13</sup>, իսկ Խորվաթիայի կառավարությունն «ուղենշում է» պետության ներքին և արտաքին քաղաքականությունը<sup>14</sup>: Նշված հասկացությունների բովանդակային առանձնահատկություններից անկախ, բոլոր դեպքերում, խորհրդարանական հանրապետություններում պետության ներքին և արտաքին քաղաքականությունը մշակվում և իրականացվում է կառավարության կողմից: Սակայն դա բնավ չի նշանակում, թե պետության ներքին և արտաքին քաղաքականության ձևավորման գործում պառլամենտը դերակատարություն չունի,

ընդհակառակն՝ նշված ոլորտում պառլամենտը ունի առանցքային դերակատարություն, քանի որ պետության ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, բոլոր դեպքերում, «հաստատվում են» պառլամենտի կողմից, ինչն արտացոլվում է պառլամենտի կողմից հաստատվող կառավարության գործունեության ծրագրում<sup>15</sup>:

Խորհրդարանական հանրապետություններում կառավարությունում առանցքային դերակատար է վարչապետը, ով ղեկավարում է կառավարությունը: Սակայն խորհրդարանական տարբեր մոդելներով հանրապետություններում վարչապետի դերակատարությունը որոշակի առանձնահատկություններ ունի՝ պայմանավորված վարչապետի գործառույթների և լիազորությունների ծավալով: Խորհրդարանական որոշ հանրապետություններում վարչապետը համեմատաբար պասիվ դերակատար է, քանի որ վարչապետի գործառույթային կարգավիճակը, լայն առումով, սահմանափակված է կառավարության գործունեության «միասնականության» ապահովման գործառույթով: Օրինակ՝ Սլովենիայի վարչապետը պատասխանատու է կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունների միասնականության ապահովման համար<sup>16</sup>, իսկ Հունաստանի վարչապետն ապահովում է կառավարության գործունեության միասնականությունը<sup>17</sup>:

Սակայն մի շարք խորհրդարանական հանրապետություններում վարչապետը կառավարությունում համեմատաբար ակտիվ դերակատար է, քանի որ օժտված է ոչ միայն կառավարության գործունեության «միասնականության» ապահովման գործառույթով, այլ նաև «սահմանում» և «ղեկավարում» է կառավարության ընդհանուր քաղաքականությունը: Օրինակ՝

<sup>9</sup> Մոլդովայի Սահմանադրության 98-րդ հոդված, Սերբիայի Սահմանադրության 127-րդ հոդված:

<sup>10</sup> Խորվաթիայի Սահմանադրության 110-րդ հոդված, Ղրղզստանի Սահմանադրության 89-րդ հոդված:

<sup>11</sup> Էստոնիայի Սահմանադրության 86-րդ հոդված, Մոլդովայի Սահմանադրության 96-րդ հոդված, Ղրղզստանի Սահմանադրության 88-րդ հոդված:

<sup>12</sup> Բուլղարիայի Սահմանադրության 105-րդ հոդված:

<sup>13</sup> Մոլդովայի Սահմանադրության 96-րդ հոդված:

<sup>14</sup> Խորվաթիայի Սահմանադրության 110-րդ հոդված:

<sup>15</sup> Մոլդովայի Սահմանադրության 96-րդ հոդվածի համաձայն՝ կառավարությունն իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է կառավարության գործունեության ծրագրով: Վրաստանի Սահմանադրության 48-րդ հոդվածի համաձայն՝ պառլամենտը որոշում է պետության ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները:

<sup>16</sup> Սլովենիայի Սահմանադրության 114-րդ հոդված:

<sup>17</sup> Հունաստանի Սահմանադրության 81-րդ հոդված:

Վրաստանի վարչապետը «որոշում» է կառավարության գործունեության ուղղությունները<sup>18</sup>, Հունգարիայի վարչապետը «սահմանում» է կառավարության հիմնական քաղաքականությունը<sup>19</sup>: Հարկ է նշել, նաև, որ խորհրդարանական հանրապետություններում վարչապետի հիմնական գործառույթներից է նաև պետական կառավարման համակարգի մարմինների գործունեության համակարգումը<sup>20</sup>:

Այսպիսով՝ խորհրդարանական հանրապետություններում կարող ենք առանձնացնել կառավարություն-վարչապետ փոխհարաբերությունների երկու հիմնական մոդելներ՝ վարչապետի պասիվ դերակատարմամբ և վարչապետի ակտիվ դերակատարմամբ: Վարչապետի պասիվ դերակատարության դեպքում վարչապետ-կառավարություն փոխհարաբերություններում «ծանրության նժարը» թեքվում է կառավարության կողմը, իսկ վարչապետի ակտիվ դերակատարության դեպքում «ծանրության նժարը» թեքվում է վարչապետի կողմը: Նշվածը առարկայական դարձնելու նպատակով նշենք մեկ օրինակ. մասնավորապես՝ Սերբիայում, Ֆինլանդիայում և Մակեդոնիայում հանրապետության նախագահը դիվանագիտական ծառայությունների ներկայացուցիչներին նշանակում է կառավարության առաջարկությամբ<sup>21</sup>, մինչդեռ, օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունում հանրապետության նախագահը դիվանագիտական ծառայությունների ներկայացուցիչներին նշանակում է վարչապետի առաջարկությամբ<sup>22</sup>:

Ընդհանուր առմամբ՝ խորհրդարանական հանրապետություններում կառավարություն-վարչապետ փոխհարաբերություններում վարչապետի գերիշխող դիրքի պարագայում պետական կառավարման համակարգը դառնում է առավել կենտրոնաձիգ, որոշումների ընդունման գործընթացը՝ առավել օպերատիվ, իսկ կառավարության գերիշխող դիրքի պարագայում պետական կառավարման համակարգն առավել հավասարակշռված է, սակայն որոշում-

ների ընդունման գործընթացը համեմատաբար դանդաղ:

Հատկանշական է, որ խորհրդարանական հանրապետություններում վարչապետի հզոր դերակատարությունը պայմանավորված է ոչ միայն վարչապետի գործառույթների և լիազորությունների ծավալով, այլ նաև քաղաքական գործունեությամբ: Մասնավորապես՝ խորհրդարանական հանրապետություններում վարչապետը, մի կողմից, կառավարության ղեկավարն է, իսկ մյուս կողմից, որպես կանոն՝ պառլամենտում մեծամասնություն ձևավորված քաղաքական ուժի առաջնորդը: Նշվածով պայմանավորված՝ վարչապետն օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի փոխհարաբերություններում ձեռք է բերում քաղաքական ազդեցության լայն լծակներ, ինչի հետևանքով կառավարություն-պառլամենտ փոխհարաբերություններում կառավարությունը հայտնվում է առավել «շահեկան» դիրքում:

Խորհրդարանական հանրապետություններում գործադիր իշխանությունը գտնվում է պառլամենտական վերահսկողության ներքո: Սակայն օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի փոխհարաբերություններում, վարչապետի հզոր դերակատարմամբ պայմանավորված, բավականին «փխրուն» են դառնում գործադիր իշխանությանը պառլամենտական վերահսկողության միջոցով զսպելու և հավասարակշռելու մեխանիզմները: Դրանով պայմանավորված՝ խորհրդարանական հանրապետություններին բնորոշ է իշխանությունների բաժանման և հավասարակշռման «ճկուն» մոդելը, որի պարագայում պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի փոխհարաբերությունների հիմքում առավել շատ ընկած է «համագործակցությունը», քան «մրցակցությունը» և «պայքարը», ինչն առավել բնորոշ է կառավարման նախագահական ձևին (իշխանությունների բաժանման և հավասարակշռման «կոշտ» մոդել):

Խորհրդարանական հանրապետություն-

<sup>18</sup> Վրաստանի Սահմանադրության 79-րդ հոդված:

<sup>19</sup> Հունգարիայի Սահմանադրության 18-րդ հոդված:

<sup>20</sup> Բուլղարիայի Սահմանադրության 105-րդ հոդված:

<sup>21</sup> Սերբիայի Սահմանադրության 111-րդ հոդված, Ֆինլանդիայի Սահմանադրության 58-րդ հոդված, Էստոնիայի Սահմանադրության 78-րդ հոդված, Մակեդոնիայի Սահմանադրության 91-րդ հոդված:

<sup>22</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 132-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

ներում կառավարության գործունեությունը ենթաօրենսդրական ընույթ ունի: Սակայն մի շարք խորհրդարանական հանրապետություններում կառավարությունն ունի օրենսդրական գործունեությամբ զբաղվելու լիազորություն<sup>23</sup>: Օրինակ՝ Չեռնոգորիայում<sup>24</sup> հրատապ անհրաժեշտության դեպքում, երբ պառլամենտին չի հաջողվում նիստ գումարել, կառավարությունը լիազորված է ընդունելու օրենքի ուժ ունեցող որոշումներ: Խորվաթիայում ևս պառլամենտը կարող է լիազորել կառավարությանը՝ ընդունելու օրենքի ուժ ունեցող որոշումներ<sup>25</sup>:

Խորհրդարանական հանրապետություններում կառավարությունը ոչ միայն ձևավորվում է պառլամենտի կողմից, այլ նաև քաղաքական պատասխանատվություն է կրում պառլամենտի առջև, ինչի հետևանքով պառլամենտը կարող է անվստահություն հայտնել կառավարությանը<sup>26</sup> կամ կառավարության առանձին անդամի<sup>27</sup>:

Խորհրդարանական հանրապետությունում առկա են որոշակի առանձնահատկություններ՝ կառավարության որոշումների ընդունման ընթացակարգի հետ կապված: Օրինակ՝ Չեխիայի կառավարությունը որոշումներ ընդունում է կառավարության անդամների ձայների բացարձակ մեծամասնությամբ<sup>28</sup>, Էստո-

նիայում<sup>29</sup> և Ալբանիայում<sup>30</sup> կառավարության նիստերը դռնփակ են անցկացվում:

Այսպիսով՝ կատարված վերլուծությամբ հանգում ենք հետևյալ հիմնական եզրահանգումներին. խորհրդարանական հանրապետություններում՝ ա) կառավարության կազմը, գործառույթների և լիազորությունների շրջանակները, ձևավորման և պատասխանատվության մեխանիզմները որոշակի առանձնահատկություններ ունեն տարբեր մոդելներով խորհրդարանական հանրապետություններում, բ) օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի փոխհարաբերություններում առանցքային դերակատարություն ունի վարչապետը, ով, մի կողմից, կառավարության ղեկավարն է, իսկ մյուս կողմից՝ պառլամենտում մեծամասնություն ձևավորած քաղաքական ուժի առաջնորդը, գ) խորհրդարանական հանրապետություններում առանձնացվում են կառավարություն-վարչապետ փոխհարաբերությունների երկու մոդել՝ վարչապետի պասիվ և ակտիվ դերակատարմամբ: Վարչապետի պասիվ դերակատարության դեպքում վարչապետ-կառավարություն փոխհարաբերություններում «ծանրության նժարը» թեքվում է կառավարության կողմը, իսկ վարչապետի ակտիվ դերակատարության դեպքում՝ վարչապետի կողմը:



<sup>23</sup> Իտալիայի Սահմանադրության 71-րդ հոդված, Մոլդովայի Սահմանադրության 106/2-րդ հոդված:

<sup>24</sup> Չեռնոգորիայի Սահմանադրության 101-րդ հոդվածի համաձայն՝ պատերազմի և արտակարգ դրության ժամանակ, եթե պառլամենտին չի հաջողվում նիստ գումարել, կառավարությունը կարող է ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ: Ընդ որում՝ կառավարության կողմից ընդունված օրենքի ուժ ունեցող որոշումներն առաջին իսկ հնարավորության դեպքում պետք է հաստատվեն պառլամենտի կողմից:

<sup>25</sup> Խորվաթիայի Սահմանադրության 88-րդ հոդվածի համաձայն՝ պառլամենտը կարող է լիազորել կառավարությանը՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով ընդունել պառլամենտի իրավասության մեջ ներառվող հարցերի վերաբերյալ որոշումներ՝ բացառությամբ այն հարցերի, որոնք վերաբերում են մարդու հիմնական իրավունքներին և ազատություններին, ընտրական համակարգին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը: Կառավարության օրենքի ուժ ունեցող որոշումները չեն կարող հետադարձ ուժ ունենալ:

<sup>26</sup> Չեխիայի Սահմանադրության 74-րդ հոդված:

<sup>27</sup> Էստոնիայի Սահմանադրության 97-րդ հոդված, Սլովենիայի Սահմանադրության 118-րդ հոդված, Լեհաստանի Սահմանադրության 159-րդ հոդված, Լատվիայի Սահմանադրության 59-րդ հոդված:

<sup>28</sup> Չեխիայի Սահմանադրության 76-րդ հոդված:

<sup>29</sup> Էստոնիայի Սահմանադրության 96-րդ հոդված:

<sup>30</sup> Ալբանիայի Սահմանադրության 82-րդ հոդված:

**ՆՈՒՆԵ ԶՈՄԱՐԴՅԱՆ**

Եվրասիա միջազգային համալսարանի միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի պատասխանատու, Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ, նույն ամբիոնի հայցորդ

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆ (ԲՆԱՇՐՁԱԿԱՆ) ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**

Սոցիալական պետությունը որպես պետության կարևոր սահմանադրաիրավական բնութագրիչ իր ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության 1-ին անփոփոխելի հոդվածում: Նրա կարգավորումները բավականին դինամիկ են ու առավել զգայուն են արձագանքում հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխություններին, ինչի հետևանքով սոցիալական պետությունները ժամանակի ընթացքում ունենում են փոփոխություններ՝ արձագանքելով հասարակությունում տեղի ունեցող հարաշարժումներին:

Սոցիալական պետության **նախապատմությունը (առաջին փուլ)** սկզբնական շրջանում բնութագրվում է սոցիալական գործունեության ոչ հաստատուն, մասնավոր, կամավոր և բարեգործական բնույթով<sup>1</sup>: Աղքատության սոցիալական կողմն սկսում է ընդգծվել XVI դարում, որը գիտական գրականության մեջ հաճախ անվանում են պայքար աղքատության դեմ<sup>2</sup>: **Պետությունն այլևս չի հետապնդում աղքատության համար, բայց նաև չի առաջադրում վերջինիս չեզոքացման նպատակ**<sup>3</sup>:

Սոցիալական պետության ձևավորումն սկսվում է XIX-րդ դարի երկրորդ կեսին (**երկրորդ փուլ**), որը Ռիմլինգերը բնութագրում է որպես «ազատականության ճեղքում»<sup>4</sup>: Դա պայ-

մանավորված էր պետության հասարակական դերակատարության փոփոխմամբ, վերջինիս կողմից տնտեսական հարցերի կարգավորման միջամտության և սոցիալական խնդիրների լուծման պարտականության ստանձնման ու իրագործման պահանջներով:

Գիտական գրականությունում սոցիալական պետության ծագման գաղափարը կապում են գերմանացի գիտնական Լորենց ֆոն Շտեյնի անվան հետ, ում սոցիալ-քաղաքական ուսմունքի հիմքում ընկած են անհատի, նրա իրավունքների ու սեփականության հարցերը<sup>5</sup>: Շտեյնի խոսքերով՝ սոցիալական պետությունը «պարտավոր է նպաստել իր բոլոր քաղաքացիների տնտեսական և հասարակական առաջընթացին, քանզի մեկի զարգացումը մյուսի զարգացման պայմանն է»<sup>6</sup>:

Միևնույն ժամանակ՝ սահմանվեցին պետության և մարդու միջև փոխհարաբերությունների նոր չափանիշներ՝ նպաստելով մարդու «երկրորդ սերնդի» իրավունքների ապահովմանը: Բիսմարկի բարեփոխումներից սկսած՝ բանվորները պարտադիր ապահովագրվում և սոցիալական նպաստի իրավունք ստացան ոչ թե որպես աղքատության արտոնություն, այլ՝ որպես սահմանված իրավունք: Նոր քաղաքականությունը դուրս եկավ նեղ խոցելի խմբերի շրջանակներից և դիտարկվեց որպես «ինստիտու-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 113 2019

<sup>1</sup> Տե՛ս Арбузов С.Ю. Конституционно-правовые основы формирования социального государства в Российской Федерации. Дисс...к.ю.н. Петрозаводск – 2014, էջ 14:  
<sup>2</sup> Stein Kuhnle and Anne Sander. The Emergence of the Western Welfare State. In The Oxford Handbook of the Welfare State. Edited by Francis G. Castles, Stephan Leibfried, Jane Lewis, Herbert Obinger, and Christopher Pierson Oxford: Oxford University Press, 2010, էջ 63:  
<sup>3</sup> Տե՛ս Ա.Ա.Մանուկյան Սոցիալական պետության էությունը և հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան արդի դարաշրջանում: Ատենախոսություն...իրավաբ. գիտ. թեկ. ... հայցման, Երևան, 2015, էջ 20:  
<sup>4</sup> Rimlinger Gaston V., Welfare Policy and Industrialization in Europe, America and Russia. New York:Wiley & Sons.1971.  
<sup>5</sup> Տե՛ս Нерсесянц В.С. Философия права. М., 2005, էջ 667:  
<sup>6</sup> Տե՛ս Штейн, Л. фон. История социального движения Франции с 1789 г. – СПб.: Тип. А. М. Котомина, 1872., էջ 19:



ցիոնալ կառուցվածքի բնական սկիզբ»<sup>7</sup>: Սոցիալական օրենսդրությունը, կազմելով իրավական դաշտի ինքնուրույն մաս, սկսեց հզոր ազդեցություն գործել պետության ողջ նորմատիվային բազայի բովանդակության վրա, դարձավ միջազգային երևույթ, իսկ ԱՄԿ-ն կարևոր դեր ձեռք բերեց ինչպես ապահովագրության, այնպես էլ՝ միջազգային առաջադեմ փորձի տարածման հարցում<sup>8</sup>: Հետագայում սոցիալական ապահովագրությունն ու պաշտպանությունն ընդարձակվեցին երեք միջոցով՝ ռիսկերի ընդլայնման, բնակչության ընդգրկման և պարտադիր ապահովման բարձրացման<sup>9</sup>:

Սոցիալական պետության զարգացման շնորհիվ բացահայտվեց նաև նրա իրավական բնույթը, որով սկիզբ դրվեց սոցիալական պետության զարգացման **երրորդ փուլին**: 1930-ականներին առաջ եկավ «սոցիալական իրավական պետություն» հասկացությունը, որն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ ներմուծեց Հերման Հելլերը<sup>10</sup>: Նա որպես սոցիալական պետության հիմք առանձնացրեց քաղաքացիների սոցիալական իրավունքների երաշխավորումը պետության կողմից: Ամրապնդվեցին պետության սոցիալական գործառույթները, որոնք ոչ միայն ձեռք բերեցին իրավական բնույթ, այլև դարձան առաջնային՝ փոխակերպվելով պետության իրավական բազայի մեջ:

Ջ.Մ. Քեյնսի կարծիքով՝ տնտեսական հասարակության ամենաէական թերություններից են լիարժեք զբաղվածություն ապահովելու անհնարինությունն ու հասարակության կողմից

հարստության և եկամուտների կամայական ու անարդարացի բաշխումը: Այդ պատճառով նա կարևորեց պետության կողմից շուկայի կարգավորման անհրաժեշտությունը<sup>11</sup>:

Սոցիալական պետության զարգացման գործընթացում շրջադարձային էր 1945-1970թթ. ժամանակահատվածը, որը հաճախակի բնութագրվում է որպես «ոսկե ժամանակաշրջան»: Մեր պարբերացման մեջ դա սոցիալական պետության զարգացման **չորրորդ փուլն է**:

Այս տեսանկյունից ցանկանում ենք ուշադրություն դարձնել իրավագիտության դոկտոր Ա.Հ. Մալիկովայի կողմից առաջադրված սոցիալական պետության պարբերացման երրորդ փուլին: Նա, դիտարկելով պետության բնաշրջական զարգացումը երեք տեսանկյունից՝ գիտական-տեսական, նորմատիվ և կազմակերպական (էմպիրիկ), որպես զարգացման երրորդ փուլ առանձնացնում է 1930-1980թթ. կեսերն ընկած ժամանակահատվածը<sup>12</sup>:

Ընդգծենք, որ տվյալ շրջանում սոցիալական քաղաքականության ու սոցիալական պետության հասկացություններն սկսում են հիմնը վել սոցիալական իրավունքների՝ որպես մարդու համընդհանուր իրավունքների հիմնական տարրի վրա՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքների հետ համատեղ: 1948թ. ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 22-րդ հոդվածը որոշակի պայմանական ձևով սահմանում էր մարդու՝ սոցիալական իրավունքներ ունենալու հիմնական իրավունքը<sup>13</sup>: Այս հայեցակարգն ակադեմիական գրականությունում իր արտահայտությունն է

<sup>7</sup> Steu Stein Kuhnle and Anne Sander The Emergence of the Western Welfare State. In The Oxford Handbook of the Welfare State. Edited by Francis G. Castles, Stephan Leibfried, Jane Lewis, Herbert Obinger, and Christopher Pierson Oxford: Oxford University Press, 2010, էջ 65:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 79:

<sup>9</sup> Steu Flora Peter, and Alber Jens, Modernization, democratization, and the development of welfare states in Western Europe, in The Development of Welfare States in Europe and America, ed. Peter Flora and Arnold J. Heidenheimer, New Brunswick, NJ: Transaction Books, 1981, էջ 37-80:

<sup>10</sup> Steu Калашников С.В. Очерки теории социального государства. М.: Экономика, 2006. էջ 67-68: Steu նաև Теория и практика социального государства / О.Е. Побережная // Науч. тр. / Акад. упр. при Президенте Респ. Беларусь.- Минск, 2004.- Вып. 4. , էջ 302-309:

<sup>11</sup> Steu Кейнс Дж.М. Общая теория занятости, процента и денег. М.: Издательство иностранной литературы, 1948.

<sup>12</sup> Steu Маликова А.Х. Проблемы формирования социального государства в Таджикистане Дисс...д.ю.н. Москва – 2012, էջ 45:

<sup>13</sup> «Յուրաքանչյուր ոք որպես հասարակության անդամ ունի սոցիալական ապահովության իրավունք և, ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով, ինչպես նաև՝ յուրաքանչյուր պետության կազմակերպմանն ու ռեսուրսներին համապատասխան, օգտվում է իր արժանապատվության և իր անձի ազատ զարգացման համար անհրաժեշտ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից»:

գտնում բրիտանացի սոցիոլոգ Թոմաս Համֆրի Մարշալի քաղաքացիական, քաղաքական և սոցիալական քաղաքացիության եռակողմ հայեցակարգում, որտեղ քաղաքացիությունը մեկնաբանվում է որպես լիարժեք անդամակցություն համայնքին<sup>14</sup>:

Սոցիալական պետության հայեցակարգային նոր մոտեցումը ցույց է տալիս, որ եթե մինչ պատերազմը սոցիալական քաղաքականության գաղափարախոսությունն ընտրովի էր ինչպես արդյունաբերական բանվորների և բնակչության աղքատ խավերի, այլնպես էլ ընդգրկվող ռիսկերի տեսանկյունից, ապա սոցիալական քաղաքականության նոր հայեցակարգը համընդհանուր էր և ընդգրկում էր ողջ բնակչությանը<sup>15</sup>: Դա նաև հռչակում էր բոլորի հավասարությունը՝ ռասայից, կրոնից և սեռից անկախ, ինչի շնորհիվ աշխատավորների պաշտպանությունն ապահովող քաղաքականությունն ընդլայնվում է մինչև անհատական բարեկեցության հայեցակարգը: Առաջադրված նոր հայեցակարգը փոփոխում է նաև կիրառվող հիմնական եզրույթները «սոցիալական ապահովագրությունից» դեպի «սոցիալական անվտանգությունը» և «սոցիալական քաղաքականությունից» դեպի «ընդհանուր բարեկեցության պետություն»:<sup>16</sup> Ընդգծվում է նաև ազգային և միջազգային մակարդակներում առկա սոցիալական կարգի փոխկապվածությունը, և առաջադրվում է ազգերի ու ժողովուրդների բարեկեցության համար միջազգային պատասխանատվության նոր տեսլական՝ միջազգային բարեկեցություն: ՄԱԿ-ը և ԱՄԿ-ն դառնում են սոցիալական քաղաքակա-

նության զարգացման ոչ միայն միջազգային կանոնների, այլ նաև գործնական նախաձեռնությունների և օգնությունների գործիք:

Սոցիալական քաղաքականության նորարարական տարրեր են ընդգծվում նաև ազգային մակարդակում: Անգլիայում առաջ է գալիս «համընդհանուր բարեկեցության պետություն»<sup>17</sup> հասկացությունը, որը հիմնավորվում է տնտեսագետ Վ. Բևերիջի «Լիակատար զբաղվածություն ազատ հասարակությունում» զեկույցում<sup>18</sup>: Սոցիալական պետությունը որպես սահմանադրաիրավական կարևոր սկզբունք իր ամրագրումն է ստանում մի շարք պետություններում (Գերմանիա, Ֆրանսիա և այլն): 1940-50-ականներին Արևմտյան Եվրոպայի բոլոր երկրներում փաստացի իրականացվում են լայնածավալ սոցիալական բարեփոխումներ, մշակվում են համընդհանուր սոցիալական ապահովության բազային համակարգեր:

Այնուամենայնիվ, լայնածավալ փոփոխությունները ժամանակի ընթացքում առաջացնում են որոշակի դժվարություններ, որոնց բացասական հետևանքներն ի հայտ են գալիս 70-ականների կեսերին: Սոցիալական պետության զարգացումը թևակոխում է **հինգերորդ՝ ճգնաժամային փուլ**: Կաուֆմանի կարծիքով՝ տվյալ ժամանակաշրջանի առավել դիտուկ բնութագրումն է «սոցիալական պետության կրճատում» ձևակերպումը<sup>19</sup>: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ սոցիալական պետության հակառակորդները, օգտվելով ճգնաժամի պատճառով առաջացած իրավիճակից, հանդես եկան ազատ շուկայի նոր արմատա-

<sup>14</sup> Տե՛ս Marshall, T.H. 'Citizenship and social class' in Marshall, T.H., *Sociology at the Crossroads and Other Essays*. London: Heinemann. (1963) [1950], էջ 72:

<sup>15</sup> Տե՛ս Frank Nullmeier and Franz Xaver Kaufmann *Post War Welfare State Development*. In *The Oxford Handbook of the Welfare State*. Edited by Francis G. Castles, Stephan Leibfried, Jane Lewis, Herbert Obinger, and Christopher Pierson Oxford: Oxford University Press, 2010, էջ 85-86:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 86:

<sup>17</sup> Համընդհանուր բարեկեցության պետության (welfare state) և սոցիալական պետության հարաբերակցության տեսանկյունից՝ մեր հետազոտությունում հիմնվում ենք այն գիտնականների տեսակետի վրա, ում կարծիքով տնտեսական և ժողովրդավարական զարգացումների, մարդու իրավունքների և ազատությունների ամրապնդման գործընթացները վկայում են, որ այս հասկացությունների միջև տարբերությունները պայմանական են: Տե՛ս Аристов Е.В. Социальность государства: зарубежный опыт конституционно-правового обеспечения. Дисс... д. ю. н. Пермь – 2017, էջ 49-50:

<sup>18</sup> Տե՛ս Г. М. Алпатова *У истоков социального государства: У. Бевериджи*. Вестник Пермского Университета, 2009, Выпуск 1 (8), էջ 95:

<sup>19</sup> Տե՛ս Frank Nullmeier and Franz Xaver Kaufmann *Post War Welfare State Development*. In *The Oxford Handbook of the Welfare State*. Edited by Francis G. Castles, Stephan Leibfried, Jane Lewis, Herbert Obinger, and Christopher Pierson Oxford: Oxford University Press, 2010, էջ 82:

կան օրակարգով՝ որպես ապացույց ներկայացնելով կառուցվածքային փոփոխությունների հետ կապված անցումային խնդիրներն առ այն, որ սոցիալական պետությունն այլևս կենսունակ չէ: Մեծ ազդեցություն ձեռք բերած նեոլիբերալները, չնայած իրականացրած որոշ բարեփոխումների (օրինակ՝ պետական մարմինների հաշվետվողականության բարելավում), ավելի շատ մտահոգված էին սոցիալական պետության կառավարման կրճատմամբ<sup>20</sup>: Որպես արդյունքում, անգլախոս երկրների ավանդույթների ազդեցության ներքո, կրճատվում են սոցիալական քաղաքականության շրջանակները, և գերակշռում են աղքատության դեմ պայքարի հայեցակարգերը, որոնք հղում էին անում հիմնականում եկամուտների բաշխմանը, ինչն ինքնին կապված էր տնտեսական գործընթացում մարդկանց մասնակցության հետ:

Սակայն XX-րդ դարի 70-ականներին արդեն իսկ առաջ եկան տնտեսական հարցերի հետ սերտորեն կապ չունեցող գործընթացներ, որոնց հետևանքով մարդկանց որոշակի խմբեր, այսպես կոչված՝ սոցիալական «թերությունների» զոհեր, մեկուսացվեցին, դուրս մնացին ընդհանուր զարգացումներից և բնութագրվեցին որպես ընդհանուր աճից բացառվածներ<sup>21</sup>: Այսնուամենայնիվ, պետությունների գերակշռող մասը հակված էր խնդիրը դիտարկելու տնտեսական աճի տեսանկյունից:

Չնայած տնտեսական աճի ապահովման ուղղությամբ գործադրված ջանքերի՝ 1980-1990-ականները համարվեցին առավել անհավասարության և ըստ եկամուտների աղքատության ժամանակաշրջան<sup>22</sup>: Սոցիալական պետության նախկին «հին» ռիսկերին ավելացան նոր, ժամանակակից պետություններին բնորոշ ռիսկեր: Ակնհայտ դարձավ, որ այդ խնդիրները կարող է լուծել միայն սոցիալական պետությունը, որը, պահպանելով խնդիրների նախկին լուծման

գործառույթը, պետք է կանոնակարգեր նաև նոր մարտահրավերները:

1990-ականների վերջին շրջանում սոցիալական պետությունն ունեցավ հայեցակարգային փոփոխություն՝ նպաստների պասիվ համակարգից վերափոխվելով ակտիվ, պետության հնարավորություններն ընդլայնող սոցիալական ներդրումների պետության<sup>23</sup>: Դրանով իսկ սկիզբ դրվեց սոցիալական պետության զարգացման **վեցերորդ փուլին**: Առաջ քաշվեց սոցիալական ներդրումների հայեցակարգը, որը, ի տարբերություն նեոլիբերալների՝ ընդգծում էր, որ սոցիալական արդարության բարելավումը կապված է տնտեսական արդյունավետության բարձրացման հետ: Այս փուլում կարևոր ազդեցություն ունեցավ Էսթոնի Գիդենսի «Երրորդ ճանապարհ. սոցիալ-դեմոկրատիայի վերանայումը» աշխատությունը (1998թ.), իսկ 2000թ. Լիսաբոնյան ռազմավարությունն առաջարկեց ԵՄ սոցիալական մոդելի արդիականացում մարդկային ռեսուրսների մեջ ներդրումների և ակտիվ ու դինամիկ սոցիալական պետության զարգացման միջոցով<sup>24</sup>:

Սակայն այս փոփոխությունները դեռևս բավական չէին 21-րդ դարի պետությունների համար: Էսպինգ-Անդերսենն իր «Ինչու է մեզ անհրաժեշտ ընդհանուր բարեկեցության նոր պետություն» հոդվածում նշում էր, որ ժամանակն է վնասի ուղղակի «վերականգնման» հետ կապված եկամուտների պասիվ սոցիալական պաշտպանության փոխարեն մարդկանց, ընտանիքներին և հասարակությանը «նախապատրաստել» այնպիսի փոփոխությունների, ինչպիսիք են կարիերայի տարբեր մոդելները, աշխատանքային պայմանները և ընտանեկան ժողովրդագրությունը: Սոցիալական ապահովության դրույթները վերաիմաստավորվեցին «կյանքի ուղու հեռանկարի» տեսանկյունից<sup>25</sup>: Ի տարբերություն «Երրորդ ուղու»՝ այս մոտեցման մեջ

<sup>20</sup> Տե՛ս David Garland, *The Welfare State: A Very Short Introduction*, Oxford University Press: Oxford, 2016, էջ 115: Տե՛ս նաև Anton Hemerijck *Changing Welfare States*. Oxford University Press: Oxford, 2013, էջ 126-129:  
<sup>21</sup> Տե՛ս Pierre Strobel *From poverty to exclusion: a wage-earning society or a society of human rights?* UNESCO 1996, Published by Blackwell Publishers, էջ 174:  
<sup>22</sup> Տե՛ս Kenworthy, L. *Jobs with Equality*. Oxford: Oxford University Press. Տե՛ս նաև OECD. *Growing Unequal*. Paris: OECD. 2008.  
<sup>23</sup> Տե՛ս Anton Hemerijck *Changing Welfare States*. Oxford University Press: Oxford, 2013, էջ 133:  
<sup>24</sup> Տե՛ս European Council Presidency *Conclusions Lisbon European Council, 2000, 23-4 March*. SN 100/00.  
<sup>25</sup> Տե՛ս Esping-Andersen G. *Towards the Good Society: Once Again?* In G. Esping-Andersen et al. (ed.). *In Why We Need a New Welfare State*. Oxford: Oxford University Press, 2002, էջ 1-25: Տե՛ս նաև Mayer K. U. *Notes on a Comparative Political Economy of Life Courses, Comparative Social Research*, 16, էջ 1997, 203-26:

սոցիալական ներդրումները չեն փոխարինում սոցիալական պաշտպանությունը: Սոցիալական ներդրումների արդյունավետ ռազմավարության պայման է դիտարկվում նվազագույն եկամտի անհրաժեշտ պաշտպանությունը<sup>26</sup>:

Նորմատիվային առումով անհրաժեշտ դարձավ որպես սոցիալական արդարության հիմք դիտարկել ոչ թե եկամուտների հավասարությունը, այլ՝ հիմնական կարիքներն ու հնարավորությունները, որոնք անհրաժեշտ էին ինքնազարգացման և սոցիալական մասնակցության համար: Սոցիալական ներդրումներն այստեղ նախկինի պես հիմնվում էին քաղաքացիության սոցիալական իրավունքների վրա, ինչը համահունչ էր Վ.Բևերիջի և Թ.Մարշալի ժամանակակից սոցիալական քաղաքականության սկզբնական պաշտպանությանը<sup>27</sup>: Առկա դարձավ շեշտադրումների փոփոխությունը՝ սոցիալական պասիվ ապահովագրությունից անցում դեպի առավել ակտիվ սոցիալական ծառայություններ և ներդրումներ:

Միևնույն ժամանակ՝ առաջ եկան նեոլիբերալիստական քաղաքականության այլ քննադատություններ առ այն, որ միայն տնտեսական աճի տեմպերի զարգացման միջոցով հնարավոր չէ լուծել սոցիալական պետության առջև ծառայած նոր խնդիրները: Սոցիալական պետության մեկնաբանություններում սկսեցին հատուկ ուշադրություն դարձնել երջանկության, բարեբախտության (well-being) հարցերին<sup>28</sup>: Էլկե Հենսինի դիտարկմամբ՝ վերջին շրջանում կասկածի տակ դրվեց սոցիալական պետության

նման բարդ հասկացությունը միայն «տնտեսական» չափանիշներով չափելու պիտանելիությունը և «սոցիալականը» «տնտեսականին» ստորակարգելը<sup>29</sup>:

Քննարկվող խնդրի կարևորությունն այն է, որ նյութական ռեսուրսների անհավասար բաշխվածությունը կապված էր այնպիսի սոցիալական լուրջ հետևանքների հետ, ինչպիսիք են, օրինակ՝ վատ առողջությունը կամ հանցագործության բարձր մակարդակը, ինչը միևնույն ժամանակ վնաս էր հասցնում տնտեսության աճի տեմպերին: Սակայն, ինչպես հայտնի է՝ անձի սոցիալական խոցելիությունը կապված է ոչ միայն եկամուտների և կյանքի ցածր նյութական մակարդակի (աղքատության տնտեսական հայեցակարգ), այլ նաև իրավունքների բացակայության հետ, ինչպիսիք են աշխատանքը, բնակարանը, բժշկական ծառայությունները, կրթությունը և այլն (սոցիալական բացառվածության տեսություն)<sup>30</sup>: Եթե մարդիկ չունեն նյութական ռեսուրսներ, օրինակ՝ եկամուտ, զբաղվածություն, հող, բնակարան, կամ չեն կարողանում օգտվել այնպիսի ծառայություններից, ինչպիսիք են առողջապահությունը և կրթությունը, ապա նրանց մասնակցությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքին դժվարանում է: Այսինքն՝ մարդիկ բացառվում, դուրս են մնում տնտեսական, քաղաքական, մշակութային, քաղաքացիական կամ սոցիալական կյանքից:

Նշված խնդիրը տարբեր կերպ բնութագրվեց գիտական գրականության մեջ<sup>31</sup>: Բայց

<sup>26</sup> Տե՛ս Anton Hemerijck Changing Welfare States. Oxford University Press: Oxford, 2013, էջ 137:

<sup>27</sup> Տե՛ս Pierson C. and M. Leimgruber 'Intellectual Roots'. In The Oxford Handbook of the Welfare State. Edited by Francis G. Castles, Stephan Leibfried, Jane Lewis, Herbert Obinger, and Christopher Pierson Oxford: Oxford University Press, 2010, էջ 32–44. Տե՛ս նաև 'The Social Rights of Citizenship' In The Oxford Handbook of the Welfare State. Edited by Francis G. Castles, Stephan Leibfried, Jane Lewis, Herbert Obinger, and Christopher Pierson Oxford: Oxford University Press, 2010, էջ 511–525:

<sup>28</sup> Տե՛ս Well-Being: Foundations of Hedonic Psychology. Editors: D Kahneman, E Diener, N Schwarz – 1999. Russell Sage Foundation. Տե՛ս նաև Well-Being: Its Meaning, Measurement and Moral Importance. James Griffin Print publication date: 1988. Published to Oxford Scholarship Online: November 2003:

<sup>29</sup> Տե՛ս Elke Heins, Welfare and well-being – inextricably linked. //In defence of welfare 2. Foster, Liam, Brunton, Anne. Policy Press, 17 abr. 2015, էջ 13:

<sup>30</sup> Տե՛ս Lister R. Poverty, Key Concepts. – Cambridge: Polity Press, 2004. Տե՛ս նաև Jane Mathieson, Jennie Popay, Etheline Enoch, Sarah Escorel, Mario Hernandez, Heidi Johnston and Laetitia Rispel, Social Exclusion Meaning, measurement, experience, and links to health inequalities. A review of literature. WHO Social Exclusion Knowledge Network Background Paper 1. Social exclusion literature review September 2008.

<sup>31</sup> «Բացառվածությունը բաղկացած է դիմամիկ և բազմաբնույթ գործընթացներից, որոնք, պայմանավորված լինելով անհավասար իշխանական հարաբերություններով, փոխներգործում են չորս հիմնական ուղղություններում՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային, և տարբեր մակարդակներում՝ ներառյալ անհատական,

և այնպես՝ գիտնականների առաջ քաշած բուլոր սահմանումների հիմքում ընկած էր հասարակության կյանքին մասնակցելու բացակայությունը: Ա. Սենի կարծիքով՝ սոցիալական բացառվածությունն առաջանում է, երբ անձը զրկվում է հնարավորությունից՝ ազատորեն կատարելու այնպիսի գործողություններ, որոնք նա համարում է անհրաժեշտ<sup>32</sup>: Այսինքն՝ տեղի է ունենում հնարավորությունների օբյեկտիվ կրճատում:

Սոցիալական բացառվածության տեսության իրավական կողմն առնչվում է սոցիալական իրավունքների ու սոցիալական արդարության հետ: Սոցիալական բացառվածության հետ են կապվում մարդու (մարդկանց խմբերի) շրջանում իրավունքներ ունենալու բացակայությունը<sup>33</sup>: Թոդ Լեդմանը (2006 թ.) պնդում է, որ սոցիալական բացառվածությունը մարդու իրավունքների խախտման ձև է, եթե դրսևորվում է մարդկանց հանդեպ սոցիալական, տնտեսական և քաղաքական ոլորտներում պարբերական համակարգային անհա-

մաչափ վերաբերմունքով<sup>34</sup>: Եվրոպական համայնքների կողմից ստեղծված Սոցիալական բացառվածության դեմ պայքարի ազգային քաղաքականության դիտարկման հանձնաժողովն էլ իր հաշվետվությունում նշեց, որ «սոցիալական բացառվածությունը կարող է վերլուծվել յուրաքանչյուր քաղաքացուն պատկանող սոցիալական իրավունքների (այսինքն՝ իրավունքների) ժխտման կամ չկիրառման տեսանկյունից, ... որոնց թվում են որոշակի նվազագույն կենսամակարդակը և մասնակցությունը հասարակության հիմնական սոցիալական ու մասնագիտական ինստիտուտներին»<sup>35</sup>: Պիեր Ստրոբելի դիտարկմամբ՝ հանձնաժողովը հիմնվեց Մարշալի այն տեսակետի վրա, ըստ որի՝ քաղաքացիությունը հիմնված է քաղաքացիական, քաղաքական և սոցիալական իրավունքների միասնության և փոխհարաբերությունների վրա: Նման մոտեցման պարագայում բացառվածությունը քաղաքացիության հակադրությունն է հանդես է դալիս որպես հիմնական իրավունքների ժխտման արդյունք<sup>36</sup>: Դա

տնային, խմբային, համայնքային, պետական և գլոբալ մակարդակները: Դա հանգեցնում է շարունակական ներառվածության/բացառվածության, որը բնութագրվում է ռեսուրսների, հնարավորությունների և իրավունքների անհավասար մատչելիությամբ, ինչը հանգեցնում է առողջության անհավասարության»: (Տե՛ս Jennie Popay, Sarah Escorel, Mario Hernández, Heidi Johnston, Jane Mathieson, Laetitia Rispel. Understanding and Tackling Social Exclusion: Final Report to the WHO Commission on Social Determinants of Health from the Social Exclusion Knowledge Network. Geneva: World Health Organization. 2008, էջ 2): «Սոցիալական բացառվածությունը բարդ և բազմաբնույթ գործընթաց է և պայմանավորված է ռեսուրսների, իրավունքների, ապրանքների ծառայությունների բացակայությամբ կամ մերժմամբ, ինչպես նաև հասարակության մեծամասնության համար մատչելի նորմալ հարաբերություններին և գործողություններին մասնակցելու անկարողությամբ, լինեն դրանք տնտեսական, սոցիալական, մշակութային թե քաղաքական ասպարեզներում: Դա ազդում է ինչպես մարդկանց կյանքի որակի, այնպես էլ հասարակության արդարացիության և համախմբվածության վրա» (Տե՛ս Levitas, R., Pantazis, C., Fahmy, E., Gordon, D., Lloyd, E. & Patsios, D. The multi-dimensional analysis of social exclusion. Bristol Institute for Public Affairs, University of Bristol, 2007, էջ 9): «Սոցիալական բացառվածությունն այն է, ինչ կարող է տեղի ունենալ, երբ մարդիկ կամ տարածքները տառապում են այնպիսի համակցված խնդիրներից, ինչպիսիք են գործազրկությունը, թույլ հմտությունները, ցածր եկամուտները, վատ բնակարանները, հանցագործությունների բարձր մակարդակը, վատ առողջությունը և ընտանիքի քայքայումը» (Տե՛ս United Kingdom Office of the Deputy Prime Minister, The Social Exclusion Unit, 2004, էջ 2):

<sup>32</sup> Տե՛ս Sen A. Social Exclusion: Concept, Application and Scrutiny // Social Development Papers. – No.1. Office of Environment and Social Development, Asian Development Bank. 2000.  
<sup>33</sup> Տե՛ս Gore Ch. Introduction: Markets, citizenship and social exclusion // Social Exclusion: Rhetoric Reality Responses / International Institute for labour studies. United Nations development program; Ed. by G. Rodgers, Ch. Gore, J. Figueiredo. Geneva, 1994, էջ 8-9: Տե՛ս նաև Бородин Ф.М. Социальные эксклюзии // Социологический журнал. – 2000.– № 3/4.– С. 6. Տե՛ս նաև Шабунова А.А., Калачикова О.Н., Леонидова Г.В., Смолева Е.О. Эксклюзия как критерий выделения социально уязвимых групп населения. Экономические и социальные перемены: факты, тенденции, прогноз 2 (44) 2016, էջ 37:  
<sup>34</sup> Տե՛ս Landman, T. Human rights and social exclusion indicators: concepts, best practices, and methods for implementation. University of Essex: Department of Government Human Rights Centre. 2006.  
<sup>35</sup> Տե՛ս Room, G. in collaboration with: J. Berghman; D. Bouget; G. R. Cabrero; F. Hansen; C. Hartmann-Hirsch; D. Karantinos; K. Kortmann; S. O Cinneide; J. Pereirinha; D. Robbins; C. Saraceno; J. Vranken. Observatory on national policies to combat social exclusion. Second annual report. Commission of the European Communities, DGV. 1992, էջ 14-15:  
<sup>36</sup> Տե՛ս Pierre Strobel From poverty to exclusion: a wage-earning society or a society of human rights? UNESCO 1996, Published by Blackwell Publishers, էջ 175:



նաև ժողովրդավարական հասարակությունների լուրջ քայքայում է, քանի որ ցույց է տալիս, որ սկզբունքները, որոնց վրա հիմնված են այս հասարակությունները, դարձել են անիրական: Ակնհայտ է, որ աղքատության տնտեսական բաղադրիչներն այստեղ չեն բացառվում, սակայն սկզբնապատճառն իրավունքներն իրականություն դարձնելու անկարողությունն է: «Եթե քաղաքացիներն ի վիճակի չեն լինում ապահովելու իրենց սոցիալական իրավունքները, նրանք ստիպված են տառապել ընդհանրացված և պահպանվող անբարենպաստ գործընթացներից, իսկ նրանց սոցիալական ու մասնագիտական մասնակցությունը խաթարվում է»<sup>37</sup>: Այս տեսանկյունից՝ սոցիալական բացառվածությունը տարբերվում է աղքատությունից այնքանով, որ եկամուտների անհավասարությունից շեշտադրումը տեղափոխվում է դեպի իրավունքների հասանելիության սահմանափակումը: Գրեթե բոլոր երկրներում ժամանակի ընթացքում տարիքը, սեռը, հաշմանդամությունը, ռասան, էթնիկական պատկանելությունը, կրոնը, միգրացիոն կարգավիճակը, սոցիալ-տնտեսական վիճակը, բնակության վայրը հանդիսացել են սոցիալական բացառվածության հիմք և առաջացրել, այսպես կոչված՝ չհիմնավորված խտրականություն:

Այսպիսով՝ շուկայական մեխանիզմներից չափից ավելի կախվածությունը, պետության վերաբաշխողական դերի կրճատումը և աճող տնտեսական անհավասարությունը նպաստում են սոցիալական բացառվածությանն ու վտանգում սոցիալական պետությունը<sup>38</sup>:

2008թ. համաշխարհային ճգնաժամի հետևանքով սոցիալական բացառվածության խնդրի կարևորությունը գիտակցվում և նոր բովանդակություն է ստանում նաև միջազգային հանրության կողմից՝ կայուն զարգացման տեսանկյունից: «Փոխակերպելով մեր աշխարհը. կայուն զարգացման 2030 օրակարգ» հանձնարարականը սահմանում է, որ ՄԱԿ-ի ան-

դամ պետությունները ձգտում են հավասարակշռված և ինտեգրված ձևով հասնել կայուն զարգացման երեք հիմնական բաղադրիչներում՝ տնտեսական, սոցիալական և բնապահպանական՝ այդ գործընթացի հիմքում դնելով մարդուն: Այս հայեցակարգային մոտեցմամբ մեկնարկվում է սոցիալական պետության նոր՝ արդի ժամանակաշրջանի մարտահրավերներին համապատասխան **յոթերորդ փուլը**, որը կարելի է անվանել **սոցիալական պետության մարդակենտրոն զարգացման կամ սոցիալական ներառվածության (ինկլուզիվ) շրջան**:

Հասարակության և, առաջին հերթին՝ տնտեսության զարգացման նոր շրջանակը պահանջում է ստեղծել այնպիսի պայմաններ, որտեղ յուրաքանչյուր մարդ կարողանա օգուտ քաղել բարգավաճման պտուղներից և պահպանել բարեկեցության նվազագույն պայմանները: Այդ առումով խիստ կարևոր է, որ բոլոր կառույցները լավագույնս աշխատեն նրանց համար, ովքեր գտնվում են ծայրահեղ աղքատության մեջ և առավել խոցելի են: Հիմնական պարտականությունն այն է, որ ոչ ոք չանտեսվի ու չմնա հետևում<sup>39</sup>: Տվյալ տեսանկյունից՝ սոցիալական պետությունը վերածվում է իրավունքների ու հնարավորությունների սահմանման և իրագործման երաշխավորի՝ հասարակության կյանքին մասնակցելու բարենպաստ և հավասար պայմաններ ու հնարավորություններ ապահովելով յուրաքանչյուրի համար:

Սոցիալական նման ներգրավվածությունը հատկապես անբարենպաստ պայմաններում գտնվող անձանց համար նշանակում է, որ պետությունը պետք է ապահովի պայմաններ, որպեսզի աղքատության և սոցիալական բացառվածության վտանգի տակ գտնվող անձինք ձեռք բերեն հասարակության տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային կյանքին մասնակցելու անհրաժեշտ հնարավորություններ և ռեսուրսներ, ինչպես նաև օգտ-

<sup>37</sup> Sñu Room, G. in collaboration with: J. Berghman; D. Bouget; G. R. Cabrero; F. Hansen; C. Hartmann-Hirsch; D. Karantinos; K. Kortmann; S. O. Cinneide; J. Pereirinha; D. Robbins; C. Saraceno; J. Vranken. Observatory on national policies to combat social exclusion. Second annual report. Commission of the European Communities, DGV. 1992, էջ 16:

<sup>38</sup> Sñu Leaving no one behind: the imperative of inclusive development. Report on the World Social Situation 2016. United Nations. New York, 2016, էջ 8:

<sup>39</sup> Sñu General Assembly resolution 70/1 of 25 september 2015, պարբերություն 4:



վեն այնպիսի կենսամակարդակից, որը բավարար է համարվում այն հասարակությունում, որտեղ նրանք ապրում են<sup>40</sup>:

Վերը նշված խնդիրների լուծումը, իհարկե, երկարատև գործընթաց է և հիմնվում է կայունության, արդարության ու մարդկանց ներառվածության վրա, որին հասնելու հիմնական գրավականը սոցիալական արդարությունն է: Այս գիտակցման հիմքում ընկած է այն մոտեցումը, որ մինչ այժմ սոցիալական և տնտեսական առաջընթացի օգուտները հավասարապես բաշխված չեն եղել: Իհարկե, պետությունների հասցեական միջամտություններն օգնել են լուծել կոնկրետ խմբերի սոցիալական բացառվածության առանձին խնդիրներ, բայց առանց սոցիալական արդարության վրա հիմնված համընդհանուր մոտեցման անհնար է հասնել հաջողության:

Յուրաքանչյուրի հավասար մասնակցությունը քաղաքական որոշումների կայացմանը, ռեսուրսների բաշխմանը, ինչպես նաև իրավունքների պաշտպանության, եկամուտների և սոցիալական ծառայությունների հավասար երաշխավորումն ապահովում են նաև երկրի քա-

ղաքական կայունությունը, կանխարգելում արմատական և հակաժողովրդավարական շարժումները:

Հայեցակարգային այս մոտեցումը ցույց է տալիս, որ, եթե Երկրորդ աշխարհամարտից հետո, երբ Մարշալն առաջ քաշեց մարդու իրավունքների եռակողմ հայեցակարգը և քաղաքացիությունը դիտարկեց որպես քաղաքացիական, քաղաքական և սոցիալական իրավունքների համախումբ, տեղի են ունեցել արմատական փոփոխություններ, և սոցիալական անհավասարության խնդիրների ուշադրության կենտրոնում է հայտնվել ներառվածության և բացառվածության երկկողմ մոտեցումը<sup>41</sup>:

Հետևաբար՝ **սոցիալական պետության զարգացման արդի ուղղությունը ըստ մեզ, դառնում է անցումը տնտեսական աճից դեպի մարդակենտրոն զարգացումը, որն ուղղված է սոցիալական ներառվածության և սոցիալական արդարության միջոցով ապահովելուն ազատ և ակտիվ անհատի զարգացումը, հասարակության տնտեսական բարգավաճումը<sup>42</sup>, համախմբվածությունն ու համերաշխությունը:**



<sup>40</sup> SՖս Commission of the European Communities (2003). Joint report on social inclusion summarising the results of the examination of the National Action Plans for Social Inclusion (2003-2005). <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:52003DC0773>., էջ 9, (մուտք՝ 19.06.2019):

<sup>41</sup> SՖս Stichweh, R. and P. Windolf (eds). Inklusion und Exklusion: Analysen zur Sozialstruktur und sozialen Ungleichheit. Wiesbaden. 2009: SՖս նաև Gestrich, A., L. Raphael and H. Uerlings (eds). Strangers and Poor People. Frankfurt a. M., 2009:

<sup>42</sup> Գերմանացի պրոֆեսոր Շթիգլիցը նշում է, որ եթե նախկինում համարվում էր, թե ՀՆԱ-ի ցուցանիշների բարձրացումն օգնեց բոլորին, ապա այժմ գիտենք, որ բոլորին տրամադրվող օգնության բարձրացումն է իրականում լավ ՀՄԱ-ի բարձրացման համար: SՖս վերջինիս տրված հարցազրույցը Inclusive Growth and the Social Market Economy – Do We Need a New Promise of Prosperity? Wednesday, September 16, 2015, 2 p.m. to 4 p.m. Berlin.

[https://ged-project.de/videos/competitiveness/rise\\_of\\_incwome\\_inequality/inclusive-growth-and-the-social-market-economy-do-we-need-a-new-promise-of-prosperity/](https://ged-project.de/videos/competitiveness/rise_of_incwome_inequality/inclusive-growth-and-the-social-market-economy-do-we-need-a-new-promise-of-prosperity/) (մուտք՝ 19.06.2019):

**ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ**

ՀՀ փոխվարչապետի խորհրդական,  
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՇՈՒՇԱՆԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ**

ՀՀ Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և  
քրեակատարողական քաղաքականության մշակման  
վարչության պետի տեղակալ,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻՐԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ**

Հոդվածում վերլուծվել են տեղեկատվական անվտանգության ռազմավարություններին ներկայացվող հիմնական պահանջները, ներկայացվել են «կիրեռանվտանգություն» և «տեղեկատվական անվտանգություն» եզրույթների բնորոշումները, քննարկվել է «կիրեռանվտանգություն» և «տեղեկատվական անվտանգություն» եզրույթների հարաբերակցության հարցը:

**Բանալի բառեր.** տեղեկատվական անվտանգություն, կիրեռանվտանգություն, կիրեռտարածք, ռազմավարություն.

**СУРЕН КРМОЯН**

Советник заместителя премьер-министра РА,  
кандидат юридических наук

**ШУШАНИК ГУКАСЯН**

Заместитель начальника отдела развития  
антикоррупционной и пенитенциарной политики  
аппарата Министерства юстиции РА,  
преподаватель кафедры гражданского права ЕГУ

**НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ, КАСАЮЩИЕСЯ ИНФОРМАЦИОННОЙ БЕЗОПАСНОСТИ И КИБЕРБЕЗОПАСНОСТИ**

В статье анализируются ключевые требования к стратегиям информационной безопасности, вводятся определения терминов «кибербезопасность» и «информационная безопасность», а также обсуждается вопрос о соотношении терминов «кибербезопасность» и «информационная безопасность».

**Ключевые слова:** информационная безопасность, кибербезопасность, киберпространство, стратегия.

**SUREN KRMOYAN**

Adviser to Deputy Prime Minister,  
PhD in law

**SHUSHANIK GHUKASYAN**

Deputy Head of of Anti-Corruption and  
Penitentiary Policy Development Department,  
RA Ministry of Justice,  
Lecturer of YSU Chair of Civil Law

**CERTAIN ISSUES REGARDING INFORMATION SECURITY AND CYBER-SECURITY**

The article analyzed the key requirements for information security strategies, the definitions of the terms «cybersecurity» and «information security» were introduced, and the question of correlation between the terms «cyber security» and «information security» was discussed.

**Keywords:** information security, cyber security, cyberspace, strategy.

**ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ**

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության քրեագիտական հետազոտությունների բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, իրավագիտության թեկնածու

**ՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՏՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հեղինակի կողմից քննարկման առարկա են դարձել յուրացնելու կամ վատնելու եղանակով կատարվող հափշտակությունների քրեաիրավական որակմանն առնչվող, էական նշանակության ունեցող մի շարք հիմնահարցեր: Հոդվածում որոշակի քննարկման են արժանացել ինչպես իրավաբանական գրականության մեջ նշված հանցակազմի որակման խնդիրներին վերաբերող տեսակետները, այնպես էլ՝ նշված հարցի վերաբերյալ տարբեր հեղինակների կողմից արտահայտած կարծիքներն ու վերլուծությունները:

Հեղինակի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքով՝ ներկայացվել են առաջարկություններ, որոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ ՀՀ քրեական օրենսգրքի բարեփոխումների համար՝ յուրացնելու կամ վատնելու վերաբերյալ գործերով:

**Բանալի բառեր.** յուրացնել, վատնել, հափշտակություն, խարդախություն, վստահված գույք, պաշտոնեական դիրքն օգտագործելով:

**АРАИК АСЛАНЯН**

